

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՎ
Ժողովրդավարության զարգացման պառլամենտարիզմի և քաղաքացիների
ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի
միջազգային ինստիտուտի Երևանյան մասնաճյուղ

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ
ԸՆՏՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ 2024

ԱՂԶ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ՎԵՀԱԺՈՂՈՎ Ժողովրդավարության զարգացման,
պաշտամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների
պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
Երևանյան մասնաճյուղ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2024

ՀՏԴ 342.8(07)

ԳՄԴ 67.400.8ց7

Հ 177

Աշխատանքը երաշխավորվել է տպագրության ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի Ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի կողմից

Հակոբյան Լ., Հովհաննիսյան Ն.

Հ 177 Երիտասարդների մասնակցությունն ընտրություններին. երիտասարդ ընտրողների ընտրական ակտիվության բարձրացումը Հայաստանի Հանրապետությունում / Լ. Հակոբյան, Ն. Հովհաննիսյան.– Եր.: Հայրապետ հրատ., 2024.– 200 էջ:

Ուսումնական ձեռնարկում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և գործող օրենսդրության այլ ակտերի ու իրավաբանական գրականության վերլուծության հիման վրա բացահայտված են ընտրությունների հասկացությունն ու տեսակները, ընտրողի իրավական կարգավիճակը, առանձնահատուկ ուշադրություն է դարձված ընտրական գործընթացներում երիտասարդների մասնակցության խնդրին, ինչպես նաև ներկայացված է ընտրական տեխնոլոգիաների դերն ընտրական գործընթացներում, դրանց կիրառությունը Հայաստանի Հանրապետությունում և զարգացման հեռանկարները:

Սույն ձեռնարկում ներկայացված ընտրություններին, ընտրողների իրավունքներին և պարտականություններին, ընտրական իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև պատասխանատվությանը առնչվող հարցերը, ըստ էության, վերաբերում են յուրաքանչյուր քաղաքացու և Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունք ունեցող ցանկացած անձի:

Սույն աշխատությունում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել ԱՊՀ ՄԽՎ քարտուղարության պաշտոնական դիրքորոշումներին:

ՀՏԴ 342.8(07)

ԳՄԴ 67.400.8ց7

ISBN 978-9939-887-42-5

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2024

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղի տնօրեն՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյան

Հեղինակներ՝

Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դոցենտ, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական վարչության պետ
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Լիլիա Արեգի Հակոբյան
Գլուխ 1, գլուխ 3

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ
Նունե Սուրիկի Հովհաննիսյան
Գլուխ 2, գլուխ 4

Թարգմանիչ՝

ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի Լեզուների ամբիոնի ավագ դասախոս
Վլադա Լևոնի Ավետյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
ԳԼՈՒԽ 1. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	13
1.1. Ինչ են ընտրությունը և ինչու է պետք մասնակցել ընտրություններին.....	13
1.2. Ընտրությունների տեսակները Հայաստանի Հանրապետությունում և ընտրական համակարգերը.....	20
1.3. Ինչ ընտրական համակարգեր են կիրառվում Հայաստանի Հանրապետությունում.....	43
ԳԼՈՒԽ 2. ԸՆՏՐՈՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՃԱԿԸ.....	56
2.1. Ինչպես դառնալ ընտրող.....	56
2.2. Ինչ իրավունքներ ունի ընտրողը.....	79
2.3. Ինչ պարտականություններ ունի ընտրողը.....	90
ԳԼՈՒԽ 3. ԵՐԻՏԱԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ.....	99
3.1. Ընտրական գործընթացն ու ընտրական ժամանակացույցը..	99
3.2. Ինչպե՞ս կարող է երիտասարդությունն ընդգրկվել ընտրական գործընթացում.....	106
3.3. Ինչպես պաշտպանել ընտրական իրավունքները.....	118
3.4. Պատասխանատվությունն ընտրական իրավունքում.....	139
ԳԼՈՒԽ 4. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ.....	151
4.1. Ինչպիսիսն է ընտրական տեխնոլոգիաների դերն ընտրական գործընթացներում.....	151
4.2. Հայաստանի Հանրապետության ընտրական գործընթացներում կիրառվող տեխնոլոգիաները.....	155
4.3. Ընտրական գործընթացներում տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները.....	178
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	191

Մարդու կյանքն անվերջանալի ընտրությունների շարք է: Ամեն քայլափոխի ինչ-որ ընտրություն ենք կատարում, և յուրաքանչյուրիս առաջնահերթ մոտիվացիան ինքնիրացումն է, անձնական և ընդհանուր ապագայի վերաբերյալ ունեցած պատկերացումն ու ակնկալիքը: Ընտրական տեղամաս այցելելով և քվեարկությամբ իր կամքն արտահայտելով՝ ընտրողն այդպիսով իր անուղղակի կարծիքն է արտահայտում ինչպես իր, այնպես էլ իրեն շրջապատող հանրության ճակատագրի վերաբերյալ և քվեարկելով իր ընտրությամբ՝ ազդարարում է, թե օրինակ՝ առաջիկա հինգ տարիներին ինքն ինչպիսի երկրում կամ համայնքում կցանկանար ապրել և կերտել իր ապագան: Այս գործընթացում իր ուրույն դերն ունի երիտասարդությունը, առանց որի ապագա լինել չի կարող: Հետևաբար, Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացներում երիտասարդության ներգրավումն առանցքային նշանակություն ունի, քանի որ երիտասարդությունն է հանրության զարգացման և առաջընթացի հիմնական շարժիչ ուժը, որը գեներացնում և առաջ է մղում նոր գաղափարները: Ուստի, ընտրական համակարգի զարգացման տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունի երիտասարդության ներգրավվածության շարունակական աճը:

Ես՝ որպես Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ, իմ պաշտոնավարման ընթացքում ջանք չեմ խնայի, որ երիտասարդության ներգրավվածությունն ընտրական գործընթացներում ավելանա:

ՎԱՀԱԳՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ**



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունները, որոնց միջոցով իրացվում է ժողովրդաիշխանությունը, ժողովրդավարական պետության կայացման և զարգացման գործում ունեն առանցքային նշանակություն: Հայաստանի Հանրապետությունում առկա ընտրական բարդ համակարգն օրվա հրամայական է դարձնում երիտասարդության շրջանում լուսաբանել ներկայացուցչական ժողովրդավարության և ընտական իրավունքի հետ կապված հարցերը, նրանց փոխանցել ոչ միայն տեսական, այլև գործնական գիտելիքներ: Նշված նպատակն իրագործելու համար կազմվել է սույն ուսումնամեթոդական ձեռնարկը, որում երիտասարդ ընտրողի ուշադրությանն է ներկայացվում իր ծավալով համեստ, սակայն բովանդակությամբ բավականին հագեցված աշխատություն:

Ձեռնարկում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և գործող օրենսդրության այլ ակտերի ու իրավաբանական գրականության վերլուծության հիման վրա բացահայտված են ընտրությունների հասկացությունն ու տեսակները, ընտրողի իրավական կարգավիճակը, առանձնահատուկ ուշադրություն է դարձված ընտրական գործընթացներում երիտասարդների մասնակցության խնդրին, ինչպես նաև ներկայացված է ընտրական տեխնոլոգիաների դերն ընտրական գործընթացներում, դրանց կիրառությունը Հայաստանի Հանրապետությունում և զարգացման հեռանկարները:

Սույն ձեռնարկում ներկայացված ընտրություններին, ընտրողների իրավունքներին և պարտականություններին, ընտրական իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև պատասխանատվությանը առնչվող հարցերը, ըստ էության, վերաբերում են յուրաքանչյուր քաղաքացու և Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունք ունեցող ցանկացած անձի:

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, հատկապես յուրաքայտուր երիտասարդ պետք է գիտակցի, որ կա-

ռավարմանը մասնակցելու կարևորագույն և հիմնական եղանակը՝ ընտրական իրավունքի ապահովումն է և դրա իրացումը: Միայն ընտրություններն են հնարավորություն տալիս քաղաքացիներին դրսևորվել որպես պետության անբաժանելի մաս, մասնակցել պետության կառավարմանն ու իրացնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը ժողովրդին պատկանելու մասին սահմանադրական դրույթը:

Իսկ պետական կառավարմանը երիտասարդների ակտիվ մասնակցությունը վկայությունն է տվյալ պետության ներդաշնակ զարգացմանը: Երիտասարդության մասնակցությունը պետության և հասարակության քաղաքական կյանքում կարևոր նշանակություն ունի իրենց ներկայի և ապագայի, երկրում ընթացող ներքին և արտաքին գործընթացների համար պատասխանատվության գիտակցման տեսանկյունից, ինչպես նաև երկրում քաղաքացիական հասարակության կայացմանն ու ժողովրդավարության զարգացման ցուցիչը:

Հայաստանի քաղաքական կյանքում և մասնավորապես ընտրություններին երիտասարդության մասնակցության հիմնանդիրներին նվիրված են հայրենական և արտասահմանյան տարաբնույթ հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և նրանց կառույցների կողմից նախաձեռնված բազմաթիվ նախագծեր, սակայն գիտական աշխատություններ շատ չեն: Այսպես, հարկ է հիշատակել Մ.Պ. Մարգարյանի՝ «Երիտասարդության մասնակցությունը հասարակության և պետության գործերի կառավարմանը. որոշ քաղաքական իրավական ասպեկտներ (Հայաստանի Հանրապետության նյութերով)» թեմայով թեկնածուականատենախոսությունը¹, Ռ.Ա. Մարգարյանի՝ «Հայաստանի Հանրապետության երիտասարդական քաղաքականության իրավական հիմ-

¹ Саркисян М.П. Участие молодежи в управлении делами общества и государства: некоторые политико-правовые аспекты: (По материалам Республики Армения): автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук: 12.00.01 / Ин-т государства и права.- Москва, 1991.

քերը» գիտական հոդվածը², Ա. Սարգսյանի՝ «Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում» մենագրությունը³: Բացի այդ, անհրաժեշտ է հատուկ նշել «Երիտասարդության տեղն ու դերը հասարակության քաղաքական կյանքում» գիտագործնական հետազոտությունը, որը նախապատրաստվել է Անկախ Պետությունների Համագործակցության Միջխորհրդարանական վեհաժողովի (ԱՊՀ ՄԽՎ) հովանու ներքո՝ հեղինակային խմբի կողմից (հեղինակներ՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի դասախոս, քաղաքագիտական գիտությունների թեկնածու Հ. Մամիջանյանը, ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, ՀՀ Փաստաբանական դպրոցի դասախոս Ս. Խաչատրյանը, Վերաքննիչ վարչական դատարանի դատավորի օգնական Ե. Գյանջումյանը⁴: Ընտրություններին երիտասարդների մասնակցությանն անդրադարձել է նաև իրավաբանական գիտությունների դոկտոր Վ.Գ. Ավետիսյանը⁵:

Հարկ է հիշատակել նաև «Հայաստանի Հանրապետության երիտասարդ ընտրող» ուսումնական ձեռնարկը Լ.Ա. Հակոբյանի և Վ.Ն. Այվազյանի հեղինակությամբ⁶, որը հրատարակվել է Ժողովրդավարության, պառլամենտարիզմի զարգացման և ԱՊՀ ՄԽՎ անդամ պետությունների քաղաքացիների ընտրական իրավունքների պահ-

² Маргарян Р.А. Правовые основы молодежной политики Республики Армения // Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки. 2015. № 1(19). С.48–56.

³ Սարգսյան Ա. Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում / Ա. Սարգսյան. - Եր.: ԵՊՀ. 2022. - 194 էջ:

⁴ Место и роль молодежи в политической жизни общества/ Авторская группа; Секретариат МПА СНГ. – Ер.: Изд.-во «Айрапет», 2019, 168с.

⁵ Տե՛ս, օրինակ՝ Аветисян В. Д. Электронные СМИ и их влияние на участие молодежи в электоральных процессах: опыт Республики Армения // Научные труды Северо-Западного института управления РАНХиГС, Том 14, Выпуск 2 (59) (специальный), Санкт-Петербург, 2023, с. 382-386.

⁶ Акопян Л., Айвазян В. Молодой избиратель Республики Армения. Пособие для избирателя: учебное пособие / Под ред. Акопян Л.А., Ер. – Изд. Айрапет, 2016, 128с.

պանման մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղի գործունեության շրջանակներում 2016 թվականին:

Պետության ընտրական գործընթացներում երիտասարդության մասնակցության հարցերն արտասահմանյան գիտությունում լայնորեն լուսաբանված է: Այսպես, հասարակության քաղաքական կյանքում երիտասարդության մասնակցության հետազոտմանն են նվիրված այնպիսի քաղաքագուների աշխատություններ, ինչպիսիքն են Կ.Ա. Կոտովան⁷, Ե.Վ. Ջոզուլյան⁸, Ս.Յ. Խոբրակովը⁹, Է.Վ. Չեկմարյովը¹⁰, Վ.Ն. Պոմազանովան¹¹, Օ.Գ. Շչենինան¹², Պ.Վ. Մալցևը¹³, Տ.Վ. Բիրյուլինան¹⁴, Ռ.Վ. Զվերովշիկովան¹⁵, Ս.Վ. Կարիշևան¹⁶ և այլք:

⁷ Котова К.А. Участие молодежи в политических организациях в современной России // Дисс. на соискание ученой степени кандидата политических наук, М., 2013, 226с.

⁸ Зозуля Е.В. Молодежь как актор политического процесса в современной России // Дисс. на соискание ученой степени кандидата политических наук, Пятигорск, 2013, 198с.

⁹ Хобраков С.Ц. Молодежные общественные объединения как институт политического участия в современной России // Дисс. на соискание ученой степени кандидата политических наук, М., 2009 год, 190с.

¹⁰ Чекмарев Э.В. Роль молодежи в политической модернизации постсоветской России // Дисс. на соискание ученой степени доктора политических наук, Саратов, 2009, 427с.

¹¹ Помазанова В.Н. Политическая социализация молодежи в современной России: на примере Ставропольского края // Дисс. на соискание ученой степени кандидата политических наук, Ставрополь, 2007, 216с.

¹² Щенина О.Г. Формы участия молодежи в политическом процессе современной России // Дисс. на соискание ученой степени кандидата политических наук, М., 2005, 165с.

¹³ Мальцев П.В. Российская молодежь в современном политическом процессе: проблемы политической социализации и участия // Дисс. на соискание ученой степени кандидата политических наук, Орел, 2003, 230с.

¹⁴ Бирюлина Т. В. Мотивация и характер политического участия российской молодежи // Автореферат дис. на соискание ученой степени кандидата политических наук, Саратов, 2008, 23с.

¹⁵ Зверовщиков Р. В. Молодёжь и её участие в выборах: способы повышения электоральной активности молодых избирателей / Р. В. Зверовщиков. //

Ընտրություններին երիտասարդության մասնակցության հարցը գրավում է նաև իրավաբան գիտնականների ուշադրությունը: Այսպես, ընտրություններում և հանրաքվեներում երիտասարդության մասնակցության սահմանադրաիրավական հիմքերին է նվիրված Ա. Ա. Յաշինի ատենախոսական հետազոտությունը¹⁷:

Ընտրություններին մասնակցության հարցն ընդհանրապես և երիտասարդության մասնակցության հարցը մասնավորապես գիտնականների ուշադրությունը գրավում են վաղուց: Այսպես, ընտրություններում մասնակցության հարցերը դարձել են Շ. Արնշտեյնի ուսումնասիրության առարկա, ով 1969 թվականին հրատարակել է մի շարք հոդվածներ, որոնցից կարելի է առանձնացնել «Քաղաքացիների մասնակցության սանդուղք»: Նրա մոտեցումները հետագայում զարգացում են ստացել հասարակական կյանքում հատկապես երիտասարդության մասնակցության կապակցությամբ սոցիոլոգ Ռ. Հարթի կողմից, ով մշակել է «երիտասարդական մասնակցության սանդուղք»:

Ժամանակակից հետազոտությունները տվյալ որոշտում դիմում են երիտասարդության մասնակցության վրա ազդող գործոններին՝ նշելով քաղաքական գործընթացներին երիտասարդների վաղաժամ ծանոթության դրական ազդեցությունը ապագա քաղաքական մասնակցության վրա, ինչպես նաև երիտասարդության մասնակցության ձևավորման հարցում այնպիսի գործոնների նշանակալից դերին, ինչպիսիքն են սոցիալ-տնտեսական կարգավիճակը,

Новый юридический вестник. — 2019. — № 3 (10). — С. 6-9. — URL: <https://moluch.ru/th/9/archive/125/4095/> (նիմելու ամսաթիվը՝ 29.11.2023թ.)

¹⁶ Кабышев С.В. Формирование правовой культуры молодежи в сфере избирательного права: роль образовательных учреждений // Научные труды Северо-Западного института управления РАНХиГС, Том 14, Выпуск 2 (59) (специальный), Санкт-Петербург, 2023, с. 144-151.

¹⁷ Яшин А.А. Конституционно-правовые основы участия молодежи в голосовании: выборах и референдумах // Дисс. на соискание ученой степени кандидата юридических наук, М., 1997, 212с.

կրթությունը և քաղաքացիական կրթության ծրագրերը¹⁸, միաժամանակ դիմելով նաև երիտասարդների մասնակցությանը խոչընդոտող գործոններին, ինչպիսիք են քաղաքական հետաքրքրության բացակայությունը, քաղաքական ինստիտուտների նկատմամբ թերահավատությունը և քաղաքական գործընթացի սահմանափակ ընկալումը, քվեարկության վերաբերյալ սահմանափակող օրենքները, ինստիտուցիոնալ խոչընդոտները¹⁹ և այլն:

Երիտասարդների քաղաքական մասնակցության վրա ազդող կարևորագույն գործոններից է, որին մատնացույց են անում տվյալ ոլորտի ժամանակակից հետազոտողները, թվային տեխնոլոգիաների ներդրումը²⁰:

¹⁸ Gabriel A. Almond, Sidney Verba. The Civic culture. Political attitudes and democracy in five nations. Princeton, N. Y., 1963; Dalton R. J. Citizenship Norms and the Expansion of Political Participation. Political Studies. 2008. 56 (1): 76–98 և այլն:

¹⁹ Мастерова Ю.И. Политическая активность российской молодежи в условиях распространения информационных технологий // Автореферат дисс. на соискание ученой степени кандидата политических наук, М., 2009; Intifara Sadiq Chowdhury, Are Young People Turning Away from Democracy? A Comparative Study of Youth Disengagement in Advanced Democracies, // A thesis submitted for the degree of Doctor of Philosophy of The Australian National University, January 2023 (Աղբյուրը՝ https://openresearch-repository.anu.edu.au/bitstream/1885/292274/2/Full%20Thesis%20Revisions_clean%20copy.pdf) (դիմելու ամսաթիվը՝ 01.12.2023թ.); Ingrid Bachmann, Kelly Kaufhold, Seth C. Lewis, Homero Gil de Zúñiga, News Platform Preference: Advancing the Effects of Age and Media Consumption on Political Participation International Journal of Internet Science 2010, 5 (1), p. 34–47 (աղբյուրը՝ https://www.researchgate.net/publication/279551967_News_Platform_Preference_Advancing_the_Effects_of_Age_and_Media_Consumption_on_Political_Participation) (դիմելու ամսաթիվը՝ 01.12.2023թ.) և այլն:

²⁰ Попова О.В. Современные массмедиа как фактор формирования моделей электорального поведения молодежи // Научные труды Северо-Западного института управления РАНХиГС, Том 14, Выпуск 2 (59) (специальный), Санкт-Петербург, 2023, с. 164–168; Иванов Д.Ю. Доверие молодых избирателей в условиях цифровизации избирательного процесса // Научные труды Северо-Западного института управления РАНХиГС, Том 14, Выпуск 2

Ցանկացած իրավական, ժողովրդավարական պետության կառուցման ճանապարհին անգնահատելի է երիտասարդների ակտիվ մասնակցությունն ուղղակի ժողովրդավարությանը և ընտրություններին, քանզի ընտրությունների արդյունքում ապահովվում է նաև քաղաքական իշխանության անընդմեջ «սերնդափոխությունը», կանխորոշվում՝ պետության զարգացման ռազմավարությունն ապագայի համար:

Հուսանք, որ ներկայացվող աշխատությունը դրան ծանոթացած երիտասարդ ընտրողների, երիտասարդ ընտրողներին կրթողների համար կունենա կարևոր նշանակություն և կնպաստի երիտասարդության ընտական ակտիվության բարձրացմանը:

Շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանին՝ սույն ուսումնական ձեռնարկի նախաբանի համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչության պետ Ելենա Այվազյանին՝ ձեռնարկում ներկայացված վիճակագրական տվյալների հավաքագրման և ձեռքբերման հարցում ցուցաբերած աջակցության համար:

(59) (специальный), Санкт-Петербург, 2023, с. 176-185; Fakhry Amin, Silkiana Swarizona, Trihadi Kuncahyo, Yasser Arafat, Riesta Ayu Oktarina, Digital Democracy Political Participation Through Technology in the Modern Era // International Journal of Science and Society, Volume 5, Issue 4, 2023, p. 291-301 (Աղբյուրը՝ <https://ijsoc.goacademica.com/index.php/ijsoc/article/view/786/723>) (ղիմելու ամսաթիվը՝ 01.12.2023թ.) և այլն:

ԳԼՈՒԽ 1.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

1.1. ԻՆՉ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՉՈՒ Է ՊԵՏՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ընտրությունը որոշումների կայացման փուլերից մեկն է: Մեզանից յուրաքանչյուրն անընդհատ և ամենուր բախվում է դրան: Ամեն օր մարդը լուծում է բազմաթիվ կենցաղային հարցեր՝ բախվելով ընտրություն կատարելու հարցին, թե ինչ հագնել, ինչ երթուղով հասնել աշխատանքի, ինչ ուտել, ինչպես անցկացնել երեկոն և այլն: Կյանքի ընթացքում մեզանից յուրաքանչյուրը բազմիցս ընտրություն է կատարում՝ որոշելով, թե ինչ մասնագիտություն ընտրել, որ բուն ընդունվել, որ գիրքը կարդալ, որ երկրում հանգստանալ և այլն: Նման որոշումները անհատական են և ուղղված են անձի կողմից դրված նպատակին հասնելուն:

Մակայն, հաճախ անհրաժեշտ է ընտրություն կատարել այնպիսի նպատակներին հասնելու համար, որոնք կարող են ապահովվել միայն կոլեկտիվ որոշման շրջանակներում: Ամերիկացի տնտեսագետ Ջ. Բյուքենենը 1986 թվականին հասարակական ընտրության տեսության ոլորտում հետազոտությունների համար արժանացել է Նոբելյան մրցանակի: Հեղինակը ասում է, որ քաղաքականությունն անհատների միջև փոխանակման բարդ համակարգ է, որում վերջիններս կոլեկտիվ ձգտում են հասնել իրենց մասնավոր նպատակների, քանի որ նրանք չեն կարող դրանք իրականացնել սովորական շուկայական փոխանակման միջոցով:

Անհատականից բացի այլ շահեր չկան: Շուկայում մարդիկ խնձորը փոխանակում են նարինջի հետ, իսկ քաղաքականության մեջ համաձայնում են հարկեր վճարել, փոխարենը ստանալ բոլորի

համար անհրաժեշտ բարիքներ՝ տեղական հրշեջ ծառայությունից մինչև դատարան²¹:

Հասարակական ընտրության տեսության կողմնակիցները քաղաքական շուկան դիտարկում են ապրանքայինի գույզադրությամբ: Պետությունը մարդկանց մրցակցության ասպարեզ է որոշումների կայացման վրա ազդելու, ռեսուրսների բաշխման հասանելիության, հիերարխիկ սանդղաղբի տեղերի համար:

Սակայն, պետությունը հատուկ տեսակի շուկա է: Դրա անդամներն ունեն անսովոր սեփականության իրավունքներ. ընտրողները կարող են ներկայացուցիչներ ընտրել պետության բարձրագույն մարմիններում, պատգամավորները՝ օրենքներ ընդունել, պաշտոնյաները՝ հետևել դրանց կատարմանը: Ընտրողներն ու քաղաքական գործիչները մեկնաբանվում են որպես ձայներ և նախընտրական խոստումներ փոխանակող անհատներ²²:

Հասարակական ընտրության տեսությունը տնտեսագիտության և քաղաքագիտության մի բաժին է, որն ուսումնասիրում է, թե ինչպես անհատական նախասիրությունները կարող են միավորվել կոլեկտիվ որոշումների կայացման մեջ: Այն ուսումնասիրում է կոլեկտիվ որոշումների կայացման հետ կապված կառուցակարգերն ու խնդիրները, ինչպիսիք են ընտրությունները տարբեր նախասիրություններ ունեցող հասարակություններում:

Ընտրությունները, որպես հասարակական որոշման ընդունման ձև, ուղղված են անհատական նախասիրությունները կոլեկտիվ որոշումների վերածելուն: Դրանք ապահովում են ներկայացուցիչների ընտրության հիմքեր՝ ընտրազանգվածի համակցված նախասիրությունների հիման: Սակայն, սոցիալական ընտրության տե-

²¹ Бьюкенен Дж. М. Политика без романтики: краткое изложение позитивной теории общественного выбора и ее нормативных условий // Вехи экономической мысли. Экономика благосостояния и общественный выбор. Т.4/Под ред. А.П. Заостровцева — СПб.: Экономическая школа, 2004, с. 417-434.

²² Առավել մանրամասն տես՝ https://studbooks.net/555102/politologiya/teoriya_obschestvennogo_vybora_ekonomicheskoy_teorii (ղիմելու ամսաթիվը 07.06.2023թ.)

սությունն ընդգծում է այս գործընթացին բնորոշ բարդությունն ու սահմանափակումները: Այսպիսով, հասարակական ընտրության տեսությունը պատկերացում է տալիս ընտրությունների մշակման և իրականացման հետ կապված խնդիրների, հնարավորությունների և փոխզիջումների մասին՝ որպես կոլեկտիվ որոշումների կայացման կառուցակարգ: Նա ընդունում է, որ անհատական նախասիրությունները հասարակական ընտրության մեջ միավորելը բարդ խնդիր է և ընդգծում է քվեարկության տարբեր համակարգերի և դրանց հետևանքների ուսումնասիրության կարևորությունը ներկայացուցչության և արդարության համար²³:

Ընտրությունները բազմակողմ երևույթ են և գրավում են ամենատարբեր մասնագետների՝ իրավաբանների, տնտեսագետների, քաղաքագետների, փիլիսոփաների, լեզվաբանների, սոցիոլոգների և այլոց ուշադրությունը: Հանրային իրավունքի համակարգում կատարված փոփոխությունները, որոնք կապված են հասարակության և պետության, քաղաքացու և իշխանության միջև փոխհարաբերությունների փոխակերպման հետ, հանգեցրել են հասարակական լայն հետաքրքրությանը ընտրական իրավունքի խնդիրների նկատմամբ: Անդրադառնալով հասարակական ընտրության տեսությանը, հարկ է նշել, որ այս տեսության շրջանակներում ոչ միայն ընտրություններն են դիտարկվում որպես կոլեկտիվ որոշումների կայացման կառուցակարգ: Սակայն, հենց ընտրությունների շրջանակներում է, որ կոլեկտիվ որոշումը կյանքի կկոչվի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Կոլեկտիվ որոշումների կայացման այլ կառուցակարգերը չեն երաշխավորում կոլեկտիվ որոշումների իրականացումը: Այսպիսով, օրինակ, հանրաքվեի մասնակցության շրջանակներում միշտ չէ կայացվում վերջնական որոշումը, այլ բացահայտվում է միայն կոլեկտիվի (հասարակության, ժողովրդի) վերաբերմունքն այս կամ այն որոշման առաջարկվող տարբերակին: Քաղաքացիա-

²³ Морозова О.С. Использование теории социального выбора в сфере разработки избирательных систем// Фундаментальные исследования. – 2014. – № 12-8. – С. 1799-1803; URL: <https://fundamental-research.ru/ru/article/view?id=36445> (ղիմելու ամսաթիվը՝ 07.06.2023թ.).

կան նախաձեռնության շրջանակներում կարող է կիրառվել կոլեկտիվ որոշումների կայացման կառուցակարգը, սակայն որոշման ընդունումը կախված կլինի խորհրդարանից կամ այլ ներկայացուցչական մարմնից: Իսկ ընտրությունների շրջանակներում կոլեկտիվ որոշումը կարտացոլվի ընտրված նախագահի, խորհրդարանական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի կազմում:

Ընտրությունների ինստիտուտի, ինչպես նաև ընտրական օրենսդրության հետ կապված մոտեցումների և հասկացությունների պատմական զարգացման վերլուծությունը²⁴ հնարավորություն տվեց իրավագիտության մեջ ձևավորել «ընտրություններ» հասկացության բազմաթիվ մեկնաբանություններ²⁵: Ընտրությունները կարելի է ուսումնասիրել որպես.

²⁴ Մանրամասն տե՛ս՝ Очерки по истории выборов и избирательного права: Учебное пособие/ Авт. проекта: Ю.А. Веденеев и др.; Авт . коллектив: Ю.А. Веденеев, И.В. Зайцев, В.Е. Кораблин, В.В. Луговой, В.В. Тылкин / Под ред. Ю.А. Веденева и Н.А. Богодаровой; Центр. избират. Комис. Российской Федерации, Рос. Центр обучения избират. технологиям при Центр. избират. комис. Российской Федерации, Калуга: Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ», 2002. - 692 с., илл.; Институт выборов в истории зарубежных стран. XX век: Материалы к библиографическому указателю/ Авт. проекта и сост.: Ю.А. Веденеев, В.В. Луговой, П.Г. Крученков/ Центр. избират. комис. Российской Федерации, Рос. центр обуч. Изби-рат. технологиям при Центр. избират. комис. Российской Федерации, Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ». - Калуга, 2003. - 424 с.; Зарубежное избирательное право: Учебное пособие. // Научный редактор: доктор юридических наук В.В. Маклаков, научные консультанты: д.ю.н. В.И. Лысенко, д.ю.н А.И. Ковлер, М., Издательство НОРМА, 2003. - 288 с. - (Издательский проект «Зарубежное и сравнительное избирательное право») և այլն:

²⁵ Առավել մանրամասն տե՛ս՝ Հակոբյան Լ., Վարազյան Լ., Ասատրյան Ա., «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը:–Եր.: Հայրապետ հրատ., 2021, էջ 7-16:

իրավական, քաղաքական, սոցիալական ինստիտուտ	սահմանադրական կարգի հիմունք
իրավաբանական, քաղաքական, սոցիալական գործընթաց	իրավաքաղաքական արժեք
ժողովրդավարության անբաժանելի բաղադրիչ	ժողովրդաիշխանության ինստիտուտ
պետական մարմնի կազմավորման կարգ	ընտրություն քվեարկության միջոցով
հակասությունների հաղթահարման եղանակ ու ձև	քաղաքացիների կամարտահայտության ձև
պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու ընթացակարգ	
իրավաքաղաքական որոշումների կայացման ինստիտուտ և գործընթաց	
անձանց հայտնաբերման և ընտրության միջոցառումների համալիր	
քաղաքացիների քաղաքական իրավասուբյեկտության իրականացման եղանակ	
քաղաքացիների ընտրական իրավունքների և պետության ընտրական պարտականությունների կողիֆիկացման գործընթաց	

Այսպես են դիտարկում ընտրությունները հայրենական և արտասահմանյան հեղինակները: Եթե ուշադիր նայենք ներկայացված սահմանումներին, ապա կարող ենք արձանագրել, որ ընտրությունները.

- հնարավորություն են տալիս իրականացնել անհատի քաղաքական ազատության ոլորտը,

- թույլ են տալիս գնահատել տարբեր քաղաքական ուժերի վարքագիծը,

- թույլ են տալիս քաղաքացիներին քաղաքական գնահատական տալ պետական ինստիտուտների գործունակությանը,

- լեգիտիմացնում են իշխանությունը,

- ծառայում են որպես քաղաքական կյանքի բարոմետր,

- ծառայում են որպես քաղաքական ղեկավարների ընտրության միջոց,

- ծառայում են որպես քաղաքացիների քաղաքական ինքնահաստատման, քաղաքացիական հասարակության քաղաքական ինքնակազմակերպման միջոց, քաղաքացիական քաղաքական գիտակցության դաստիարակության կառուցակարգ:

Ընտրություններին՝ որպես իրավաքաղաքական գործընթացում մասնակցությունը, քաղաքացիական հասարակության անդամի քաղաքական ինքնաիրացման կարևորագույն ձևերից մեկն է: Քաղաքական գործընթացներին և մասնավորապես ընտրություններին մասնակցելով՝ մարդը գիտակցում և ցույց է տալիս իր մասնակցությունը տվյալ հասարակության և պետության կյանքում: Ինչպես առօրյա կյանքում ընտրությունը, այնպես էլ ընտրելու և ընտրվելու իրավունքի իրացումը նախ՝ պետք է լինի, երկրորդ էլ՝ պետք է լինի գիտակցված, այլապես այդ ընտրությունը քո փոխարեն մեկ ուրիշը կկատարի:

Դրա համար կարևոր է պետականությունը գիտակցել որպես արժեք, սեփական արժեհամակարգում տեղ ունենալ այդ հասկացության համար: Ինչպես գրում է պրոֆեսոր Ա.Մ. Ղամբարյանը. «թեև Ժ. Ռուսոն չէր հավատում պետության՝ որպես մարդու արար-

չագործության արդյունքի հավերժական գոյությանը, սակայն նա կարծում էր, որ մարդը կարող է նպաստել պետության գոյության երկարատևությանը: Ճիշտ է, ինչպես մարդկային մարմինը, այնպես էլ քաղաքական օրգանիզմը սկսում է մահանալ ծնվելուց ի վեր և ինքն իր մեջ կրում է իր իսկ քայքայման պատճառները, բայց եթե մարդը ստեղծի քիչ թե շատ ամուր կառուցվածք (конституцию) ունեցող քաղաքական օրգանիզմ, ապա դա նրան հնարավորություն կտա իր գոյությունը պահպանել առավել տևական ժամանա: Այլ կերպ ասած՝ պետության գոյության տևողությունը կախված է մարդուց: Եթե մարդը ստեղծում է լավագույնս կազմակերպված պետություն, ապա այն գոյություն կունենա տևական ժամանակ (եթե, իհարկե, անկանխատեսելի հանգամանքները նրան ավելի վաղ չկործանեն)»²⁶:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ պետականության պահպանման հարցերում մասնակցության գրավականը, ի թիվս այլ հարցերի, ընտրություններին մասնակցելն է:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: Ի տարբերություն ժողովրդավարության այլ ձևերի իրացումից, ընտրությունների անցկացումն այսպես թե այնպես, կարելի է ասել, կանխորոշված է, քանի որ ժողովրդավարական պետություններում ընտրությունները իշխանության այս կամ այն մարմնի ձևավորման կամ այս կամ այն պաշտոնի փոխարինման միակ միջոցն են, որոնք ընտրվում են որոշակի ժամկետով: Իսկ դա նշանակում է, որ ընտրություններն անցկացվելու են որոշակի պարբերականությամբ, չհաշված որոշ բացա-

²⁶ Ղամբարյան Ա. Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները / Ա. Ղամբարյան. - Եր.: Տիգրան Մեծ, 2022, էջ 12:

ություններ, երբ օրենսդրությամբ սահմանված հանգամանքները հիմք են հանդիսանում այդ ժամկետների որոշակի տեղաշարժի համար (ընտրություններն անցկացվում են վերը նշված պարբերականությամբ թելադրված ժամկետներից ավելի վաղ կամ ուշ): Այսպիսով, ընտրությունները ժողովրդավարության միակ ձևն է, որը բնութագրվում է պարբերականությամբ: Կարևոր է, որ ընտրությունները հիմնականում պլանավորված երևույթ են: Իհարկե, կան երկրներ, որտեղ կարող են անցկացվել նաև արտահերթ ընտրություններ: Այնուամենայնիվ, հաճախ անցկացվում են հերթական ընտրություններ, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր գիտակից քաղաքացու, քաղաքացիական հասարակության պատասխանատու անդամի կողմնորոշվել իր գործողություններում, բաշխել իր ռեսուրսները (ժամանակը, ֆինանսները և այլ)՝ տվյալ հասարակության և պետության քաղաքական կյանքին իր մասնակցությունն ապահովելու համար: Միևնույն ժամանակ, այդ մասնակցությունը կարող է դրսևորվել շատ տարբեր ձևերով, ինչի մասին ավելի մանրամասն կխոսենք սույն ձեռնարկի հաջորդ գլուխներում:

1.2. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ինչպես ասվում է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:


Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով պայմանավորված՝ տեղի ունեցավ կառավարման ձևի փոփոխություն: Ներկայումս Հա-

յաստանի Հանրապետությունում համապետական մակարդակով ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորվում է միայն խորհրդարանը՝ ՀՀ Ազգային ժողովը: ՀՀ նախագահն ընտրվում է երկրի խորհրդարանի կողմից՝ անուղղակի ընտրությունների միջոցով: Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների միջոցով ձևավորվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

Այսպես, Հայաստանում անցկացման մակարդակով տարբերվում են **համապետական և տեղական ընտրությունները**: Համապետական են համարվում *Ազգային ժողովի*, ինչպես նաև *Հանրապետության նախագահի* ընտրությունները: Տեղական են համարվում ինքնակառավարման մարմինների ընտրությունները: ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են *համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին*:

Ընտրողների մասնակցության բնույթով ընտրությունները կարող են լինել **ուղղակի և անուղղակի**: Ուղղակի ընտրությունների շրջանակներում ընտրողներն ընտրում են անմիջականորեն ընտրվողներին, իսկ անուղղակի ընտրությունների շրջանակներում այդ գործընթացը միջնորդում է ընտրողի կամ ընտրողների կողմից ձևավորված որևէ իշխանության մարմին: Այսպես, Հայաստանում ուղղակի ընտրությունների միջոցով ընտրվում են Ազգային ժողովի պատգամավորները, մինչև 4000 ընտրող ունեցող համայնքների ղեկավարները և ավագանու անդամները: Անուղղակի ընտրությունների միջոցով ընտրվում է, օրինակ, Հանրապետության Նախագահը, 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի ղեկավարը:

Հայաստանում ուղղակի ընտրությունների շրջանակներում, կախված ձևավորվող մարմնից, առանձնանում են Ազգային ժողովի, համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունները: Հայաստանում ուղղակի ընտրությունները սխեմատիկ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Ազգային ժողովի պատգամավորների նվազագույն թիվը 101 է:

Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես ընտրվում են հինգ տարի ժամկետով: Համայնքի ավագանու անդամների թվակազմը կախված է տվյալ համայնքում ընտրողների թվից: Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 104.1-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին բաղկացած է՝

- ✓ 5 անդամից՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում.
- ✓ 7 անդամից՝ 1 000-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքում.
- ✓ 9 անդամից՝ 2 001-ից մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքում.
- ✓ 15 անդամից՝ 4 001-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքում.
- ✓ 21 անդամից՝ 10 001-ից մինչև 25 000 ընտրող ունեցող համայնքում.
- ✓ 27 անդամից՝ 25 001-ից մինչև 70 000 ընտրող ունեցող համայնքում.

- ✓ 33 անդամից՝ 70 001 մինչև 300 000 ընտրող ունեցող համայնքում.
- ✓ 65 անդամից՝ 300 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում:

Կախված **անցկացման ժամկետներից**՝ ընդհանուր մոտեցման շրջանակներում տարբերակվում են *հերթական և արտահերթ ընտրություններ*: Հերթական ընտրությունն անցկացվում է հանրային իշխանության ընտրված մարմնի (պաշտոնատար անձի) լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ, իսկ արտահերթ ընտրություններն անցկացվում են այն դեպքում, երբ Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված հանրային իշխանության ընտրված մարմնի (պաշտոնատար անձի) լիազորությունների ժամկետը չի լրացել, սակայն նրա լիազորություններն օրենսդրորեն սահմանված որևէ հիմքով վաղաժամկետ դադարեցվել են:

Այսպես, Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 60, և ոչ ուշ, քան 50 օր առաջ: Ազգային ժողովի հերթական ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահը հրապարակում է հրամանագիր քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 90 օր առաջ (Ընտրական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովն արձակվելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 45 օր հետո: Իրավունքի ուժով Ազգային ժողովն արձակվելուց հետո Հանրապետության նախագահն անհապաղ հրամանագիր է հրապարակում Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելու մասին (Ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման համար Ընտրական օրենսգրքը սահմանում է տարբերակված մոտեցում՝

կախված այն հանգամանքից, թե տվյալ ընտրություններն ինչ ընտրականգով են անցկացվում՝ մեծամասնական, թե համամասնական:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է առավելագույնը չորս օր, երբ, որպես կանոն, կարող են անցկացվել տեղական ինքնակառավարման մարմինների և՛ հերթական, և՛ արտահերթ ընտրությունները:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունները նշանակում է մարզպետը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ իր որոշման մեջ նշելով կիրառվող ընտրակարգը:

Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների հերթական ընտրությունը նշանակում է մարզպետը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 60 օր առաջ:

Համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու հերթական ընտրություններն անցկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած օրերից մեկը:


Բացառություն է կազմում Երևանի ավագանու հերթական ընտրությունը, որն անցկացվում է ավագանու լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 20 օր առաջ: Երևանի ավագանու հերթական ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը պետք է ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 60 օր առաջ:


Մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների ընդհանուր թիվը կիսով չափ նվազելու դեպքում՝ համայնքի ավագանու արտահերթ ընտրությունը նույնպես անցկացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած օրերից մեկը:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի արտահերթ ընտրությունը նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Թեև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրություններն անցկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած օրերից մեկը, սակայն ընտրությունների նշանակման ժամկետների և նշանակող սուբյեկտների համար սահմանված են կարգավորումներ, որոնք տարբերվում են հերթական ընտրությունների համար սահմանվածներից: Այսպես, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրությունները նշանակում է կառավարությունը՝ համապատասխան ավագանու արձակվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, սակայն ընտրությունների անցկացման օրը նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ արտահերթ ընտրություններ նշանակելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Նշված կանոնից բացառություն է կազմում Հայաստանի Հանրապետության ամենախոշոր քաղաքներ հանդիսացող՝ Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների արտահերթ ընտրությունների նշանակումը: Նշված համայնքերի ավագանիների արտահերթ ընտրությունները նույնպես նշանակում է կառավարությունը, և այդ ընտրություններն անցկացվում են ավագանիների արտահերթ ընտրություն նշանակելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո՝ առավել ուշ կիրակի օրը: Այսպիսով, միայն Երևանի ավագանու հերթական և արտահերթ, ինչպես նաև Գյումրու և Վանաձորի արտահերթ ընտրություններն են, որ չեն անցկացվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարվա համար սահմանված օրերին:

Հայաստանում հերթական և արտահերթ ընտրությունների նշանակումն ու անցկացումը սխեմատիկ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.





Եթե անդրադառնանք հայաստանյան օրենսդրությանը, ապա ըստ ընտրությունների (կամ քվեարկությունների) անցկացման ժամկետների, բացի հերթական և արտահերթ ընտրություններից, հարկ է նշել նաև *Նոր հերթական ընտրությունները, նոր ընտրությունները, վերաքվեարկությունը և Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության երկրորդ փուլը*:

Նոր հերթական ընտրությունները նշանակվում են, եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ամփոփելով Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները, որոշում է ընդունում Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու մասին, կամ, ամփոփելով Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության երկրորդ փուլի արդյունքները, որոշում է ընդունում Ազգային ժողովի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին: Նոր հերթական ընտրություններ նշանակվում են Հանրապետության նախագահի հրամանգրով՝ 7-րդ օրը, և անցկացվում են որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 70 օր հետո:

Նոր ընտրություններ նշանակվում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչվելու կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները չկայացած ճանաչվելու դեպքում: Նոր ընտրությունները նշանակում է մարզպետը:

Վերաքվեարկությունն անցկացվում է, եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել ընտրական օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին որոշում է ընդունում, եթե այդ խախտումների հետևանքները հնարավոր է շտկել այդ եղանակով: Եթե այդ խախտումների հետևանքները հնարավոր չէ շտկել տվյալ եղանակով, ապա ընտրությունները ճանաչվում են անվավեր, և նշանակվում է ընտրությո-

յունների վերաքվեարկություն: Վերաքվեարկությունը նշանակվում է համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

Ազգային ժողովի ընտրության քվեարկության *երկրորդ փուլ*ն անցկացվում է այն դեպքում, երբ վերաքվեարկություն նշանակելու մասին որոշում ընդունելու հիմքեր չկան և ընտրությունների արդյունքներով Ազգային ժողով ընտրելու և մանդատները բաշխելու մասին որոշում չի ընդունվում: Այս դեպքում որոշում է ընդունվում Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին: Եթե ընտրական շեմը հաղթահարած կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չեն ձևավորում քաղաքական կոալիցիա, ապա Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլն անցկացվում է քվեարկության օրվանից հետո՝ 28-րդ օրը: Ընտրության երկրորդ փուլին մասնակցում են այն երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Ընտրությունների մեկ այլ տեսակ, որն այժմ չի կիրառվում հայկական օրենսդրության շրջանակներում, *լրացուցիչ ընտրություններն են*: Լրացուցիչ ընտրությունները նախկինում կիրառվել են հայաստանյան օրենսդրությամբ, երբ խորհրդարանը ձևավորվում էր խառը ընտրակարգով, նշանակվում էին միամանդատ ընտրատարածքում ընտրված պատգամավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում:

Ըստ ընտրությունների արդյունավետության կամ ընտրությունների մասնակցության արդյունքների՝ ընտրությունները կարող են լինել *կայացած և չկայացած*:

Ընտրությունները ճանաչվում են *կայացած*, եթե չկան դրանք չկայացած ճանաչելու հիմքեր:

Ընտրությունները ճանաչվում են *չկայացած* երկու հիմքերով.

1) եթե ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը պակաս է օրենքով սահմանված մասնակցության շեմից: Օրինակ, Ռու-

սաստանում նախկինում օրենսդրորեն սահմանվել էր ընտրողների մասնակցության 20 տոկոսանոց շեմ, ինչը նշանակում էր, որ 20% տոկոսից պակաս ընտրողների մասնակցության դեպքում ընտրությունները ճանաչվում էին չկայացած՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես են բաշխվել ընտրողների ձայները թեկնածուների կամ կուսակցությունների միջև,

2) եթե քվեարկության շրջանակներում հնարավոր չէ ապահովել ընտրության այլընտրանքի պատշաճ մակարդակը, կամ քվեարկության արդյունքում թեկնածուներից որևէ մեկը չի հավաքել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

Հայաստանի ընտրական օրենսդրության մեջ ընտրությունները չկայացած ճանաչելը նախատեսված է միայն համայնքային ընտրությունների շրջանակներում: Հայաստանի ընտրական օրենսդրությունը չի նախատեսում ընտրողների մասնակցության անհրաժեշտ շեմ ընտրությունները կայացած ճանաչելու համար: Այսպիսով, Ընտրական օրենսգիրքը ընտրությունները չկայացած ճանաչելու հիմք է դիտարկում միայն այն դեպքերը, երբ քվեարկության շրջանակներում հնարավոր չէ ապահովել ընտրության այլընտրանքի պատշաճ մակարդակը, կամ քվեարկության արդյունքում թեկնածուներից որևէ մեկը չի հավաքել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ: Ընդ որում, տարբեր տեսակի համայնքային ընտրությունների դեպքում ընտրություններն անվավեր ճանաչելու հիմքերը տարբեր են: Այսպիսով, Ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարի ընտրությունը համարվում է չկայացած՝

1) եթե քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ,

2) եթե Ընտրական օրենսգրքով թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով թեկնածու չի գրանցվել,

3) մինչև քվեարկության ավարտը միակ թեկնածուի մահվան դեպքում,

4) առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած թեկնածուի՝ մինչև ընտրության արդյունքներն ամփոփելը մահվան դեպքում,

5) ընտրությունից հետո՝ մինչև լիազորությունների ստանձնումը, ընտրված համայնքի ղեկավարի մահվան կամ լիազորություններն ստանձնելուց հրաժարվելու դեպքերում,

6) եթե վերաքվեարկության արդյունքների հիման վրա ընտրություններն անվավեր են ճանաչվել:

Ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամների ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

1) թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով գրանցված թեկնածուների թիվը պակաս կամ հավասար է համայնքի ավագանու անդամների թվին,

2) գրանցումից հետո թեկնածուների թիվը նվազում է համայնքի ավագանու անդամների թվի երկու երրորդից,

3) վերաքվեարկության արդյունքների հիման վրա համայնքի ավագանու ընտրությունն անվավեր է ճանաչվել:

Ընտրական օրենսգրքի 135.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի առաջադրվել,

2) որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) սահմանված ժամկետում և կարգով չի գրանցվել (գրանցումը մերժվել է).

3) առաջադրված բոլոր կուսակցությունները գրանցման համար սահմանված ժամկետից հետո ներկայացրել են ինքնաբացարկի մասին դիմում,

4) կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է համայնքի ավագանու անդամների թվից, և թեկնածուների ցանկը սահմանված կարգով և ժամկետում չի համալրվել,

5) սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով չի ձևավորվել համայնքի ավագանու 2/3-ը:

Ընտրությունների մեկ այլ դասակարգում ներկայացվում է **քվեարկության ստուգման արդյունքների հիման վրա**, որի շրջանակներում առանձնանում են *վավեր և անվավեր ընտրությունները*: Ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե ընտրությունների ընթացքում թույլ են տրվել այնպիսի խախտումներ, որոնք թույլ չեն տալիս ստույգ հաստատել ընտրողների կամարտահայտության արդյունքները, ինչը հանգեցնում է ընտրությունների արդյունքների առ ոչինչ լինելուն:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է ընտրությունների վերաքվեարկություն (Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մաս, 118-րդ հոդվածի 3-րդ մաս, 119-րդ հոդվածի 3-րդ մաս, 142-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընտրությունները վավեր կամ անվավեր ճանաչելու հարցում Ընտրական օրենսգիրքը ելնում է *ընտրությունների վավերության կանխավարկածից*: Հարկ է նշել, որ ընտրական օրենսդրությունը և դրա կիրառման պրակտիկան բխում են *կայացած* ընտրությունների վավերության կանխավարկածից, և դրանք անվավեր ճանաչելու

համար անհրաժեշտ են շատ ծանրակշիռ հիմքեր: Այս մասին բազմիցս արտահայտվել են ինչպես ընտրական մարմինները, այնպես էլ ՀՀ դատարանները²⁷:

²⁷ Այսպես, ԿՀՀ 2021 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքների վերաբերյալ» N 183-Ա նշված է. «Նշված իրավանորմի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելը կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տրված խախտումները բացառեն ընտրության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունը: Այսինքն, բավարար չէ խախտումների պարզ թվարկումը, այլ պահանջվում է ապացուցել, որ հատկապես այդ խախտումների արդյունքում հնարավոր չէ պարզել ընտրության իրական պատկերը: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար պետք է պարզել, թե ընտրության կազմակերպման ու անցկացման, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների խախտումներ, երկրորդ՝ այդ արձանագրված խախտումները պետք է կասկածի տակ դնեն քվեարկության արձանագրված արդյունքները, երրորդ՝ խախտումների բնույթը պետք է լինի այնպիսին, որ ընտրության արդյունքների ամփոփման կամ բողոքի քննարկման ժամանակ արդեն հնարավոր չէ ստույգ որոշել քվեարկության մասնակիցների կամաարտահայտության իրական արդյունքը: Այսինքն, ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է, որ խախտումների հետևանքները կրեն անդառնալի բնույթ, պետք է կորսված լինի քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը ստույգ պարզելու հնարավորությունը: Վերոգրյալի համատեքստում հանձնաժողովը գտնում է, որ եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ է պարզել այն հանգամանքը, թե վկայակոչված խախտումները նախ՝ առկա են, թե՛ ոչ, հիմնավորվում են դրանք, թե՛ ոչ և առկայության դեպքում արդյոք դրանք ազդել են ընտրության արդյունքի վրա:

Ժողովրդավարական ընտրությունների անցկացումը ենթադրում է մասնակիցների իրավունքը՝ առաջադրելու արդյունքներն անվավեր ճանաչելու հարց: Դրա հետ միասին նման հարցադրման և ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ հիմքեր: Պետք է հաստատվեն օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք թույլ չեն տալիս վստահորեն վերականգնելու ընտրության իրական արդյունքները:»:

Կախված կիրառվող ընտրական համակարգի՝ առանձնանում են մեծամասնական, համամասնական կամ խառը ընտրական համակարգերով անցկացվող ընտրությունները: «Ընտրական համակարգ» եզրույթն օգտագործվում է լայն և նեղ իմաստով:

2003 թվականի մայիսի 24-ի ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ նշված է.

«Միջազգային իրավական պրակտիկան և սահմանադրական արդարադատության փորձը վկայում են նաև, որ, մասնավորապես.

- ընտրություններն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու որոշումը յուրաքանչյուր դեպքում կախված է կոնկրետ հանգամանքներից և պետք է հաշվի առնել իրավաբանորեն փաստարկված խախտման լրջությունն ու ծանրությունը, խախտումների ընդգրկման ծավալը, խախտումներ կատարելու միջոցներն ու ձևերը,

- ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին գործեր քննելիս՝ սահմանադրական դատարանը պետք է ելնի ոչ միայն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև ընտրական գործընթացի, ողջ ընտրական համակարգի հուսալիության ու վստահելիության հանգամանքից՝ օրենսդրությանը համապատասխան այն կազմակերպելու և անցկացնելու առումով,

- ընտրական իրավունքների ապացուցված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքները վերանայելու համար, սակայն այդ վերանայման էական բովանդակությունը պետք է կազմի այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք առկա իրավախախտումներն այնպիսի ընդգրկում ունեն, որ կարող են կասկածի տակ դնել ամբողջ ընտրությունների արդյունքները և վավերությունը,

- որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ վստահության աստիճանը կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն իրավաբանորեն փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա,

- ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, եթե խախտումներն էապես ազդել են թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա և ընդհանուր արդյունքն աղավաղված է»:

Լայն իմաստով ընտրական համակարգը հասարակական հարաբերությունների համակարգ է, որը կապված է հանրային իշխանության ընտրությունների հետ: Այդ հարաբերությունների ոլորտը բավականին լայն է: Այն ներառում է ընտրողների և ընտրվողների շրջանակի որոշման, ենթակառուցվածքների (ընտրական միավորների, ընտրական մարմինների ստեղծում և այլն) և այն հարաբերությունների հարցերը, որոնք ձևավորվում են ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլում մինչև դրա ավարտը: Ընտրական համակարգը կարգավորվում է ընտրական իրավունքի նորմերով, որը ընկալվում է որպես իրավական նորմերի համակարգ և իրենից ներկայացնում է սահմանադրական (պետական) իրավունքի ենթաճյուղ: Սակայն, ամբողջ ընտրական համակարգը չէ կարգավորվում ընտրական իրավունքի նորմերով: Այն ներառում է նաև այնպիսի հարաբերություններ, որոնք կարգավորվում են կորպորատիվ նորմերով (քաղաքական կուսակցությունների կանոնադրություններ և այլն), ինչպես նաև տվյալ հասարակության սովորույթներով ու ավանդույթներով²⁸:

Ընտրական համակարգը նեղ իմաստով քվեարկության արդյունքների որոշման եղանակն է, որի արդյունքում տեղի է ունենում թեկնածուների միջև մանդատների բաշխում՝ կախված ընտրողների կողմից նրանց տրված ձայներից²⁹: Սույն ուսումնական ձեռնարկի շրջանակներում ընտրական համակարգը դիտարկվելու է նեղ իմաստով:

Ինչպես նշվեց վերևում, ընդունված է տարբերակել մեծամասնական և համամասնական ընտրական համակարգերը, ինչպես նաև դրանց հիման վրա ստեղծված ընտրական համակարգերի

²⁸ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Учебник для вузов. Отв. редактор — доктор юридических наук А. В. Иванченко. — М.: Издательство НОРМА, 1999, с. 104.

²⁹ Маклаков В.В. Конституционное право зарубежных стран. Общая часть: [учеб. для студентов юрид. вузов и фак.] / В.В. Маклаков — М.: Волтерс Клувер, 2006, с. 511.

տարբեր ձևերը, որոնք ավելի հաճախ կոչվում են «խառը ընտրական համակարգեր»:

Պատմականորեն առաջինը *մեծամասնական ընտրական համակարգն էր*: Այն պարզ է և հասկանալի: Տվյալ ընտրական համակարգի շրջանակներում ընտրված է համարվում օրենքով սահմանված ձայների մեծամասնությունը հավաքած թեկնածուն: Կախված նրանից, թե որ մեծամասնությունն է պահանջվում ընտրվելու համար, առանձնանում են մեծամասնական ընտրական համակարգի 3 ենթատեսակներ.

1) *Հարաբերական մեծամասնության մեծամասնական համակարգ*: Հաղթելու համար թեկնածուին բավական է ավելի շատ ձայներ հավաքել, քան մրցակիցներից որևէ մեկը: Տվյալ ընտրակարգով քվեարկությունը միշտ արդյունավետ է. ընտրությունները համարվում են կայացած՝ անկախ դրանում ընտրողների մասնակցության տոկոսից, և միշտ կա հաղթող: Մեծամասնական ընտրակարգի այս տարատեսակի էական թերությունն այն է, որ հնարավորություն է տրվում ընտրվելու այն թեկնածուին, ում օգտին չի քվեարկել ընտրողների բացարձակ մեծամասնությունը:

2) *Բացարձակ մեծամասնության մեծամասնական համակարգը*: Ընտրված է ճանաչվում այն թեկնածուն, որը հավաքել է ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությունը: Մեծամասնական ընտրական համակարգի այս ենթատեսակի առավելությունն այն է, որ ընտրվածը պետք է ունենա ընտրողների ձայների իրական մեծամասնությունը: Այնուամենայնիվ, այս դեպքում քվեարկությունը միշտ չէ, որ արդյունավետ է, և հաճախ մեկ քվեարկության շրջանակներում անհնար է որոշել, թե ով է ընտրվել: Այն դեպքում, երբ թեկնածուներից որևէ մեկը չի ստացել բացարձակ մեծամասնություն, կազմակերպվում է երկրորդ փուլ, որտեղ սովորաբար մասնակցում են առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները: Այն թեկնածուն, ով երկրորդ փուլում ստանում է ձայների մեծամասնությունը, համարվում է հաղթող:

3) Որակյալ մեծամասնության մեծամասնական համակարգ:

Հաղթողին անհրաժեշտ է հավաքել նախապես հաստատված մեծամասնություն (օրինակ՝ Իտալիայում մինչև 1993 թվականի բարեփոխումներն ընտրվելու համար սենատորի թեկնածուները պետք է հավաքեին ձայների 65%-ը):

Մեծամասնական ընտրական համակարգի ամենաեական թերությունը մասնագետները համարում են փոքրամասնության կարծիքը հաշվի չառնելը, որը մեծամասնական ընտրակարգի շրջանակներում ոչ մի կերպ չի ներկայացվում ներկայացուցչական մարմնում, իսկ մեծամասնության օգտին չքվեարկած ընտրողների ձայները կորչում են: Մեծամասնական ընտրակարգի այս և այլ թերությունների մեղմմանն էր ուղղված *համամասնական ընտրակարգի առաջարկը*: Այս համակարգի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ ընտրություններից հետո կուսակցություններից յուրաքանչյուրը ստանում է մանդատների քանակ՝ հավաքած ձայների թվին համամասնորեն: Նման ընտրական համակարգը կարող է կիրառվել բացառապես հանրային իշխանության կոլեգիալ մարմնի ձևավորման ժամանակ: Ընդ որում, համամասնական ընտրական համակարգը կարող է կիրառվել ինչպես ամբողջ ներկայացուցչական մարմնի կամ դրա մի մասի (խորհրդարան, համայնքի ավագանի և այլն) ընտրության, այնպես էլ պալատներից մեկի կամ դրա մի մասի ձևավորման ժամանակ:

Համամասնական ընտրակարգով ընտրողը քվեարկում է միայն կուսակցության, այլ ոչ թե առանձին թեկնածուի օգտին: Քվեաթերթիկներում տպագրվում են ոչ թե թեկնածուների անունները, այլ կուսակցությունների անվանումները և առաջնորդների ազգանունները կամ կուսակցությունների ցուցակը գլխավորող թեկնածուների ազգանունները: Ցուցակը, ինչպես նաև թեկնածուների հերթակառությունը որոշում է տվյալ կուսակցության ղեկավարությունը:

Ընտրական համակարգերի ուսումնասիրությանը նվիրված են հայրենական և արտասահմանյան հեղինակների բազմաթիվ աշխատություններ³⁰:

³⁰ Տես, օրինակ՝ Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ. Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում / Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան.– Եր.: «Հայրապետ» հրատ., 2022, էջ 108-131, Հակոբյան Լ., Վարազյան Լ., Ասատրյան Ա., «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը.–Եր.: Հայրապետ հրատ., 2021, էջ 250-273, Այվազյան Ն.Ա., Օհանյան Մ.Ս. Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Մենագրություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 57-80, Թովմայան Հ.Վ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2000, Аватков В.А., Автономов А.С., Оленченко В.А. и др. Современные избирательные системы. Выпуск 17. Португалия, Турция, Эстония Учебное пособие. - М.: РЦОИТ, 2022; Филин Н.А., Кокликов В.О., Ходунов А.С. и др. Современные избирательные системы. Выпуск 16. Иран, Латвия, Литва Науч. ред. В.И. Лафитский. — М.: РЦОИТ, 2021; Современные избирательные системы. Вып. 15: Республика Беларусь, Боливия, Восточный Тимор / В.И. Лафитский, А.А. Автономов, Ю.В. Лафитская; Науч. ред. В.И. Лафитский, В.И. Лысенко. — М.: РЦОИТ, 2020; Лафитский В.И., Ефимова Л.М., Орлов А.Г. Современные избирательные системы. Выпуск 14: Узбекистан, Таиланд, Куба Учебное пособие. - М.: РЦОИТ, 2019; Базина О.О., Орлов А.Г., Демчук Д.С. и др. Современные избирательные системы. Выпуск 13: Китай, Парагвай, Швейцария Учебное пособие. - М.: РЦОИТ, 2018; Лафитский В.И., Крысенкова Н.Б. Современные избирательные системы. Выпуск 12: Мальта, Новая Зеландия Учебное пособие. - М.: РЦОИТ, 2017; Любарев А.Е. Избирательные системы: российский и мировой опыт/ РОО «Либеральная миссия»; Новое литературное обозрение, М., 2017 (источник: <https://litresp.ru/chitat/ru/%D0%9B/lyubarev-arkadij-efimovich/izbirateljniie-sistemi-rossijskij-i-mirovoj-opit> (дата обращения: 23.06.2023г.)); Ракитская И.А., Орлов А.Г., Ефимова Л.М. Современные избирательные системы. Выпуск 11. Нидерланды, Никарагуа, Сингапур Учебное пособие. - М.: РЦОИТ, 2016; Выборы в мире: избирательные системы / И.Б. Борисов, А.Г. Головин, А.В. Игнатов; под общ. ред. И. Б. Борисова. — СПб.: ИВЭСЭП, 2015;

Համամասնական ընտրակարգը նպաստում է փոքր կուսակցությունների ներթափանցմանը ներկայացուցչական մարմիններ,

Кузнецова Т.О., Ефимова Л.М., Орлов А.Г., Сапронова М.А. Современные избирательные системы. Вып. 10: Италия, Малайзия, Перу, Сирия Науч. ред. Иванченко А.В., Лафитский В.И. — М.: РЦОИТ, 2015; Ефимова Л.М., Ракитская И.А., Орлов А.Г., Половченко К.А. Современные избирательные системы. Выпуск 9: Индонезия, Словакия, Филиппины, Хорватия М.: РЦОИТ, 2014; Орлов А.Г., Мещерякова М.А., Павлов С.Я., Кузнецова Т.О. Современные избирательные системы. Вып.8: Бразилия, Франция, Чехия, Южная Корея М.: РЦОИТ, 2013; Сапронова М.А., Ракитская И.А., Орлов А.Г., Крысенкова Н.Б. Современные избирательные системы. Вып.7: Египет, Исландия, Колумбия, Пакистан М.: РЦОИТ, 2012; Торосян С.Л. Проблемы формирования и развития избирательной системы в Республике Армения // дисс. на соискание ... к.ю.н. по специальности 12.00.02 – Публичное право, Ереван, 2012; Водяницкая Е.А., Гвоздев П.С., Ракитская И.А., Орлов А.Г. Современные избирательные системы. Вып. 6: Австрия, Ирландия, Норвегия, Чили М.: РЦОИТ, 2011; Шлыкова Н.Б., Сапронова М.А., Орлов А.Г., Черепанова Е.В. Современные избирательные системы. Вып. 5: Индия, Ирак, Уругвай, ЮАР М.: РЦОИТ, 2010; Орлов А.Г., Лафитский В.И., Ракитская И.А., Кузнецова Т.О. Современные избирательные системы. Вып. 3: Испания, США, Финляндия, Япония М.: РЦОИТ: Типография «Новости», 2009; Современные избирательные системы. Вып. 4: Австралия, Венесуэла, Дания, Сербия / [Т.И. Чурсина, А.Г. Орлов, И.А. Ракитская, К.А. Половченко; науч. ред. А.В. Иванченко, В.И. Лафитский]. – М.: РЦОИТ: Ин-октаво, 2009; Мурадян М.О. Конституционно-правовые основы избирательной системы Республики Армения // Автореф. диссертации на соискание ученой степени канд. юр. наук по специальности 12.00.02 - конституционное право, муниципальное право, М., 2008; Елистратова В.С. Избирательная система России: конституционно-правовые основы и политическая практика // Дисс. на соискание ученой степени канд.юр.наук по специальности 12.00.02, Москва, 2008; Орлов А.Г., Лейбо Ю.И., Ракитская И.А. Современные избирательные системы. Вып. 2: Аргентина, Германия, Швеция М.: РЦОИТ: Норма, 2007; Лафитский Д.В., Касаткина Н.М., Орлов А.Г., Трещетенкова Н.Ю. Современные избирательные системы. Вып. 1: Великобритания, Канада, Мексика, Польша М.: РЦОИТ: Норма, 2006; Белов С.А. Избирательная система как правовой институт // Дисс. на соискание ученой степени канд.юр.наук по специальности 12.00.02, Санкт-Петербург, 2003 լի սլի:

ինչը, անկասկած, ողջունելի է իշխանության մարմիններում ամենալայն ներկայացուցչությունն ապահովելու տեսանկյունից: Բայց դա հղի է խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի միջև մշտական լարվածությամբ և տարբեր քաղաքական հարցերի շուրջ կոնսենսուս ձեռք բերելու դժվարություններով: Այս ամենը բարդացնում է խորհրդարանում կայուն մեծամասնություն ապահովելու հնարավորությունը, ինչը, բնականաբար, հանգեցնում է կառավարության անկայունության: Այս խնդրի լուծման համար համամասնական ընտրական համակարգ կիրառող երկրների մեծամասնության օրենսդրությամբ առաջարկվում է շեմ, որը պետք է հաղթահարել՝ թեկնածուների (կուսակցությունների) միջև մանդատների բաշխմանը հասանելիություն ստանալու համար: Ամենից հաճախ մանդատների բաշխումից բացառվում են այն կուսակցությունները, որոնք չեն հավաքել ձայների որոշակի տոկոսը. 8%՝ Լիխտենշտեյնում, 5%՝ Գերմանիայում և Հունգարիայում, 4%՝ Շվեդիայում և Իտալիայում, 3%՝ Իսպանիայում և Հունաստանում, 1%՝ Իսրայելում և այլն³¹: Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրներում այն երկրներում, որոնք կիրառում են համամասնական ընտրակարգը, գործող ընտրական շեմերը ներկայացված են հետևյալ շրջակայքերում. Ղազախստան, Ղրղզստան՝ 5%³², Մոլդովա՝ ընտրական դաշինք՝ 7%, կուսակցություն՝ 5%, անկախ թեկնածու՝ 2%, Ռուսաստան՝ 5% (պայմանով, որ նման ցուցակները երկուսից պակաս չեն և որ այդ ցուցակների օգտին տրվել են իրենց համակցությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ձայների 50 տոկոսից ա-

³¹ Маклаков В.В. Конституционное право зарубежных стран. Общая часть: [учеб. для студентов юрид. вузов и фак.] / В.В. Маклаков – М.: Волтерс Клувер, 2006, с. 537.

³² Աղբյուրը՝ <https://www.gov.kz/memleket/entities/karaganda-abai/documents/details/416476?directionId=25943&lang=ru#sub100000>; <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/7>; <http://kmir.tj/ru/2019/12/07/konstitutsionnyj-zakon-respubliki-tadzhiqistan-o-vyborah-madzhlisi-oli-respubliki-tadzhiqistan/> (դիմելու ամսաթիվը՝ 02.10.2023թ.)

վելին: Եթե նշված պահանջներն ապահովված չեն, ապա մանդատների բաշխմանը մասնակից են դառնում 5 տոկոսը չհաղթահարած կուսակցությունները³³:

Համամասնական ընտրական համակարգի շրջանակներում կուսակցությունները գրանցում են ընտրական ցուցակ, որի կազմմանը ընտրողն առավել հաճախ մասնակից չէ: Եթե համամասնական ընտրակարգի շրջանակներում օրենսդրությունը թույլ է տալիս ընտրողներին ազդել քվեարկության ընթացքում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների դասավորվածության վրա, ապա պետք է խոսել *ձկուն ցուցակների մասին*: Այն դեպքում, երբ ընտրողն օրենսդրորեն ապահովված հնարավորություն չունի որևէ փոփոխություն ազդելու կուսակցության ընտրական ցուցակներում թեկնածուի տեղի վրա, խոսքը *կոշտ ցուցակների մասին է*:

Ժամանակակից գրականության մեջ կան նաև ընտրական համակարգեր, որոնք չի կարելի վերագրել գուտ մեծամասնական կամ գուտ համամասնական ընտրակարգին: Որոշ հեղինակներ դրանք անվանում են ոչհամամասնական ընտրական համակարգեր³⁴, մյուսները՝ կիսամեծամասնական կամ կիսահամամասնական³⁵, մյուսները՝ նախահամամասնական³⁶: Դրանց թվին կարելի է դասել

³³ Մանրամասն տե՛ս՝ Лысенко В. Парламентские избирательные системы в государствах – участниках ОБСЕ // Աղբյուրը՝ <https://rfsv.ru/law/obuchenie/parlamentskie-izbiratelnye-sistemy-v-gosudarstvakh-uchastnikakh-obse> (դիմելու ամսաթիվը՝ 02.10.2023թ.)

³⁴ Տե՛ս, օրինակ՝ Избирательное право: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальности 030501 «Юриспруденция» / [А.С. Прудников и др.]; пол ред. К.К. Гасанова, А.С. Прудникова, В.А. Виноградова. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2013, с. 195.

³⁵ Տե՛ս, օրինակ՝ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Учебник для вузов. Отв. редактор — доктор юридических наук А. В. Иванченко. — М.: Издательство НОРМА, 1999, с. 114-117.

³⁶ Маклаков В.В. Конституционное право зарубежных стран. Общая часть: [учеб. для студентов юрид. вузов и фак.] / В.В. Маклаков – М.: Волтерс Клувер, 2006, с. 521-524.

միակ անփոխանցելի ձայնի համակարգը, սահմանափակ քվեի համակարգը, կուտակային քվեի համակարգը և այլն³⁷:

Ժամանակակից աշխարհում ընտրական համակարգերի բազմաթիվ վերափոխված տեսակներ կան: Գաղտնիք չէ, որ թե՛ մեծամասնական, և թե՛ համամասնական ընտրական համակարգերն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Երկու ընտրական համակարգերի թերությունները մեղմելու նպատակով շատ երկրների օրենսդիրներ հաճախ հակված են ամրապնդել դրանց համադրությունը, ինչը մեկ ընտրությունների շրջանակներում ավելի հաճախ անվանում են *խառը ընտրական համակարգ*³⁸: Ճիշտ այս մոտեցումն է ամրագրված ԱՊՀ մասնակից պետությունների համար Մոդելային ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 58-րդ կետում (ԱՊՀ Միջխորհրդարանական վերահեռողովի 2020 թվականի նոյեմբերի 27-ի N 51-15 որոշման հավելված), որի համաձայն՝ խառը ընտրակարգը ներկայացուցչական մարմինների ընտրությունների ժամանակ կիրառվող այն ընտրակարգն է, որի պարագայում պատգամավորների մի մասն ընտրվում է մեծամասնական,

³⁷ Մանրամասն տես՝ Авакьян С.А., Баженова О.И., Кененова И.П., Колюшин Е.И., Пешин Н.Л., Старостина И.А., Тимофеев Н.С., Троицкая А.А., Шевердяев С.Н. Право избирать и быть избранным в российских политических реалиях: основные конституционно-правовые проблемы. Учебно-методический комплекс. / Рук. авт. кол. и отв. ред. проф. Авакьян С.А. – М.: Юстицинформ, 2015, с. 454-463.

³⁸ Հարկ է նկատել, որ ոչ բոլոր հեղինակներն են համամիտ նման մոտեցման հետ: Այսպես, օրինակ, Կ.Կ. Գասանովը, Ա.Ս. Պրուդնիկովը, Վ.Ս. Վինոգրադովը նշում են, որ Ռուսաստանում 1993 թվականից մինչև 2006 թվական գործել է ոչ թե խառը ընտրակարգը, այլ կիրառվել են երկու ինքնուրույն ընտրակարգեր մեկ ընտրությունների շրջանակներում (Տես՝ Избирательное право: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальности 030501 «Юриспруденция» / [А.С. Прудников и др.]; пол ред. К.К. Гасанова, А.С. Прудникова, В.А. Виноградова. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2013, с. 203):

մյուս մասը՝ համամասնական ընտրակարգով»³⁹: Նման ընտրական համակարգ Հայաստանում գործում էր մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները: ԱՊՀ երկրներում այժմ խառը ընտրակարգ են կիրառում Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը: Շատ երկրներ կիրառում են խառը ընտրական համակարգեր (Գերմանիա, Վրաստան, Իտալիա 1993-2005 թթ., Եգիպտոս, Մակեդոնիա, Հարավային Կորեա, Ճապոնիա և այլն):

1.3. ԻՆՉ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ ընտրական համակարգերից յուրաքանչյուրը կարող է հավակնել քվեարկության և ձայների հաշվարկի «ճշգրիտ, օբյեկտիվ և հուսալի» համակարգ ապահովելու ունակ լինելուն: Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 2002 թվականի Քիշնևի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետն ամրագրելով հավասար ընտրական իրավունքը՝ նշում է. «1. Հավասար ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետևյալը. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն կամ մյուս քաղաքացիների հետ հավասար ձայներ և մյուս քաղաքացիների հետ հավասարապես իրավունք ունի՝ իրականացնելու իր քվեարկելու իրավունքը, ընդ որում՝ նրա ձայնը (ձայները) ունի նույն ազդեցությունը, ինչ մյուս ընտրողների ձայները, ընդ որում՝ պետությունում կիրառվող ընտրական համակարգը չպետք է ազդի ընտրողի ձայնի (ձայների) ազդեցության վրա.»⁴⁰:

³⁹ Աղբյուրը՝ https://iacis.ru/baza_dokumentov/modelnie_zakonodatelnie_akti_i_rekomendacii_mpa_sng/modelnie_kodeksi_i_zakoni (ղիմելու ամսաթիվը՝ 02.10.2023թ.)

⁴⁰ Աղբյուրը՝ www.arlis.am (ղիմելու ամսաթիվը՝ 02.10.2023թ.)

2002 թվականի Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» 4-րդ կետում ասվում է, որ «վերոնշյալ սկզբունքների պահպանման պայմանով կարող է ընտրվել ցանկացած ընտրական համակարգ»⁴¹: Վենետիկի հանձնաժողովի և Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) համատեղ եզրակացության մեջ ասվում է, որ «ընտրական համակարգի ընտրությունը պետության ինքնիշխան որոշումն է իր քաղաքական համակարգի միջոցով՝ լինելով ազգային ընտրության խնդիր՝ ոգեշնչված քաղաքական ավանդույթով»⁴² և որ «ցանկացած ընտրական համակարգ սկզբունքորեն ընդունելի է այնքան ժամա-

⁴¹ Свод рекомендуемых норм при проведении выборов, принят Венецианской комиссией на 52-й сессии (Венеция, 18–19 октября 2002 года) CDL-AD(2002)023rev // основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. – Кишинев : Cudrag, Изд. при поддержке ЕС и МИД Финляндии, 2016 (F.E.-P. «Tipografia Centrală»), с. 18.

⁴² Report on Proportional Electoral Systems: the Allocation of Seats inside the Lists (open/closed lists) CDL-AD(2015)001-e, կետ 9: Ств, օրինակ՝ CDL-AD(2017)012, Republic of Moldova - Joint opinion on the draft laws on amending and completing certain legislative acts (electoral system for the election of the Parliament), adopted by the Council for Democratic Elections at its 59th meeting (Venice, 15 June 2017) and by the Venice Commission at its 111th Plenary Session (Venice, 16-17 June 2017) CDL-AD(2017)012-e, կետեր 25-28, European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April 2016 (On the basis of comments by Mr Richard Barrett (Member, Ireland) Ms Paloma Biglino Campos (Substitute Member, Spain) Mr Evgeni Tanchev (Member, Bulgaria) Mr Kåre Vollan (Expert, Norway) Mr Vasil Vashchanka (Expert, OSCE/ODIHR) // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016 Strasbourg, Warsaw, 13 June 2016, CDL-AD(2016)019, կետ 27, Joint Opinion on the draft Law amending the electoral legislation of Moldova adopted by the Council for Democratic Elections at its 47th meeting (Venice, 20 March 2014) and by the Venice Commission at its 98th plenary session (Venice, 21-22 March 2014) CDL-AD(2014)003-e, կետեր 21 և 25:

նակ, քանի դեռ հարգում է ընտրությունների միջազգային չափանիշները»⁴³ և որ «մարդիկ պետք է վստահեն ընտրված համակարգին և դրա կիրառմանը»⁴⁴: Այս ամենով հանդերձ, հարկ է, սակայն, ընդունել, որ հայտնի ընտրական համակարգերի (մեծամասնական և համամասնական) գործնական կիրառման ժամանակակից տարատեսակությունը միշտ չէ, որ ապահովում է փաստացի ընտրազանգվածի «քաղաքական տրամադրության» հնարավորինս ճիշտ արտացոլումը:

Չէ՞ որ ընտրությունների ժողովրդավարական բնույթն ապահովելու համար անհրաժեշտ են ոչ միայն ընտրական իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ սկզբունքների պահպանումը, դրանց կազմակերպումն ու անցկացումը ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին համապատասխան, այլ նաև չափազանց կարևոր է, թե ինչպես համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի, գաղտնի քվեարկությամբ, ազատության և այլընտրանքային ընտրությունների, լայն թափանցիկության և իրազեկման շրջանակներում տրված ձայները կվերածվեն մանդատների⁴⁵:

Հայաստանի Հանրապետությունում 1991-2016 թվականներին անմիջական ընտրությունների միջոցով ընտրվել են Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովի պատգամավորները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրության հիման վրա ընտրական

⁴³ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք Ցուցումներ և Բացատրական զեկույց 190/2002 CDL-AD (2002) 23, Ընդունված Վենետիկյան հանձնաժողովի կողմից 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002թ. հոկտեմբերի 18-19):

⁴⁴ Report on Proportional Electoral Systems: the Allocation of Seats inside the Lists (open/closed lists) CDL-AD(2015)001-e, կետեր 9-13:

⁴⁵ Հակոբյան Լ., Վարազյան Լ., Սաստրյան Ա., «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը: – Եր.: Հայրապետ հրատ., 2021, էջ 252-254:

օրենսդրությունը սահմանում էր բացարձակ մեծամասնության մեծամասնական ընտրակարգը՝ նախագահական ընտրությունների համար, խառը ընտրակարգը՝ խորհրդարանական ընտրությունների համար, հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգը՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար, բացառությամբ Երևան քաղաքի, որտեղ 2008 թվականից հաստատվել է համամասնական ընտրակարգը՝ ավագանու ընտրությունների համար և քաղաքապետի անուղղակի ընտրությունները:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Հայաստանի Հանրապետությունում փոխվեց կառավարման ձևը և ամրագրվեց կառավարման խորհրդարանական ձևը: Բացի այդ, առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվեց ընտրական համակարգը: Մինչ այդ ժամանակահատվածը ՀՀ ընտրական իրավունքի ժամանակակից պատմության մեջ ընտրական համակարգի ընտրության հարցը որոշվում էր ՀՀ օրենսդրության մակարդակով:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կիսանախագահականից խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու հիման վրա համապետական ընտրությունների շրջանակներում սկսեց ընտրվել միայն խորհրդարանը, իսկ հանրապետության նախագահի համար, ինչպես նշված էր նախորդ մասում, նախատեսված են անուղղակի ընտրություններ:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար:

3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգրքով երաշխավորվում է կայուն խորհրդա-

րանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրությունների արդյունքում կամ քաղաքական կոալիցիայի ձևավորման միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրությունների երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորում: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմաններն ու կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»:

Այսպիսով, 2015 թվականի Սահմանադրական փոփոխություններն առաջին անգամ Սահմանադրության մակարդակով ամրագրեցին ընտրական համակարգը: Համաձայն ՀՀ Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի, որը դարձավ ՀՀ-ում ընդունված առաջին սահմանադրական օրենքը, նախատեսվեցին համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրությունների կազմակերպման և անցկացման իրավական կարգավորումները, կոալիցիաների ձևավորման, քվեարկության երկրորդ փուլի անցկացման օրենսդրական կառուցակարգերը և այլ կառուցակարգեր, որոնք երաշխավորում են «կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը»:

2015 թվականի Սահմանադրական բարեփոխումներից հետո ընդունվեց ՀՀ Ընտրական օրենսգիրքը, որը 2016 թվականի հունիսի 1-ից մտավ ուժի մեջ, համաձայն որի՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ նախատեսվում էր համամասնական ընտրակարգ, երբ ընտրողն ունի մեկ ձայնի իրավունք, որն իրավունք ունի տալու բացառապես ընտրություններում գրանցված կուսակցության կուսակցական ցուցակի օգտին, դրա հետ մեկտեղ, ընտրողը քվեարկության ժամանակ հնարավորություն ուներ քվեաթերթիկի հակառակ կողմում գտնվող կուսակցության տվյալ ընտրատարածքի տարածքային ցուցակում նշել իր նախապատվությունը ցուցակի թեկնածուներից: Ընտրողն ինքն էր որոշում՝ քվեաթերթիկում նախապատվությունը տալ այս կամ այն թեկնածուին, թե՛ ոչ: Ընդ որում, եթե ընտրողը քվեարկում էր կոնկրետ կուսակցության օգտին՝ առանց

որևէ նախապատվություն նշելու, ապա ձայնը համարվում էր տրված, իսկ քվեաթերթիկը՝ վավեր:

Խորհրդարանական ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգը վերանայվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք «Մահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքով, որն ընդունվել էր 2021 թվականի ապրիլի 1-ին և ուժի մեջ մտել 2021 թնականի ապրիլի 27-ից: Վերացվել էին կուսակցությունների տարածքային ցուցակները, ներդրվել էր դասական համամասնական ընտրակարգ՝ կոշտ ցուցակներով:

Պետք է խոստովանել, որ ընտրական համակարգի փոփոխությունը միշտ պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բազմաթիվ գործոններ: Համաձայնելով Ա.Ա. Մանասյանի կարծիքի հետ՝ իշխանության ներկայացուցչական բնույթի երաշխավորման տեսանկյունից ընտրական համակարգը փոփոխելիս անհրաժեշտ է հաշվի առնել առնվազն հետևյալ առանցքային հանգամանքները.

«1) նույն կանոնների և սկզբունքների վրա հիմնված ընտրական համակարգերը տարբեր երկրներում տարբեր ազդեցություն ունեն ընտրությունների արդյունքները կանխորոշելու տեսանկյունից, հետևաբար, նաև ներկայացուցչականության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից: Հետևաբար, այս համատեքստում առաջնահերթությունը ոչ թե այս կամ այն գոյություն ունեցող ընտրական համակարգի մեխանիկական արտատպումն է, այլ ընտրական համակարգի նախատեսումը՝ հաշվի առնելով կոնկրետ պետության պատմությունը, իրավական, քաղաքական համակարգերը և մշակույթը, ավանդույթները:

2) Առանցքային է այնպիսի ընտրական համակարգի նախատեսումը, որը կարող է երաշխավորել համապատասխան իրավակարգավորումների գրազիտության, ընտրությունների օրինականության և արդյունքների լեգիտիմության միջև պատշաճ հավասարակշռություն այն տեսանկյունից, որ ընտրովի մարմիններում թեկնածուների/քաղաքական ուժերի միջև տեղերի բաշխման պատկերը համար-

Ժեք լինի ընտրողների շրջանում նրանց ցուցաբերած իրական աջակցությանը: Այլ կերպ ասած՝ ընտրական համակարգը պետք է ընտրվի և իրացվի այն տրամաբանությամբ, որպեսզի ընտրական գործընթացների օրինականության և ընտրովի մարմինների լեգիտիմության միջև չառաջանա անջրպետ, և ընտրովի մարմինների կազմը, դրանցում ներկայացված քաղաքական ուժերն ու անձինք ներկայացված լինեն՝ քաղաքացիների կողմից ցուցաբերված աջակցությանը համապատասխան:

3) Ընտրական համակարգի ընտրությունն ու փոփոխությունը պետք է լինի քաղաքական ուժերի և հանրության միջև փոխհամաձայնության (կոնսենսուսի) արդյունք:

4) Քաղաքական իշխանությունն ու բոլոր քաղաքական ուժերը պետք է բարեխղճորեն իրացնեն ընտրական օրենսդրությունը»⁴⁶:

Կարելի է նշել ընտրական օրենսդրության նման փոփոխությունների ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքները: Այսպիսով, որպես դրական հետևանքներ պետք է նշել ընտրական համակարգի պարզեցումը, ինչն այն ավելի հասկանալի և ընկալելի է դարձնում ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), թեկնածուների, ընտրողների, ընտրական հանձնաժողովների և այլն: Սա թույլ է տալիս, առաջին հերթին, ընտրական իրավունքի հիմնական սուբյեկտներին՝ ընտրվողներին և ընտրողներին, նախապես մշակել իրենց հարաբերությունների և փոխգործակցության համապատասխան ռազմավարություններ և մտածել այդ ռազմավարությունների խթանման կառուցակարգեր, միջոցներ և եղանակներ: Ընտրական գործընթացի մասնակիցներին հասկանալի կլինի ապագա խորհրդարանի կազմը՝ հաշվի առնելով այն, որ կուսակցական ցուցակներում թեկնածուները նշված են որոշակի հաջորդականությամբ, որը փոփոխման ենթակա չէ: Ընտրական հանձնաժողովների համար ա-

⁴⁶ Ընտրական համակարգի ազդեցությունը ժողովրդաիշխանության իրացման գործում /– Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա., Սիմոնյան Տ.Վ., Եր.: «Հայրապետ» հրատ., 2022, էջ 69-70:

վելի հեշտ կլինի հաշվարկներ կատարել կուսակցությունների և դաշինքների միջև, հատկապես, յուրաքանչյուր կուսակցության ու դաշինքի ներսում մանդատների բաշխման վերաբերյալ:

Բացասական է, անկասկած, թեկնածուների հեռացումն իրենց ընտրողներից, նրանց միջև կապի թուլացումը, կուսակցական ցուցակի առաջին շարքերում տեղ չգտած թեկնածուների հետաքրքրության նվազումը, նաև տարածքային ներկայացուցչության մասշտաբի կրճատումը, քանի որ եթե ընտրողների նախասիրությունների շրջանակներում նրանք կարող էին որոշել «իրենց» թեկնածուի տեղը կուսակցական ցուցակներում և իրենց նախասիրությունների շրջանակներում «առաջ տանել» նրան, ապա փակ ցուցակներով դասական համամասնական համակարգի շրջանակներում կուսակցական ցուցակներում թեկնածուների հերթականության որոշումը հենց կուսակցության բացառիկ իրավասությունն է⁴⁷:

Եթե հակիրճ անդրադառնանք տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման վերաբերյալ ընտրական օրենսդրության պատմությանը, ապա պետք է նշել, որ ինքնին տեղական ինքնակառավարումը Հայաստանում ներդրվել է Հայաստանի անկախացումից հետո 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ: Սահմանադրության հիման վրա 1996 թվականի մայիսի 14-ին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը, որը իրավական հիմք է հանդիսացել 1996 թվականին Հայաստանի պատմության մեջ առաջին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար: 1996 թվականի «Տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին» օրենքը նախատեսում էր համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում բացարձակ մեծամասնության մեծամասնական ընտրակարգ՝ անհրաժեշտության դեպքում քվեար-

⁴⁷ Հակոբյան Լ., Վարազյան Լ., Սաստրյան Ա., «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը:–Եր.: Հայրապետ հրատ., 2021, էջ 266-267:

կույթյան երկրորդ փուլ անցկացնելու հնարավորությամբ, իսկ ավագանու անդամների ընտրության համար՝ հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգ: Միաժամանակ համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում ձևավորվել է մեկ միամանդատ ընտրատարածք, իսկ ավագանու անդամների ընտրությունների ժամանակ ձևավորվել են մեկ կամ մի քանի բազմանդատ ընտրատարածքներ՝ կախված ավագանու անդամների թվակազմից, որն իր հերթին օրենսդիրը կախման մեջ է դրել այս կամ այն համայնքի բնակչության թվակազմից: Ավագանու անդամների թիվը տատանվում էր 5-15 անդամների սահմաններում, ինչը սահմանվել էր 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 105-րդ հոդվածով: Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման ժամկետը նախատեսված էր երեք տարի: 1999 թվականին Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կողիֆիկացվել է ընտրական օրենսդրությունը, որի կապակցությամբ, ի թիվս այլ օրենքների, ուժը կորցրած է ճանաչվել նաև վերը նշված 1996 թվականի մայիսի 14-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը: 1999 թվականի Ընտրական օրենսգիրքը պահպանել է ընտրական համակարգերի հարցում հիմնական մոտեցումները՝ համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում փոխելով բացարձակ մեծամասնության մեծամասնական ընտրակարգը՝ անհրաժեշտության դեպքում քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու հնարավորությամբ, հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգով⁴⁸:

2008 թվականից Հայաստանում հնարավոր դարձավ համայնքային ընտրություններում համամասնական ընտրակարգի կիրառումը և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունների անց-

⁴⁸ Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ. Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում / Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան. – Եր.: «Հայրապետ» հրատ., 2022, էջ 109-110:

կացումը, քանի որ 2008թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվել է «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը նախատեսում էր համամասնական ընտրակարգ Երևանի ավագանու ընտրությունների շրջանակներում՝ քաղաքապետի անուղղակի ընտրություններով: Մինչ այս օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունում ավագանու ընտրություններն անցկացվում էին բացառապես մեծամասնական ընտրակարգով և բացառապես ուղղակի ընտրությունների շրջանակներում՝ անկախ ընտրվող մարմնից:


2011 թվականին ընդունվել է երկրորդ Ընտրական օրենսգիրքը, որը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կիրառվող ընտրական համակարգերի հարցում պահպանեց օրենսդրի նախկին մոտեցումները: 2016 թվականի երրորդ (գործող) Ընտրական օրենսգրքի շրջանակներում, ընդհանուր առմամբ, պահպանվել են առկա հիմնական իրավական մոտեցումները, սակայն համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների թվին, Երևանից բացի, օրենսդիրն ավելացրեց ևս երկու համայնք՝ Գյումրին և Վանաձորը (Հայաստանի մայրաքաղաքից հետո ամենախոշոր երկու քաղաքները)⁴⁹:

2020 թվականի հունիսի 18-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի հուլիսի 11-ից: Նշված օրենքը վերանայել է ընտրական համակարգը համայնքային ընտրությունների շրջանակներում: Այսպիսով, գործող Ընտրական օրենսգրքի համաձայն՝ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում ավագանին ընտրվում է համամասնական ընտրակարգով, իսկ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքներում՝ մեծամասնական ընտրակարգով: Ընդ որում, մինչև 4000 ընտրող ունեցող

⁴⁹ Նույն տեղում, էջ 120:

համայնքներում մեծամասնական ընտրակարգով ընտրվում է նաև համայնքի ղեկավարը՝ ուղղակի ընտրությունների շրջանակներում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են և մեծամասնական ընտրական համակարգը, և համամասնական ընտրական համակարգը: Եթե լրացնենք նախորդ պարբերությունում տրված սխեման՝ հաշվի առնելով կիրառվող ընտրական համակարգը, ապա այն կունենա հետևյալ տեսքը.



Այսպիսով, Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով Հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցական ցուցակներով առաջադրված պատգամավորների թեկնածուների թվից: Ազգային ժողովի ընտրություններում թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին 4 տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին 4 տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ընտրակարգով: Ավագանու ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգը որոշելու չափանիշ է հանդիսանում տվյալ համայնքում ընտրողների թվաքանակը:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրվելու իրավունք ունեն այն անձինք, ովքեր ունեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք: Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվո-

րական ծառայությունից գորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված,

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող)»:

ԳԼՈՒԽ 2.

ԸՆՏՐՈՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2.1. ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ԸՆՏՐՈՂ

Մինչ այս հարցին պատասխանելը մի փոքր պատմական շրջագայություն կատարենք և տեսնեք, թե ե՞րբ և որտե՞ղ են ի հայտ եկել «առաջին ընտրողները»:

Նորույթ բացահայտած չենք լինի, երբ ասենք, որ մարդու իրավունքների պատմական հայրենիքը Հռոմի և Հունաստանի անտիկ աշխարհն է: Քաղաքացիների կողմից քվեարկությամբ արտահայտված ժողովրդի կամքն օրենքի ուժ է ստացել Հին Հունաստանում և Հին Հռոմում⁵⁰, որտեղ ազատ քաղաքացիները պետք է մասնակցեին քաղաքական կյանքին՝ ներկա գտնվելով ժողովրդական ժողովներում: Հենց այդ ժամանակ առաջին անգամ ծագեցին ժողովրդավարության և քաղաքացիության մասին գաղափարները և սկզբունքները:

Հետևապես, կարող ենք ասել, որ ներկայիս ժողովրդավարության հիմքերը դրվել են Հին Հունաստանում և Հին Հռոմում՝ Ք.Ա. V-VI-րդ դարերում: Հին Հունաստանում են ծագել ժողովրդավարությանը բնորոշ առաջին հասկացությունները՝ օրենքի գերակայություն, պետական մարմինների ու պաշտոնյաների ընտրություն, քաղաքացիների մասնակցություն պետության կառավարմանը: Սակայն, անտիկ աշխարհում «քաղաքացիությունը» հիմնականում կապվում էր քաղաքական իրավունքների հետ՝ պետական գործերին, արդարադատությանը մասնակցելու իրավունք և այլն: Չնայած հին օրենքները հռչակում էին իրավունքների հավասարության գաղափարը, բայց դա առանձնահատուկ հավասարություն էր. հավասարություն ըստ արժանապատվության, այսինքն կախված էր անձնական ներդ-

⁵⁰ История Древней Греции / Ю.В. Андреев, Г.А. Кошеленко, В.И. Кузищин [и др.]; под ред. В.И. Кузищина. 3-е изд., перераб. и доп. М.: Высшая школа, 2001. С. 5.

րումից⁵¹: Այսպես, Հին Հունաստանում «ընտրելու» իրավունք ունեին, այսինքն՝ «ընտրող» կարող էին լինել միայն տղամարդիկ, ովքեր հասել էին որոշակի տարիքի, ունեին հողային սեփականություն և պիտանի էին զինվորական ծառայության:

Աթենքի ընտրություններն ուղղակի էին և անմիջական, իսկ ընտրական ընթացակարգերը բնականաբար ունեին այսօր գործող ժամանակակից ընտրություններից տարբերվող ձև ու բովանդակություն:

Հին Հունաստանում ընտրողները ընտրում էին բաց քվեարկությամբ, և գաղտնի քվեարկությամբ՝ վիճակահանությամբ: Բաց քվեարկության ժամանակ «քվեաթերթիկը» լոբիներ էին՝ սպիտակ լոբին նշանակում էր «կողմ», իսկ սևը՝ «դեմ»: Քվեարկությամբ նրանք ձևավորում էին պետական կառույցները, հաստատում կամ մերժում էին ընտրովի պաշտոնի թեկնածուներին: Աթենքում գործում էր հետևյալ սկզբունքը՝ ոչ մի պաշտոնյա չէր կարող ստանձնել իր պարտականությունները, եթե չէր անցել գործող ընտրական ընթացակարգերով: «Պաշտոնյա» և «ընտրյալ մարդ» հասկացությունները նույնական էին և «Ընտրողների» կողմից որևէ պաշտոնում ընտրված քաղաքացին չէր կարող հրաժարվել դրանից:

Եվ քանի որ իշխանությունը «Պաշտոնյային» տալիս էր միայն ժողովուրդը, ապա ժողովուրդն իրավունք ուներ նաև հեռացնելու ցանկացած պաշտոնյայի: Այդ գործընթացը ևս իրականացվում էր քվեարկությամբ, այս դեպքում՝ գաղտնի քվեարկությամբ, որը կոչվում էր «կափարիչի դատարան»: Քվեարկությունն անցկացվում էր հետևյալ կերպ՝ ընտրողը ստանում էր բեկոր և դրա վրա գրում այն «Պաշտոնյայի» անունը, ում անհրաժեշտ է համարում հեռացնել Աթենքից, իսկ հետո բեկորը տեղադրում էր հրապարակում՝ հատուկ պատրաստված տեղում: Ում անունն ամենա շատն էր կրկնվում նա ճանաչվում էր վտարված:

⁵¹ История политических и правовых учений: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. — 4-е изд., перераб. и доп. — М.: Норма, 2004.

Ժողովրդավարության սկզբունքներն ակտիվորեն կիրառվել են նաև Հռոմեական Հանրապետությունում (Ք.Ա. V-I դդ.), որտեղ օրենքները համարվում էին իրավական ինստիտուտների առաջատար ձևը: Դեռևս այդ ժամանակ Հին Հռոմում գործել են հատուկ օրենքներ՝ ժողովրդական ժողովների (comitia) անցկացման մասին, օրենքների ընդունման, պաշտոնյաների ընտրության կարգի մասին: Օրենքներով են սահմանվել թեկնածուներին ներկայացվող պահանջները, քվեարկության կարգը: Հին Հռոմում յուրաքանչյուր «ընտրող» քվեարկության օրը ստացել է մի փոքրիկ «քվեաթերթիկ», որի վրա գրել է թեկնածուի անունն ու դրել քվեատուփի մեջ:

Ինչպես նկատեցիք, անգամ անտիկ աշխարհում «ընտրող» դառնալու համար սահմանված են եղել որոշ կանոններ, որոնք ամրագրված են եղել օրենքներում: Այսօր ևս, ընտրական իրավունքին, ընտրողի կարգավիճակին վերաբերող հիմնական պահանջներն ու չափորոշիչները սահմանվում են օրենքով, և ոչ միայն տվյալ պետության իրավական ակտերով, այլ նաև մի շարք միջազգային փաստաթղթերով:

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական քաղաքականության իրացման և ընտրություններին երիտասարդների մասնակցության համար իրավական հիմք են հանդիսանում միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներն ու նորմերը, միջազգային պայմանագրերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը՝ ընդունված 2016 թվականի մայիսի 25-ին, «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը՝ ընդունված 2018 թվականի մարտի 23-ին, «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2018 թվականի հունիսի 13-ին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2002 թվականի մայիսի 7-ին, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2019 թվա-

կանի նոյեմբերի 14-ին, ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի ««Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 85-Ա որոշումը և այլ իրավական ակտերը:

Տեսնենք, թե ինչ միջազգային փաստաթղթերով են սահմանվում ընտրական իրավունքի հիմնական միջազգային չափորոշիչները:

Առաջին փաստաթղթերից մեկը, որն իրական ազդեցություն ունեցավ ժամանակակից սահմանադրական իրավունքի պատմական զարգացման գործընթացի և ազատության համար մղված պայքարի վրա՝ «Ազատությունների մեծ խարտիան» էր ընդունված Անգլիայում՝ 1215 թվականին: Այս իրավական ակտը ճանաչվում է որպես ժամանակակից ժողովրդավարության զարգացման կարևորագույն իրավական փաստաթուղթ: Քաղաքացիա-քաղաքական իրավունքներն ի սկզբանե ձևակերպվել են «Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում» (1789թ) և «Մարդու իրավունքների բիլլում» (1791թ):

Ներկայումս այդ իրավունքներն արտացոլված են տարբեր երկրների սահմանադրություններում և օրենքներում, ինչպես նաև միջազգային կոնվենցիաներում՝

- **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում**, որն ընդունվել և հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից

1948 թվականի դեկտեմբերի 10-ին: **Հռչակագրի** 21 հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր մարդ անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք ունի: Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այդ կամքը պետք է իր արտացոլանքը գտնի պարբերաբար անցկացվող և չկեղծված ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքների դեպքում, գաղտնի քվեարկությամբ կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարազոր ձևերի միջոցով»: Հռչակագրի 21-րդ հոդվածն առաջինն է ամրագրել մարդու՝ քաղաքական կյանքին մասնակցություն ունենալու իրավունքը՝ երկրորդ աշխարհամարտից հետո:

- **«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը»** որում ճշգրտվել և հստակեցվել են մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքները, այն ընդունվել է 1966 թվականի դեկտեմբերի 16-ի, սակայն ուժի մեջ է մտել 1976թ-ին: Այդ փաստաթղթի 25-րդ հոդվածում հռչակված են յուրաքանչյուր քաղաքացու քվեարկելու և ընտրվելու իրավունքը իրական պարբերաբար անցկացվող ընտրություններում, որոնք անց են կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ, և որոնք ապահովում են ընտրողների ազատ կամարտահայտությունը:

Ընտրական իրավունքի միջազգային չափանիշներ սահմանող հիմնարար փաստաթղթերից են նաև.

- **Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (ICERD)** ⁵² ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1965 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ է

⁵² International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-elimination-all-forms-racial>, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիա https://www.gov.am/u_files/file/kron/CERD%20Convention-armenian.pdf

մտել 1969 թվականի հունվարի 4-ից: Կոնվենցիայի 5-րդ հոդվածում, ի թիվս այլ իրավունքների, ուշադրությունը բևեռված է քաղաքական իրավունքների, մասնավորապես՝ ընտրություններին մասնակցելու, ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրելու և ընտրվելու, երկրի կառավարմանը, հանրային գործերին ցանկացած մակարդակով մասնակցելու իրավունքների բոլոր ձևերով **դրսևորվող ռասայական խտրականությունն արգելելուն ու վերացնելուն:**

- **Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականության վերացման մասին կոնվենցիայի**⁵³՝ ընդունված 18.12.1979թ., 7-րդ հոդվածով մասնակից պետությունների համար ամրագրված է պարտավորություն պետությունները⁵⁴ ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական ու հասարակական կյանքում, մասնավորապես՝ կանանց համար, տղամարդկանց հետ հավասար պայմաններով ապահովել. (ա) բոլոր ընտրություններում և հանրաքվեներում քվեարկելու, բոլոր պետական ընտրովի մարմիններում ընտրվելու իրավունքները, (բ) կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը մասնակցելու և կառավարման բոլոր մակարդակներով պետական պաշտոններ զբաղեցնելու և բոլոր պետական գործառույթներն իրականացնելու իրավունքները, (գ) երկրի հասարակական ու քաղաքական կյանքին առնչվող հասարակական կազմակերպությունների և միավորումների գործունեությանը մասնակցելու իրավունքը»:

- **Բոլոր տեսակ ռասայական խտրականության վերացման մա-**

⁵³ «Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women» New York, 18 December 1979, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-elimination-all-forms-discrimination-against-women>, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» Կոնվենցիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>

⁵⁴ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 13-ից:

սին կոնվենցիան՝ ընդունված 25.12.1965 թ-ին:

ՄԱԿ-ի կողմից մշակված այս փաստաթղթերում, ուշադրությունը բևեռված է ընտրություններին մասնակցելիս կանանց նկատմամբ խտրականության անթույլատրելիությանը և ռասայական խտրականությանը:

- **«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիան** (այսուհետ նաև՝ Ստանդարտների մասին Կոնվենցիա) ստորագրված 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնևում՝ առանձնահատուկ տեղ է գրավում միջազգային փաստաթղթերի շարքում՝ հաշվի առնելով ժողովրդավարական ընտրությունների ժամանակակից չափանիշների համապարփակությունն ու շրջանակը:

Ինչպես իր ողջունի խոսքում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիայի ստորագրման 20-ամյաին նվիրված՝ «Ժողովրդավարական ընտրությունների չափանիշների ԱՂՀ կոնվենցիա. բաց տարածություն միջազգային համագործակցության համար» Միջազգային գիտագործնական կոնֆերանսի շրջանակներում նշել է Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Է.Ա. Պամֆիլովան. «Այս փաստաթղթի մշակման և ընդունման յուրահատկությունը կայանում է նրանում, որ համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ իրականացվել է ժողովրդավարական ընտրությունների չափանիշների կոդիֆիկացիա միջպետական միավորման՝ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում՝ միջազգային իրավական ակտի՝ կոնվենցիայի ձևաչափով, որը կրում է պարտադիր բնույթ: Այսպիսիով, ԱՂՀ պետություններն իրենց ազգային ընտրական համակարգերը և իրավակիրառ պրակտիկական զարգացրել են իրավական կարգավորումների համապարփակ հայեցակարգի և մո-

դելի հիման վրա՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկություններն ու միջպետական ինտեգրման և համակարգման հեռանկարները»⁵⁵:

Համաձայնելով վերոնշյալ գնահատականի հետ՝ պետք է նշել, որ Ստանդարտների մասին Կոնվենցիան, իրոք, առանձնահատուկ է նրանով, որ մինչ օրս հանդիսանում է առավել համապարփակ միջազգային իրավական փաստաթուղթ, որը ներառում է ժողովրդավարական ընտրությունների չափանիշների ամենալայն թվարկը: Ընտրական իրավունքի ոլորտում այլ միջազգային իրավական ակտերը հաճախ սահմանափակվում են սուբյեկտիվ ընտրական իրավունքի համընդհանուր սկզբունքների ամրագրմամբ և միայն մասամբ են անդրադառնում օբյեկտիվ ընտրական իրավունքի սկզբունքներին: Հենց այս տեսանկյունից էլ կարել է Ստանդարտների մասին Կոնվենցիան ընդունել որպես ժողովրդավարական ընտրությունների չափանիշների կողիֆիկացիայի առաջին փորձ: Այսպես, 1948 թվականին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի որպես չափանիշներ առաջարկում է յուրաքանչյուր քաղաքացու քվեարկելու և ընտրվելու իրավունքը, պարբերական և չկեղծված ընտրությունները, համընդհանուր և հավասար ընտրական իրավունքը, գաղտնի քվեարկությունը: Ըստ էության, չափանիշների նման շրջանակ է սահմանված նաև 1966 թվականին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով, իսկ վերոնշյալ մյուս փաստաթղթերը պարունակում են չափանիշների ավելի նեղ շրջանակ: Ստանդարտների մասին Կոնվենցիան որպես այդպիսին առաջարկում է. «պետական իշխանության, տեղական ինքնակառավարման, ժողովրդավարական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում քաղաքացու

⁵⁵ Памфилова Э.А. Приветственное слово Председателя Центральной избирательной комиссии Российской Федерации // Научные труды Северо-Западного института управления РАНХиГС, Том 14, Выпуск 2 (59) (специальный), Санкт-Петербург, 2023, с. 15.

ընտրելու և ընտրվելու իրավունքը՝ ընդհանուր, հավասար, ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, ընտրողների կամքի ազատ արտահայտումն ապահովող պարբերական ու պարտադիր, արդար, իրական և ազատ ընտրությունների սկզբունքները, ընտրությունների թափանցիկ և հրապարակային բնույթը, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների դատական և այլ պաշտպանության, ընտրությունների հասարակական և միջազգային դիտարկման իրականացումը, ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները» (Ստանդարտների մասին Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ մաս): Այս շրջանակը հիմք հանդիսացավ Ստանդարտների մասին Կոնվենցիայի՝ ընդհանուր ընտրական իրավունքին, հավասար ընտրական իրավունքին, ուղղակի ընտրական իրավունքին, գաղտնի քվեարկությանը, ազատ, իրական, արդար ընտրություններին և ընտրական իրավունքի մյուս չափանիշներին նվիրված առանձին հոդվածների հիմնական դրույթների շարադրման համար:

Անդրադառնալով ժողովրդավարական ընտրությունների ժամանակակից չափանիշներին և ընտրական իրավունքի սկզբունքների՝ հետաքրքիր է իմանալ, որ առաջին երկիրը, որտեղ բոլոր չափահաս կանայք ընտրելու իրավունք են ստացել՝ Նոր Զելանդիան է (1893թ): 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ստեղծվել են մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնք պայքարել են կանանց տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունք ստանալու համար: Եվ Առաջին համաշխարհային պատերազմից հետո գրեթե բոլոր արևմտյան երկրներում կանայք ընտրական իրավունք ստացան: Բացառություն էին Ֆրանսիան և Շվեյցարիան: Ֆրանսիայում կանայք ընտրական իրավունք են ստացել 1944 թվականից, իսկ Շվեյցարիայում՝ 1979 թվականից: Այժմ կանայք ընտրելու իրավունք ունեն գրեթե բոլոր երկրներում:

Հայաստանում կանայք ընտրական իրավունք են ստացել Հա-

յաստանի առաջին հանրապետության ստեղծումից ի վեր: 1919 թ. Հայաստանում տեղի ունեցան առաջին ուղղակի խորհրդարանական ընտրությունները համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքին համապատասխան, այն է՝ 20 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձ ընտրելու իրավունք ուներ՝ անկախ սեռից, էթնիկ պատկանելությունից և կրոնական համոզմունքներից: 80 պատգամավորներից ձևավորված Խորհրդարանում ընտրվել էր 3 կին պատգամավոր՝ Կատարինե Զալյան-Մանուկյան, Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյան և Վարվառե Սահակյան:

Ժամանակակից ժողովրդավարական երկրներում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն երաշխավորված է ինչպես միջազգային իրավունքի նորմերով, այնպես էլ ազգային օրենսդրությամբ:

Մարդու իրավունքները բնական և անօտարելի իրավունքների և ազատությունների ամբողջություն են, որոնք մարդը ձեռք է բերում ի ծնե: Մարդու իրավունքները կախված չեն որևէ պետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքից (օրինակ՝ կյանքի իրավունք, ազատություն և այլն): Ի տարբերություն մարդու իրավունքների, քաղաքացու իրավունքներն անձին վերագրվում է միայն որևէ պետությանը պատկանելու ուժով և ընդգրկվում են անհատի և պետության հարաբերությունների ոլորտը:

Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները հանդիսանում են սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան: Սահմանադրական իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրավունքի համակարգում, քանզի սահմանադրական իրավունքի նորմերն ամրագրում են մեր հասարակության կյանքի բոլոր կողմերը, պետության խնդիրներն ու նպատակները, իշխանության իրականացման ձևերը, քաղաքացիների և պետության կապը, ինչպես նաև «քաղաքացի-պետություն» փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Մարդու իրավունքներն ու ազատություններն անձնական, քա-

ղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ իրավունքների և ազատությունների բարդ համակարգ է: Եվ երբ խոսք է գնում մարդու իրավունքների մասին, ապա օգտագործվում են «յուրաքանչյուր ոք իրավունք ունի», «բոլորը երաշխավորված են» և այլ ձևակերպումները, որոնք շեշտադրում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ցանկացած անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը, անկախ քաղաքացի, օտարերկրացի, թե քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու հանգամանքից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը տարբերակում է հիմնարար իրավունքներն ու ազատությունները մարդու և քաղաքացու իրավունքներից և ազատություններից: Նրանց տարբերություններն արտացոլված են Սահմանադրությունում. «իրավունքներ»՝ բոլորի համար, «քաղաքական իրավունքներ»՝ քաղաքացիների համար բանաձևով, թեև, նշված բանաձևում առկա են նաև որոշակի վերապահումներ:

Սահմանադրությամբ կարգավորվող իրավահարաբերություններն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են սահմանադրական իրավահարաբերությունների ծագմամբ և սուբյեկտային կազմով:

Առաջին առանձնահատկությունը դա սահմանադրական իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններն են, որոնք իրենց կարևորությամբ և առանձնահատկություններով էապես տարբերվում են իրավունքի մյուս ճյուղերի կողմից կարգավորվող հարաբերություններից: Սահմանադրությամբ են ամրագրվում պետության և քաղաքացիների միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների իրացումից ծագած հարաբերությունները:

Սահմանադրական իրավահարաբերությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ այդ հարաբերություններն ունեն հատուկ սուբյեկտներ: Դրանք են՝

- Ժողովուրդը,

- պետությունը (Հայաստանի Հանրապետությունը),
- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պաշտոնատար անձինք,
- պատգամավորները,
- ընտրական հանձնաժողովները,
- ՀՀ քաղաքացիները, օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք,
- քաղաքական կուսակցությունները,
- հասարակական կազմակերպությունները:

Մահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտների առանձնահատկությունն այն է, որ այդ սուբյեկտներից յուրաքանչ-յուրն ունի իրեն հատուկ իրավունքների ու պարտականությունների շրջանակ, այսինքն՝ միայն իրեն հատուկ իրավունակություն:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունը իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Մահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Մահմանադրական իրավունքի վերոնշյալ հիմնարար սկզբունքից հետևում է, որ ժողովուրդը, որպես սահմանադրաիրավական հարաբերությունների (որոնց տարատեսակ են հանդիսանում ընտրական իրավահարաբերություններ) հիմնական սուբյեկտ, առանձնահատուկ դիրք է գրավում: Նման առանձնահատուկ դիրքի հիմքում ժողովրդի առանձնահատուկ բնութագիրն է առ այն, որ պետության մեջ իշխանությունը հենց նրան է պատկանում: Հենց այս տեսանկյունից իրավունքի ոչ մի սուբյեկտ չունի և չի կարող ունենալ այնպիսի իրավունակություն, ինչպիսին ժողովուրդը:

Մահմանադրական իրավունքների մաս հանդիսացող քաղաքական իրավունքները քաղաքացիներին հնարավորություն են տալիս մասնակցելու երկրի հասարակական և քաղաքական կյանքին: Քաղաքական իրավունքներն ընդգրկում են հասարակության և պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը, ընտրական իրավունքները, միավորվելու իրավունքը (միավորումների ազատություն), հավաքների ազատությունը և տեղեկատվության ազատությունը: Քաղաքական իրավունքներով օժտված լինելը սովորաբար կապված է տվյալ պետության քաղաքացի հանդիսանալու հետ:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ առանձնացվում են ՀՀ քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատությունների հետևյալ տարատեսակները. ընտրական իրավունք (ընտրական իրավունքն ունի երկակի բնույթ. պասիվ ընտրական իրավունք՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու իրավունքը և ակտիվ ընտրական իրավունք՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացուցիչներ ընտրելու և դրանով պետության գործերին մասնակցելու իրավունքը), հանրաքվեի մասնակցելու իրավունք, խաղաղ հավաքների իրավունք և այլն:

ՀՀ Մահմանադրության 7-րդ և 48-րդ հոդվածներով ամրագրված է ընտրական իրավունքի բովանդակությունը, որը հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի համար: Այսպես, ՀՀ Մահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված է.

«Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

ՀՀ Մահմանադրության 48-րդ հոդվածն էլ ամրագրում է.

«1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնույթ տարին լրացած **Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:**

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ **ընտրելու** և ընտրվելու, **տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք** ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնույթ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

Ընտրական գործընթացում իրենց մասնակցությունն ունեն տարբեր սուբյեկտներ, որոնք ունեն հստակ սահմանված կարգավիճակ, լիազորություններ (իրավունքներ ու պարտականություններ):

Այնուամենայնիվ, ընտրական գործընթացի սուբյեկտների բազմազանության մեջ կենտրոնական դերակատարումը վերապահված է ընտրողին, ով իրականացնում է իր բարձրագույն ուղղակի

իշխանությունը ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու միջոցով:

Սովորաբար ժամանակակից և՛ օրենսդրությունը, և՛ տեսական գրականությունը կիրառում են «ընտրական իրավունք» եզրույթն երկու իաստով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքն ընտրական գործընթացների և սուբյեկտիվ ընտրական իրավունքի իրացման կարգավորմանն ուղղված իրավանորմերի համակցությունն է:

Սուբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը քաղաքացուն (երբեմն՝ անձին) պատկանող ընտրելու և ընտրվելու իրավունքն է, ինչպես նաև ընտրական գործընթացներին այլ կերպ՝ մասնակցությունն ապահովելուն ուղղված իրավունքների համակցությունը:

Քաղաքացիներն իրացնելով իրենց սահմանադրական իրավունքը, մասնակցում են ընտրություններին, առաջին հերթին ընտրողի կարգավիճակով, ովքեր հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների պարտադիր սուբյեկտներ, և նրանց բացակայության պարագայում ընտրական գործընթացը կորցնում է իր նշանակությունը⁵⁶:

Եվ այսպես, Հայաստանի Հանրապետությունում «Ընտրող» դառնալու համար պետք է ձեռք բերել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված «ակտիվ ընտրական իրավունք»:

Իսկ ի՞նչ է նշանակում ակտիվ ընտրական իրավունք

Ակտիվ ընտրական իրավունքը՝ ընտրելու իրավունքն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և Ընտրական օրենսգիրքը տարբեր մակարդակի ընտրությունների համար սահմանում են ընտրելու իրավունքի տարբեր սուբյեկտային կազմ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդ-

⁵⁶ Глотов С.А., Какителашвили М.М., Фомиченко М.П.. Избирательное право и избирательный процесс Учебное пособие / Под ред. д.ю.н. проф. С.А. Глотова. - М.: Международный юридический институт, 2013.

վածի 1-ին մասում ամրագրված է՝ «1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք»:

Այսինքն, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

ՀՀ քաղաքացիության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 1995 թվականի նոյեմբերի 16-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, նույնականացման քարտը:

Ի տարբերություն Ազգային ժողովի ընտրությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ բացի 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ընտրելու իրավունք ունեն համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող անձինք ևս: Ի դեպ, վերջիններս ստանում են ոչ միայն ակտիվ, այլ նաև պասիվ (ընտրվելու) ընտրական իրավունք, ինչպես նաև այն բոլոր իրավունքները, որոնցով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ օժտված են ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները:

Եվ այսպես, Ազգային ժողովի ընտրությանն իրենց մասնակցությունն ապահովելու համար ընտրողները պետք է բավարարեն առնվազն երկու նախապայմանի՝

- քվեարկության օրը լինեն տասնութ տարեկանը լրացած
- ունենան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն՝

- քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անց-

կացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝ մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

- քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝ մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրելու իրավունքի լիակատար իրացումն ապահովելու նպատակով օրենսդիրն Ընտրական օրենսգրքով առանձին իրավակարգավորում է սահմանել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, որոնց նստակեցության ցենզը (հաշվառված լինելու պայմանը)՝ քաղաքացու գործողություններից անկախ, հնարավոր չէ բավարարել: Այսպես, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն նաև մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված:

Ուլքե ր չունեն ընտրելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը և Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում են այն անձանց շրջանակը, ովքեր բոլոր ընտրությունների ժամանակ զրկված են և ակտիվ (ընտրելու), և պասիվ (ընտրվելու) իրավունքներից:

Այս կատեգորիայի մեջ նախ և առաջ ընդգրկված են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք և դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքներ

րի համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Ընտրելու իրավունքից զրկված չեն այն անձինք, ովքեր ինչ-ինչ հոգեկան հիվանդություններ ունեն: Քաղաքացին կարող է զրկվել ընտրելու և ընտրվելու իրավունքից միայն այն դեպքում, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ: Դատական կարգով անգործունակ ճանաչելը նախատեսվում է այն անձանց համար, ովքեր իրենց մտավոր կամ հոգեկան վիճակի պատճառով ունակ չեն լրիվ չափով և ամբողջությամբ գնահատել իրենց արարքները:

Ընտրելու և ընտրվելու իրավունքի սահմանափակումների մյուս խումբը վերաբերում է այն անձանց, ովքեր դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են ազատագրկման և գտնվում են ազատագրկման վայրերում: Պետք է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ եթե անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել ոչ ազատագրկման ձևով, ապա վերջինս պահպանում է իր ընտրելու և ընտրվելու իրավունքը:

Ընտրողների ցուցակներ և ինչու՞ են դրանք հարկավոր

Ընտրողների ցուցակներն անհրաժեշտ են՝ տեղամասային կենտրոնում քվեարկելու ժամանակ ընտրողին նույնականացնելու համար, ընտրական իրավունքի իրացման համար՝ քվեարկությանը մասնակցելու հնարավորություն տալու միջոցով, ընտրական իրավունքի պաշտպանության համար, և որպեսզի բացառվի ընտրելու իրավունք չունեցող անձանց մասնակցությունը քվեարկությանը:

Միջազգային պրակտիկայում գործում է ընտրողների ցուցակների կազմման երկու մոդել՝ առաջին դեպքում այն իրականացվում է պետության կողմից, պարտադիր կերպով, այսինքն իշխանական լիազորությամբ օժտված մարմինը իրականացնում է ընտրողների հաշվառումը, չհարցնելով ընտրողի կամքը՝ ցանկանում է նա արդյոք ընդգրկվել այդ ցուցակներում, թե՛ ոչ, իսկ երկրորդի պարագա-

յում ցուցակները կազմվում են բացառապես ընտրողների կողմից տրված համապատասխան դիմումների հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է առաջին տարբերակը:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Յուրաքանչյուր ընտրության դեպքում ընտրողը կարող է ընդգրկվել ընտրողների միայն մեկ ցուցակում և միայն մեկ անգամ և այս պահանջը պետք է խստագույնս պահվի հակառակ դեպքում կխախտվի ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը:

Ըստ էության, եթե բնակչության պետական ռեգիստրից հանենք մինչև 18 տարեկան քաղաքացիներին, ինչպես նաև դատական կարգով անգործունակ ճանաչված քաղաքացիներին ու ազատագրկման դատապարտված ու պատիժը կրող անձանց, ապա կստանանք ընտրողների ցուցակները՝ նախատեսված համապետական ընտրությունների համար:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին), որը պատասխանատու է ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:

Ընտրողների ռեգիստրը մշտական վարվող փաստաթուղթ լինելու պահանջը բնավ չի նշանակում, որ Լիազոր մարմինը պետք է ամեն օր ռեգիստրում փոփոխություններ կատարի: Լիազոր մարմին-

նը տարին երկու անգամ՝ հունիսին և նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների, էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական և անբաժանելի մասն է: Եվ յուրաքանչյուր ոք այցելելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում⁵⁷ գործող ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐ, կարող է ստուգել իր տվյալները, ինչպես նաև իրավունք ունի Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում⁵⁸ ներկայացնելու լիազոր մարմին:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող՝ քաղաքացիություն չունեցող ընտրողները Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում նրանց ընտրելու իրավունքը:

Պետք է իմանալ, որ անձին ընտրողների ցուցակում ընդգրկելը համարվում է նրա ընտրական իրավունքի իրավաբանական հաստատում: Անձը ստանում է ընտրելու իրավունք միայն այն բանից հետո, երբ իր անունն ընդգրկվում է ընտրողների ցուցակում, ուստի այս հարաբերությունները բավականին կարևոր են, քանզի փաստա-

⁵⁷ www.elections.am

⁵⁸ Նման դիմումը ներկայացնելիս պետք է նշել անհրաժեշտ հիմնավորումները և կցել փաստական հանգամանքների ապացույցները: Լիազոր մարմինը «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ռեգիստրում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

ցի միայն ցուցակում ընդգրկված լինելն է ընտրողին հնարավորություն տալիս քվեարկելու:

Ընտրողների ցուցակներում անձին ընդգրկելու հիմքը բնակչության պետական ռեգիստրն է, այսինքն քաղաքացիների հաշվառման ռեգիստրը: Ընտրողների ռեգիստրի կազմման հիմքում ընկած է անձի հաշվառման հասցեն. այսինքն՝ ընտրողը ընդգրկվում է այն համայնքի ընտրողների ցուցակում, որի տարածքում հաշվառված է: Այսինքն, ընտրողների ցուցակները կազմվում են ըստ համայնքների: Պետք է նկատել, որ ընտրողների ցուցակներում ընդգրկվում են ոչ միայն ցուցակների կազմման պահին ընտրական իրավունք ունեցող անձինք, այլ նաև բոլոր այն անձինք, ովքեր համապատասխան ընտրության քվեարկության օրը կունենան ընտրական իրավունք, այսինքն՝ քվեարկության օրը կլինեն 18 տարեկան:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են Ընտրական օրենսգրքի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք, որոնք քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ: Այս վերջին պայմանն Ընտրական օրենսգրքը սահմանում է 2021 թվականից:

Եվ քանի որ սահմանադրական հիմնարար իրավունքների սահմանափակումները պետք է սահմանված լինեն բառացառապես օրենքով, իսկ սահմանադրորեն ամրագրված իրավունքի սահմանափակումները պետք է պահպանեն իրավունքի համամասնության ու կայունության սկզբունքը, ապա Ընտրական օրենսգրքն իրավաչափորեն նախատեսում է նաև նորմ, ըստ որի ընտրողի անձը հաստատող անվավեր փաստաթուղթը հիմք չէ ընտրողին քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեղամասային կենտրոնում ընտրողի նույնականացումն ու գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումում առկա տեղեկությո-

յուններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավեր անձը հաստատող փաստաթուղթ: Իսկ ինչ է սա նշանակում: Այսպես, օրինակ, եթե ընտրողը չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ապա նա չի կարող մասնակցել Ազգային ժողովի ընտրություններին, իսկ եթե ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, բայց անձը հաստատող փաստաթուղթն անվավեր է, ապա նա չի ընդգրկվի ընտրողների հիմնական ցուցակում, սակայն կարող է քվեարկել լրացուցիչ ցուցակով, որը կազմվում է ընտրական տեղամասում՝ քվեարկության օրը: Կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ չունի անհրաժեշտ ժամկետով հաշվառում ընտրություն անցկացվող համայնքում, ապա նա զրկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքից, իսկ եթե ունի հաշվառում, բայց անձը հաստատող փաստաթուղթն անվավեր է, ապա նա ևս կարող է քվեարկել քվեարկության օրը ընտրական տեղամասում կազմվող լրացուցիչ ցուցակով:

Այսինքն, քաղաքական իրավունքների սահմանափակումները կիրառելիս պետք է պահպանվի օրինականության սկզբունքը և համամասնության սկզբունքը:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի իրացման համար ընտրական օրենսդրությամբ սահմանված են նաև որոշակի պայմաններ կամ սահմանափակումներ հետևյալ ընտրողների համար.

- 1) քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներ,
- 2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ,
- 3) քվեարկության օրը ընտրական տեղամաս ներկայանալու հնարավորություն չունեցող (հաշմանդամությամբ կամ հիվանդությամբ պայմանավորված) քաղաքացիներ:

Առաջին խմբի ընտրողների ցանկում ընդգրկվում են բացառապես Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողներն ու նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, ինչպես նաև օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները: Այս ընտրողները քվեարկում են էլեկտրոնային եղանակով⁵⁹:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պարագայում էլ, վերջիններս կարող են մասնակցել միայն Ազգային ժողովի ընտրություններին և սահմանված պայմանի համաձայն՝ քվեարկությանը մասնակցելու համար պետք է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ լիազոր մարմին ներկայացնեն դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին: Չնայած Ընտրական օրենսգրքին իրավաբանորեն ամրագրում է արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների ընտրելու իրավունքը, սակայն դրա իրացման համար նախատեսում է պայման, ըստ որի նրանք քվեարկության օրը պետք է գտնվեն ՀՀ տարածքում:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողները քվեարկությանը մասնակցում են շրջիկ արկղի միջոցով: Շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կազմակերպելու համար բժշկական հաստատության ղեկավարը Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում Լիազոր մարմին է ներկայացնում ստացիոնար բուժման մեջ գտնվող և քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող, ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների

⁵⁹ Այս հարցի վերաբերյալ առավել մասնրաման կխոսենք «Տեխնոլոգիաներն ընտրական գործընթացներում» գլուխ 4-ում:

ցուցակը: Լիազոր մարմինը, ըստ ներկայացված ցուցակների, ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողներին ժամանակավորապես հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և կազմում է ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակ⁶⁰:

Ընտրողների ցուցակների կազմման լիազորությունը Լիազոր մարմնի բացառիկ լիազորությունը չէ: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներ կազմում են նաև.

- քրեակատարողական հիմնարկների պետերը,
- ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները,
- գորամասերի հրամանատարները:

Ընտրողների ցուցակները կազմելն ու վարելը ընդհանուր ընտրական իրավունքի ապահովման գլխավոր գործիքներից մեկն է:

2.2. ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԻ ԸՆՏՐՈՂ

Ընտրողների իրավական կարգավիճակն ենթադրում է իրավունքների և պարտականությունների ամբողջություն, կապված ընտրական գործընթացների գործողությունների հետ: Ընտրողներն իրավունքներ և պարտականություններ իրականացնում են ընտրական գործընթացի գրեթե բոլոր փուլերում:

Նախ, խոսենք ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներից, որոնք ամրագրված են նաև ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածն ամրագրում է. «Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ

⁶⁰ 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հաղվածի 7-րդ մաս:

և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:»:

Ի՞նչ է նշանակում ընդհանուր ընտրական իրավունք

Ընդհանուր է այն ընտրական իրավունքը, որն ընտրական իրավունք է տալիս տվյալ երկրի չափահաս քաղաքացիներին, բացառությամբ, ինչպես արդեն նշել ենք, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձանց:

Ընդհանուր ընտրական իրավունք նշանակում է, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը ՀՀ օրենսդրության մեջ ամրագրվել է ավելի վաղ, քան այսօր ժողովրդավարական ավանդույթներ ունեցող շատ պետություններում: Այն ամրագրված է եղել դեռևս 1919 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Պառլամենտի ընտրության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածում ասվում էր. «ՀՀ Պառլամենտի անդամներին ընտրում է ազգաբնակչությունն առանց սեռի խտրության ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, ուղղակի ընտրության և գաղտնի քվեարկության միջոցով, գործադրելով համեմատական ներկայացուցչական սկզբունքը»:

Ի՞նչ է նշանակում հավասար ընտրական իրավունք

Ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության սկզբունքից:

Ակտիվ ընտրական իրավունքի մասով այս սկզբունքի կիրառումը նշանակում է, որ յուրաքանչյուր ընտրող քվեարկության ժամանակ ունի մյուսներին հավասար թվով ձայն, ներկայացուցչական

մարմնում հավասար ներկայացվելու, ինչպես նաև սուբյեկտիվ ընտրական իրավունքի իրականացման համար հավասար պայմանների իրավունք:

Ընտրողների ձայների քանակը պայմանավորված է այս կամ այն մարմնի ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգից: Այսօր Հայաստանում անցկացվող բոլոր ընտրությունների ժամանակ ընտրողն ունի մեկ ձայն: Իսկ երբ Հայաստանում Ազգային ժողովի ընտրության ժամանակ կիրառվում էր խառը ընտրական համակարգը՝ համամասնական և մեծամասնական, ընտրողն ուներ երկու ձայն, որոնցից մեկը տալիս էր մեծամասնական ընտրակարգով քվեարկվողին, իսկ մյուսը՝ համամասնական:

Ընտրական իրավունքի հավասարության սկզբունքից է բխում նաև յուրաքանչյուրի իրավունքը՝ հավասարապես ներկայացված լինել ընտրովի մարմնում: Հավասար ընտրական իրավունքն երաշխավորվում է թեկնածուների առաջադրման համար սահմանված կարգով, նախընտրական քարոզչությանը մասնակցելու հավասար հնարավորություններով:

Հավասարության սկզբունքի ապահովմանն է ուղղված նաև Ընտրական օրենսգրքի՝ ընտրողներին միայն մեկ ցուցակում ընդգրկելու պահանջը:

Ի՞նչ է նշանակում ազատ ընտրական իրավունք

Ազատ ընտրությունների իրավունքը նշանակում է, որ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ինքն է որոշում ընտրությանը իր մասնակցությունը և մասնակցելու դեպքում իր քվեարկությունը: Ոչ ոք, ոչ մի պատրվակով չի կարող պարտավորեցնել կամ հարկադրել ընտրողին իրացնելու իր ընտրական իրավունքը կամ բացահայտել իր քվեարկությունը: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին կամավոր է, այսինքն՝ քաղաքացին ինքն է որոշում մասնակցել ընտրություններին, թե՛ ոչ:

Ի՞նչ է նշանակում ուղղակի ընտրական իրավունք

Այս հարցին պատասխանելու համար, պետք է պարզել ընտրովի մարմինը ձևավորվում է անմիջականորեն ընտրողների կամաարտահայտության արդյունքում, թե դրանով ձևավորվում է միայն այն միջանկյալ մարմինը, որը պիտի ընտրի այդ մարմինը: Հետևապես, կարող ենք ասել, որ ընտրությունները լինում են ուղղակի և անուղղակի:

Ուղղակի ընտրություններն ապահովում են ուղղակի կապ ընտրողների և ներկայացուցչական մարմիններում իրենց ներկայացնողների միջև:

Հայաստանում Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից:

Քվեարկության գաղտնիության սկզբունք

Ազատ ընտրությունների գլխավոր նախապայմանը քվեարկության գաղտնիությունն է: Քվեարկության գաղտնիության սկզբունքը նշանակում է, որ ոչ ոք, բացի ընտրողից, իրավունք չունի իմանալու նրա կամաարտահայտության բովանդակությունը: Այս սկզբունքի պահպանումն ապահովելու համար պետությունից և ընտրությունները կազմակերպող մարմիններից պահանջվում է մի շարք ընթացակարգերի սահմանում և միջոցների ստեղծում, որոնք կբացառեն ցանկացած հսկողություն քվեարկության ընթացքի և ընտրողի կամաարտահայտության վրա: Այս սկզբունքի կատարումն ապահովելու համար ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանում է մի շարք մեխանիզմներ: Օրինակ՝ քվեարկության սենյակը պետք է կահավորվի այնպես, որ ընտրողը կարողանա քվեարկության սենյակում ներկա գտնվող անձանցից գաղտնի քվեարկել և այդ նպատակով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանվում է քվեարկության խցիկների տեղադրման կարգը, ըստ որի քվեարկության խցիկները պետք է տեղադրվեն միմյանցից առնվազն մեկ մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին

դեմքով, և բացառվի թիկունքում մարդկանց տեղաշարժը, ինչպես նաև ընտրողի ազատ կամքի արտահայտման նկատմամբ վերահսկողության ցանկացած հնարավորություն:

Հայաստանում արգելվում է լիազորված քվեարկությունը: Յուրաքանչյուր ընտրող քվեարկությանը մասնակցում և քվեարկում է անձամբ, նա որևէ կերպ չի կարող լիազորել⁶¹ որևէ անձի, որպեսզի վերջինս քվեարկի իր փոխարեն:

Քվեաթերթիկը լրացվում է բացառապես հատուկ կահավորված քվեարկության խցիկում: Համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների քվեարկության ժամանակ ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով, իսկ չօգտագործված քվեաթերթիկները զցում է քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ: Մեծամասնական ընտրակարգով քվեարկության ժամանակ ընտրողը քվեաթերթիկում կարող է կատարել միայն V ձևի նշան, այդ նշանից տարբերվող կամ քվեաթերթիկի վրա այլ (լրացուցիչ) նշան կամ գրառում կատարելու դեպքում տվյալ քվեաթերթիկը համարվում է անվավեր: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

Ընտրողը քվեարկելուց հետո իրավունք չունի քվեաթերթիկը ցույց տալու որևէ անձի, և դրան ընտրողին չի կարող հարկադրել ոչ ոք, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել և դիմում է ընտրական հանձնաժողովին նոր քվեաթերթիկ ստանալու համար:

⁶¹ Ի դեպ կան երկրներ, օրինակ՝ Անգլիան, որտեղ ընտրողները կարող են քվեարկել լիազորված (վստահված) անձի միջոցով: 2021 No. 391 POLICE, ENGLAND AND WALES REPRESENTATION OF THE PEOPLE The Representation of the People (Proxy Vote Applications) (Coronavirus) Regulations 2021

Քվեարկության գաղտնիության խախտում չի համարվում քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնելու համար այդ ընտրողի փոխարեն քվեարկելը: Այս դեպքում ընտրողին օգնող անձը պարտավոր է քվեարկել այն կերպ, ինչպես ցանկանում է ընտրողը և իրավունք չունի հրապարակելու այն: Քվեարկության գաղտնիության խախտում չի համարվում նաև ընտրական տեղամասի մուտքի մոտ անցկացվող հարցումը: Նախ, այս պարագայում ընտրողն է որոշում մասնակցել հարցմանը, թե՛ ոչ և երկրորդ՝ որ հարցին պատասխանել:

Ընտրողների բողոքարկման իրավունքը: ՀՀ Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը): Ընտրողների բողոքարկման իրավունքի մասին առավել մանրամասն ներկայացված է սույն աշխատության 3-րդ գլխում:

Ընտրողներն իրավունք ունեն ընտրությունների նշանակման հարցով դիմում ներկայացնել ընդհանուր իրավասության դատարան՝ այն դեպքում, երբ ընտրություններ չեն նշանակվել լիազոր մարմնի կամ համապատասխան պաշտոնատար անձի կամ ընտրական հանձնաժողովի կողմից:

Ընտրողները մի շարք իրավունքներ ունեն կապված ընտրական ցուցակների կազմման հետ: Ընտրողներն իրավունք ունեն ընդգրկվել ըստ հաշվառման կամ բնակության վայրի կազմվող ընտրողների ցուցակում, կամ ուղղակի ծանոթանալ այդ ցուցակներին: Ընտրողներն իրավունք ունեն դիմելու ընտրողների ցուցակները կազմող լիազորված մարմնին, եթե անճշտություններ են նկատել իրենց սվյալներում:

ՀՀ ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած, այդ թվում՝ դիմողի

անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին, ներառյալ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումները պետք է ապահովված լինեն էլեկտրոնային ստորագրությամբ: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 9 օր առաջ Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

Ընտրողները կարող են մասնակցություն ունենալ մի շարք ընտրական հանձնաժողովների ձևավորման գործընթացում, քանի որ ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվելով, ապահովվում է նրանց մասնակցությունը ընտրական գործընթացների կազմակերպմանը:

ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք: Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների, կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա:

Ընտրողներն իրավունք ունեն մասնակցել առաջադրված թեկնածուների կողմից կազմակերպված նախընտրական հավաքների կամ հանդիպումներին, ինչպես նաև հանդես գալ որպես առաջադրված թեկնածուների կամ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ:

Ընտրողներն իրավունք ունեն ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված չափով մուծումներ կատարել ընտրություններին մասնակ-

ցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և մեծամասնական ընտրակարգով քվեարկվող թեկնածուների նախընտրական հիմնադրամ:

Ընտրողների կողմից իրենց ընտրելու իրավունքի իրացման կարևորագույն պայմաններից է տվյալ ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգը: Այսպես, ընտրական համակարգի ընտրությունը և դրանով պայմանավորված քաղաքացիների կամարտահայտման իրական արդյունքի արտացոլման աստիճանը հանդիսանում է չափանիշ ընտրությունները «ազատ» որակելու համար, քանի որ հենց ընտրական համակարգն է որոշելու, թե ինչպես յուրաքանչյուր ընտրողի ձայնը կվերածվի մանդատի:

Աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ ընտրական համակարգերից ցանկացածը կարող է հավակնել նրան, որ ապահովի քվեարկության և ձայների հաշվարկի ճշգրտությունը, օբյեկտիվությունը և հուսալիությունը:

Չվիճարկելով «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ցուցումներ և բացատրական գեկույց» (CDL-AD (2002) 23)⁶² փաստաթղթի 4-րդ կետում շարադրված դրույթն առ այն, որ «նշված սկզբունքների պահպանման պայմաններում կարող է ընտրվել ցանկացած ընտրական համակարգ», անհրաժեշտ է, սակայն ընդունել, որ հայտնի ընտրական համակարգերի (մեծամասնական և համամասնական) կիրառման ժամանակակից տարբերակները ոչ միշտ են ա-

⁶² Свод рекомендуемых норм при проведении выборов, принят Венецианской комиссией на 52-й сессии (Венеция, 18–19 октября 2002 года) CDL-AD(2002)023rev // основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. – Кишинев: Cudrag, Изд. при поддержке ЕС и МИД Финляндии, 2016 (F.E.-P. «Tipografia Centrală»), с. 18.

պահովում փաստացի ընտրողների «քաղաքական տրամադրությունների» առավելագույն ճիշտ արտացոլումը:

Ընտրությունների ժողովրդավարական բնույթն ապահովելու համար ոչ միայն անհրաժեշտ է ընտրական իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ սկզբունքների պահպանումը, դրանց կազմակերպումն ու անցկացումը ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափորոշիչներին համապատասխան, այլ նաև շատ կարևոր է, թե ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի շրջանակներում գաղտնի քվեարկության, ընտրությունների ազատության և այլընտրանքայնության, լայն թափանցիկության և տեղեկացվածության պայմաններում տրված ընտրողների ձայները ինչպես են վերածվելու մանդատների:

Գաղտնիք չէ, որ և՛ մեծամասնական, և՛ համամասնական ընտրական համակարգերն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Երկու ընտրական համակարգերի թերությունների մեղման նպատակով շատ երկրների օրենսդիրները հաճախ հակված են խառը ընտրական համակարգ ամրագրելուն (Գերմանիա, Վրաստան, Իտալիա 1993-2005թթ., Եգիպտոս, Մակեդոնիա, Հարավային Կորեա, Ճապոնիա և այլն): Այդպիսի ընտրական համակարգ գործել է նաև Հյաստանում մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները: Հայաստանի Հանրապետությունում 1991-2016թթ. ուղղակի ընտրությունների միջոցով ընտրվել կամ ձևավորվել են Հանրապետության Նախագահը և ՀՀ խորհրդարանը՝ Ազգային ժողովը:

Ամրագրված մոտեցումը փոխվեց 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի արդյունքներից հետո: Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի արդյունքներով պայմանավորված տեղի ունեցավ կառավարման ձևի փոփոխություն. կիսանախագահական կառավարման ձևից անցում կատարվեց խորհրդարանական կառա-

վարման ձևի, ինչը հանգեցրեց առաջնային մանդատով օժտված պետական կառավարման մարմինների ցուցակի վերանայմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում անցկացվում է միայն մեկ համապետական ընտրություն՝ Ազգային ժողովի ընտրություններ: Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

Հայաստանում խորհրդարանի ձևավորման համար կիրառվում է համամասնական ընտրակարգը մաքուր ձևով, երբ ընտրողն ունի միայն մեկ ձայնի իրավունք, որը նա կարող է տալ բացառապես ընտրություններին մասնակցելու համար գրանցված կուսակցության կամ կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի օգտին:

Ընտրողի իրազեկված լինելու իրավունք

Ընտրական գործընթացներում առանձնահատուկ դեր և նշանակություն ունի հրապարակայնության սկզբունքը, որն իր կարևորությամբ չի զիջում ընտրական իրավունքի մյուս սկզբունքներին, քանզի անմիջականորեն բխում է Սահմանադրության 51-րդ հոդվածով ամրագրված՝ տեղեկություններ ստանալու իրավունքից և երաշխավորում է ընտրությունների բոլոր փուլերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Ընտրությունները կարող են գնահատվել և որակվել որպես ազատ ու ժողովրդավարական, եթե ողջ գործընթացի վերաբերյալ քաղաքացիներն իրազեկված են և կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով իրացնել իրենց ընտրական իրավունքները, մասնակցել գործընթացներին՝ ընդհուպ որոշումների կայացմանը: Միայն հրա-

պարակային ընտրական գործընթացները կարող են երաշխավորել օբյեկտիվ կամաարտահայտության ձևավորումը և պատահական չէ, որ ընտրությունների անցկացման հիմնարար սկզբունքների հիմքում դրվում են ընտրությունների ժամանակ տեղեկատվության ազատությունը և կարծիք արտահայտելու իրավունքը:

Ընտրությունների հրապարակայնությունը կարելի է բաժանել երկու մասի՝ ընտրողների իրազեկվածություն և նախընտրական քարոզչություն:

Ընտրողների իրազեկվածությունը՝ որպես ընտրությունների հրապարակայնության բաղադրիչ կարելի է դասակարգել տարբեր հիմքերով. պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող իրազեկում, ՋԼՄ-ների կողմից իրականացվող իրազեկում, ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից իրականացվող իրազեկում և այլն:

Ընտրությունների ժամանակ տարածվող տեղեկատվությունը կարող է լինել ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական: Բոլոր պարագաներում պաշտոնական տեղեկությունը պետք է լինի ստույգ, արժանահավատ, անկողմնակալ և անաչառ: Ընտրողների պաշտոնական իրազեկումը սկսվում է ընտրությունների նշանակումից և ավարտվում ընտրությունների արդյունքների ամփոփումով:

Ընտրությունների ժամանակ պաշտոնապես հրապարակվում են՝ ընտրական հանձնաժողովների՝ ընտրությունների կազմակերպման հետ կապված որոշումները, ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների հասցեները, ընտրողների ցուցակները, ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը, թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը, նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների և կուսակցությունների կողմից կատարված ծախսերը, քվեարկության տեղի և ժամանակի մասին տեղեկատվությունը, քվեարկության և ընտրությունների արդյունքները:

Ի տարբերություն պաշտոնական տեղեկատվության, ոչ պաշտոնական իրազեկումը իրականացվում է օրենքով նախատեսված այլ սուբյեկտների և այլ եղանակների միջոցով՝ դիտորդներ, լրագրողներ և այլն: Ոչ պաշտոնական իրազեկումը իրականացվում է նախընտրական քարոզչության լուսաբանման, տարբեր հարցումների հրապարակման, կուսակցությունների և թեկնածուների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և այլ եղանակներով:

Հրապարակայնության ապահովման նպատակով ընտրական հանձնաժողովների աշխատանքներին թույլատրված է մասնակցելու անձանց բավականին լայն շրջանակի (վստահված անձեր, դիտորդներ, ՁԼՄ ներկայացուցիչներ, այցելուներ), որոնք թեպետ իրավասու չեն մասնակցելու որոշումների ընդունմանը, սակայն նրանց գործունեության նկատմամբ իրականացնում են հանրային վերահսկողություն:

Հրապարակայնությունը երաշխավորում է քաղաքացիների իրազեկված լինելու իրավունքը, որը պատշաճ երաշխիք է ինչպես հանրային վերահսկողություն իրականացնելու, այնպես էլ իր ընտրական իրավունքն իրացնելու և հնարավոր խախտումներից ապահովագրելու համար:

2.3. ԻՆՉ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԸՆՏՐՈՂԸ

Ինչպես արդեն նշել ենք, ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ինքն է որոշում ընտրությանը իր մասնակցությունը, այսինքն՝ քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին կամավոր է: Ընտրական օրենսգիրքը սահմանում է, ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա:

Այդուհանդերձ, անգամ կամավորության սկզբունքի հիման վրա ընտրություններին մասնակցելը կարելի է համեմատել պարտականության հետ, քանզի ընտրական գործընթացներին, ընտրություններ-

րին մասնակցելը ոչ միայն երկրի կյանքի կարևորագույն հարցերի շուրջ սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն է, այլ նաև գիտակցված պատասխանատվություն սեփական որոշման համար:

Ընտրողները որպես սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցներ հանդիսանալով ընտրական իրավունքի սուբյեկտներ ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև՝ պարտականություններ և պատասխանատվություն դրանց իրացման համար:

Այսպես, ընտրական տեղամասում՝ քվեարկության ընթացքում ընտրողը պարտավոր է կատարել որոշակի գործողություններ օրենքով սահմանված կարգով և հաջորդականությամբ, մասնավորապես՝

- Ընտրողը քվեարկության պետք է ներկայանա սահմանված անձը հաստատող փաստաթղթով: Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը, ոչ կենսաչափական անձնագիրը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից, քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, իսկ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասի կազմված ընտրողների ցուցակում: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քաղաքացիություն չունեցող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ է համարվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթերից որևէ մեկը:

- Ընտրողը պետք է մոտենա տեղամասում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետին և ներկայացի անձը հաստատող փաստաթուղթը: Այն դեպքում, երբ էկրանին հայտնվում է կանաչ նշան, ընտրողը պետք է ներմուծի իր աջ ձեռքի ցուցամատի

մատնահետքը: Դրա անհնարիության դեպքում մատնահետքը ներմուծվում է Ընտրական օրենսգրքով սահմանված հաջորդականությամբ: Մատնահետքը ներմուծելու անհնարիության դեպքում մատնահետք ներմուծման քայլը բաց է թողնվում:

- Ընտրողը պետք է մոտենա ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին և ստորագրի իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում:

- Ստորագրելուց հետո ընտրողը պետք է մոտենա հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ներկայացնի քվեարկության կտրոնը: Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ ընտրողին տրամադրվում է ընտրությունների մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար: Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկներն ստանալուց, նա պարտավոր է վերցնել բոլոր քվեաթերթիկները: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրողին է տրամադրվում մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար (միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում՝ քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ):

- Ընտրողը պետք է քվեարկի քվեարկության խցիկում՝ գաղտնի:

- Քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը պետք է մոտենա քվեատուփի մոտ ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան հանձնի քվեարկության կտրոնը: Հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնաստանձվող

դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողը քվեարկության ծրարը գցում է քվեատուփի մեջ:

- Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից և իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:

ՀՀ Ընտրական օրենսգիրքը սահմանում է մի շարք սահմանափակումներ և պարտականություններ ընտրողների որոշակի խմբերի համար պասիվ ընտրական իրավունքի իրացման դեպքում, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Այսպես, թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք:

Պասիվ ընտրական իրավունքի պարագայում հավասարության սկզբունքի ապահովմանն է ուղղված բոլոր թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին, դաշինքներին հավասար իրավունքներ տալու և վերջիններիս վրա հավասար պարտականություններ դնելու պահանջը:

Պասիվ ընտրական իրավունքի համար օրենքով սահմանված սահմանափակումները չպետք է դիտարկվեն որպես իրավահավասարության սկզբունքի խախտում և ընտրողների առջև պարտականությունների չկատարում, ընդհակառակը՝ նրանց սահմանումը միտված է տարբեր թեկնածուների միջև հավասարության ապահովմանը: Թեկնածուն իրավունք չունի օգտագործելու իր ծառայողական կամ պաշտոնական դիրքը՝ մյուս թեկնածուների նկատմամբ առավելություն ստանալու նպատակով:

ՀՀ Ընտրական օրենսգրքը 2021 թվականից առաջին անգամ սահմանում է վարչական ռեսուրսի հասկացությունը և այն սուբյեկտներին, որոնք պետք է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պահպանեն սահմանված կանոնները: ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Եվ արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսներն օգտագործելը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս,

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս,

3) դատավորներին, դատախազներին, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական

հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննչական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ, քննիչներ),

4) ընտրական հանձնաժողովների անդամներին,

5) բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին,

6) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց: Այս դեպքում Ընտրական օրենսգիրքը նախատեսում է բացառություն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, սակայն ընտրական իրավունք ունեցող անձանց համար, քանզի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Ընտրական օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձանց վրա,

7) մարդու իրավունքների պաշտպանին,

8) կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին,

9) հաշվեքննիչ պալատի անդամներին,

10) հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին,

11) ինքնավար մարմինների անդամներին,

12) Բարձրագույն դատական խորհրդի անդամներին,

13) Հանրապետության նախագահին,

14) դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

Իսկ Ազգային ժողովի պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը, սակայն վերջիններս պարտավոր են պահպանել թեկնածուների միջև հավասարության սկզբունքը և գերծ մնալ վարչական ռեսուրսների օգտագործումից:

Իսկ հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար,

2) արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների:

Եթե իրականացվում է հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուի այլ գործունեության լուսաբանում, ապա վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների գործունեությունը լուսաբա-

նելիս՝ Ընտրական օրենսգրքով սահմանված լուսաբանման հավասարության ոչ խտրական սկզբունքը պահպանելու համար:

ՀՀ օրենսդրությունը ընտրական իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների համար նախատեսում է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն:

Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ քարոզչության համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

Կամ քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանում է նախընտրական քարոզչություն իրականացնելու կարգը, որն էլ հանդիսանում է նշված վարչական զանցանքի օբյեկտը:

Նշված զանցանքը կարող է տեղի ունենալ հետևյալ գործողություններով՝

1. քվեարկության կամ դրան նախորդող օրը հրապարակային ելույթների միջոցով քարոզչություն կատարելով,

2. քվեարկության կամ դրան նախորդող օրը հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելով:

ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Ընտրական իրավունքի դեմ որոշակի խումբ ոտնձգությունների համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 210-224-րդ հոդվածներով նախատեսվում են քրեական պատիժներ, որոնք զետեղված են «Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 28-րդ գլխում:

ԳԼՈՒԽ 3.

ԵՐԻՏԱԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

3.1. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ընտրական գործընթացն ավանդաբար դիտարկվում է լայն և նեղ իմաստով: Տվյալ ձեռնարկի շրջանակներում հետաքրքրություն է ներկայացնում ընտրական գործընթացը նեղ իմաստով, որը բնութագրվում է իբրև ընտրությունների նախապատրաստմանը, կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված ընթացակարգերի և միջոցառումների համալիր, որոնք իրականացվում են որոշակի ժամանակահատվածում ընտրական գործընթացի սուբյեկտների կողմից: Ընտրական գործընթացը բաղկացած է միմյանց հաջորդող մի քանի փուլերից: Եվ եթե այն հարցում, որ ընտրական գործընթացի առաջին փուլ է հանդիսանում ընտրությունների նշանակումը, վեճ առկա չէ, ապա այլ փուլերի, դրանց քանակի վերաբերյալ հարցերում ընտրական իրավունքի բնագավառում գիտնականների և փորձագետների կարծիքները տարբերվում են: Այսպես, եթե հեղինակների մի մասն ընտրական գործընթացի փուլ է համարում ընտրատարածքների, ընտրական հանձնաժողովների ձևավորումը⁶³, ապա հեղինակների մեկ այլ խումբ նշված գործողություններն ու ընթացակարգերը չեն համարում ընտրական գործընթացի փուլ⁶⁴:

⁶³ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации : учеб. пособие / М.С. Савченко, Т.Ю. Дьякова [и др.] ; под общ. ред. М. С. Савченко. – Краснодар : КубГАУ, 2015, с. 41-44.

⁶⁴ Օրինակ՝ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации: Учебник для вузов / Отв. редактор - А.В. Иванченко. - М.:НОРМА, 1999, с. 219; Избирательное право: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальности 030501 «Юриспруденция» / [А.С.

Ընտրական գործընթացի փուլերը միասնական գործառնությանն նշանակությամբ միավորված ընտրական գործողությունների և գործընթացների առանձնացված համակցություն է, որը հաջորդաբար իրացվում է ընտրական գործընթացի սուբյեկտների հատուկ շրջանակի կողմից՝ ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ ընտրությունների վերջնական նպատակին՝ պատգամավորների կամ այլ ընտրովի պաշտոնատար անձանց ընտրվելուն հասնելու համար⁶⁵:

Սկզբունքորեն համաձայնելով նման մոտեցման հետ՝ հարկ է սակայն, նշել, որ, մեր կարծիքով, որպես ընտրական գործընթացի փուլ պետք է առանձնացվեն միայն նրանք, որոնք նշագծում են հիմնական ընտրական իրավունքների իրացումը, առանց որոնց դրանց իրացումը հնարավոր չի լինի ապահովել: Այս տեսանկյունից ընտրությունների կազմակերպման տեխնիկական և, մասամբ, տեղեկատվական ապահովումը չեն դիտարկվելու որպես ընտրական գործընթացի ինքնուրույն փուլ:

Վերոգրյալի հաշվառմամբ և տեսական մոտեցումների ու Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծության հիման վրա՝ կարելի է առանձնացնել ընտրական գործընթացի հետևյալ փուլերը.

- 1) ընտրությունների նշանակումը,
- 2) թեկնածուների (թեկնածուների ցուցակների) առաջադրումը,
- 3) թեկնածուների (թեկնածուների ցուցակների) գրանցումը,
- 4) նախընտրական քարոզչությունը,
- 5) քվեարկությունը,

Прудников и др.]; пол ред. К.К. Гасанова, А.С. Прудникова, В.А. Виноградова. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2013, с. 250 и др.

⁶⁵ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации : учеб. пособие / М.С. Савченко, Т.Ю. Дьякова [и др.] ; под общ. ред. М. С. Савченко. – Краснодар : КубГАУ, 2015, с. 40.

6) քվեարկության, ընտրությունների արդյունքների որոշումը և դրանց հրապարակումը:

Ընդ որում, կախված համապատասխան ընտրական հանձնաժողովների կողմից ընդունվող որոշումներից և դատարանների կողմից ընդունվող ակտերից՝ հնարավոր է քվեարկության երկրորդ փուլի, վերաքվեարկության անցկացում, ինչպես նաև նոր ընտրությունների կամ նոր հերթական ընտրությունների նշանակում:

Ընտրական գործընթացի փուլերի գործառնական նշանակությունը կայանում է տարաբնույթ ընտրական գործողությունների և ընթացակարգերի՝ ժամանակի մեջ հետևողական և ըստ բովանդակության փուլային կատարման մեջ, որոնք ապահովում են ընտրությունների և համապատասխան ընտրովի անձանց ընտրվելու լեգիտիմ բնույթը: Ընտրական գործընթացի կազմակերպման մի շարք տարրեր կրում են սպասարկող, օժանդակող (տեխնոլոգիական) բնույթ: Այսպես, ընտրությունների անցկացումը հնարավոր չէ առանց դրանց ժամանակին իրականացվող ֆինանսավորման: Այդ պայմաններում ընտրական գործընթացի կազմակերպման հիմնական տեխնոլոգիական տարրերն իրենց գործառնական բնութագրերի այս կամ այն ծավալով սպասարկում են ընտրական գործընթացի համապատասխան փուլերը⁶⁶: Դրանով էլ պայմանավորված է ընտրական մարմինների կողմից մշակվող ընտրական ժամանակացույցերի տարբեր ձևաչափերի գոյությունը:

Ընտրական ժամանակացույց են անվանում այս կամ այն ընտրությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումների օրացուցային պլանը: Հայտնի է, որ ընտրական գործընթացներում ժամկետներն ունեն կարևորագույն նշանակություն, և դրանց պահպանումն ընդհանուր առմամբ ընտրական գործընթացի լեգիտիմության գրավականներից մեկն է: Ավելի հաճախ ընտրական

⁶⁶ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации: Учебник для вузов / Отв. редактор - А.В. Иванченко. - М.:НОРМА, 1999, с. 219.

մարմինները մշակում և հրապարակում են ընտրական ժամանակացույց՝ հիմքում ունենալով ընտրական գործընթացի վերը նշված փուլերը: Ընդ որում, ինչպես վկայում է պրակտիկան, ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու ընտրական մարմինները չեն սահմանափակվում միայն նշված փուլերով, այլ հաշվի են առնում նաև այն գործառնությունը, որը պետք է իրականացվի ընտրական գործընթացի տարբեր սուբյեկտների կողմից կոնկրետ ընտրությունների շրջանակներում: Այսպես, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունների նշանակումից անմիջապես հետո հրապարակում է ընտրական ժամանակացույց, որի շրջանակներում մատնանշում է, օրինակ, այն ժամկետները, երբ հասարակական կազմակերպությունները կարող են դիմել Կենտրոնական ընտրական հանձնաժողով ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրելու պահանջով⁶⁷: Կամ, օրինակ, մատնանշվում են արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների կողմից 5 քառակուսի մետր մակերեսը գերազանցող քարոզչական պաստառներ տեղադրելու պատրաստակամության մասին հայտ ներկայացնելու ժամկետները⁶⁸: Նման միջոցառումների, գործողությունների և ընթացակարգերի թվարկը կարելի է երկար շարունակել:

Այսպիսով, ընտրական ժամանակացույցը, թեև հիմնվում է ընտրական գործընթացի հիմնական փուլերի օրենսդրական կարգավորման վրա, սակայն ներառում է կոնկրետ ընտրությունների շրջանակներում անցկացվող ընթացակարգերի, գործողությունների և միջոցառումների շատ ավելի լայն շրջանակ:

⁶⁷ Տես, օրինակ՝ ԿՀՀ 2021 թվականի մայիսի 11-ի N 27-Ս որոշում, Հավելվածի կետ 1: Աղբյուրը՝ <https://res.elections.am/images/doc/timetable20.06.21.pdf> (դիմելու ամսաթիվը՝ 22.06.2023թ.)

⁶⁸ Տես, օրինակ՝ ԿՀՀ 2021 թվականի մայիսի 11-ի N 27-Ս որոշում, Հավելվածի կետ 6: Աղբյուրը՝ <https://res.elections.am/images/doc/timetable20.06.21.pdf> (դիմելու ամսաթիվը՝ 22.06.2023թ.)

Հետաքրքիր է նշել, որ չնայած անվիճելի է պնդումն առ այն, որ ընտրական գործընթացը մեկնարկում է ընտրությունների նշանակման պահից, ընտրական գործընթացի տվյալ փուլն ընտրությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումների ժամանակացույցում չի արտացոլվում: Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Ընտրողները սույն օրենսգրքով սահմանված կարգով տեղեկացվում են ընտրական հանձնաժողովների կազմերի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, քվեարկության օրվա, տեղի, ժամանակի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրություն նշանակվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ տեղեկատվություն է հրապարակում տեղական ինքնակառավարման մարմնի ընտրության, այն համայնքի, որտեղ անցկացվում է ընտրությունը, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ ներկայացնելու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, ինչպես նաև քվեարկության օրվա մասին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրություն նշանակվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, իր համացանցային կայքում հրապարակում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակացույցը, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ նաև արտահերթ ընտրությունների ժամանակացույցը:»:

Ընտրական գործընթացի փուլերի շրջանակներում վերը նշված է 6 միջոցառում (գործողություն, ընթացակարգ), սակայն, օրինակ, 2021 թվականի խորհրդարանական ընտրությունների ընտ-

րական ժամանակացույցի ուսումնասիրությունը վկայում է դրանում 113 կետերի առկայության մասին⁶⁹, իսկ 2023 թվականի մունիցիպալ ընտրությունների ընտրական ժամանակացույցում՝ 72 կետերի⁷⁰: Ընտրական գործընթացի առանձին փուլ չհանդիսացող միջոցառումների և գործողությունների թվում կարելի է նշել այնպիսի միջոցառումներ և գործողություններ, ինչպիսիք են.

- ընտրական տեղամասեր կազմավորելը.
- ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանելը և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելը.
- ընտրողների թվի և ընտրական տեղամասերի վերաբերյալ տեղեկանքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրելը.
- տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելը.
- կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանելը և այլն:

Սա ամեննին սպառնիչ ցանկ չէ: Սակայն, անգամ նման մանրամասն կազմված ընտրական ժամանակացույցի պարագայում արժե նշել, որ հաճախ ընտրական մարմինները կազմում են աշխատանքային օգտագործման համար նախատեսված շատ ավելի մանրակրկիտ կազմված ընտրական ժամանակացույց: Օրինակ՝ 2021 թվականի խորհրդարանական ընտրությունների հիմնական միջոցառումների հրապարակված ժամանակացույցում նշված չեն.

⁶⁹ Աղբյուրը՝ <https://res.elections.am/images/doc/timetable20.06.21.pdf> (ղիմելու ամսաթիվը՝ 22.06.2023թ.)

⁷⁰ Աղբյուրը՝ <https://res.elections.am/images/TIM/2023/timetable26.03.23ani.pdf> (ղիմելու ամսաթիվը՝ 22.06.2023թ.)

- տեղամասային ընտրական հանձնաժողովների նշանակված անդամների համար կազմակերպվող մասնագիտական դասընթացների անցկացումը,

- քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների բացակայության դեպքում ընտրական հանձնաժողովների կազմերը համալրելը,

- քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 11:00-ին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով իրականացված վիճակահանությամբ պատահականության սկզբունքով երեք ընտրական տեղամաս ընտրելը, որտեղ գրանցված քվեարկության արդյունքները պետք է վերահաշվարկվեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից.

- ընտրությունների արդյունքներով ընտրված թեկնածուների մասին ՀՀ վարչապետին կամ համապատասխան մարզպետին արձանագրություն ուղարկելը և մի շարք այլ միջոցառումներ ու գործողություններ:

«Այսպիսով, միմյանց հաջորդող ընթացակարգերի, գործողությունների և միջոցառումների հաջորդականությունը, ինչպես նաև դրանց անցկացման ժամկետները պահպանելու անհրաժեշտությունը թելադրում է ընտրական ժամանակացույցի առկայության անհրաժեշտությունը՝ որպես կարևորագույն փաստաթուղթ՝ ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար, որոնք օժտված են ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար գործողություններ կատարելու, ընթացակարգեր և միջոցառումներ անցկացնելու պարտականություններով կամ լիազորություններով:»:

Միմյանց հաջորդող ընթացակարգերի, գործողությունների և միջոցառումների հետևողականության, ինչպես նաև դրանց անցկացման ժամկետների պահպանման գրավականն է հանդիսանում ընտրական ժամանակացույցի վերաբերյալ համապատասխան սուբյեկտների ժամանակին և պատշաճ իրազեկումը, որում նշված

են ոչ միայն այն հիմնական ընթացակարգերը, գործողությունները և միջոցառումներն ու դրանց անցկացման ժամկետները, այլ նաև դրանց կատարման համար պատասխանատու սուբյեկտները:

3.2. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԳՐԿԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ընտրական գործընթացներին երիտասարդների մասնակցությունը քաղաքագետների, սոցիոլոգների, իրավաբանների, փիլիսոփաների և շատ այլ մասնագետների ուշադրությունը գրավող թեմա է: Չէ՞ որ երիտասարդությունը ցանկացած ժամանակակից հասարակության ամենադինամիկ, հեռանկարային, ակտիվ և եռանդուն մասն է: Երիտասարդությունը պատրաստ է փոփոխությունների, չի վախենում փորձարկել, և դրա համար երիտասարդներն ավելի շատ երևակայություն, ժամանակ և եներգիա ունեն, քան մյուս տարիքային խմբերը: Ավելին, երիտասարդությունն ի վիճակի է ոչ միայն զգալ բոլոր տեսակի փոփոխությունները, այլև իրականացնել այդ փոփոխությունները:

Հայաստանի օրենսդրությունը երիտասարդության կատեգորիային է դասում 16-ից 30 տարեկան անձանց⁷¹: Երիտասարդների տարիքի ստորին սահմանը մինչև 13 տարեկանը նվազեցնելու փորձեր են եղել, սակայն ՀՀ երիտասարդական պետական քաղաքակա-

⁷¹ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1693-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության (հավելված 1) 6-րդ և 7-րդ կետեր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշման հավելվածի բաժին I-ի 1-ին կետ:

նության 2021-2025 թթ. Ռազմավարության նման մոտեցում նախատեսող նախագիծը դեռ չի ընդունվել⁷²:

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգում ասված է. «Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական և հոգևոր զարգացման, ժողովրդի արժանավայել կյանքի ապահովման, գենոֆոնդի պահպանման ու հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման գործընթացներում երիտասարդությունը՝ որպես պետության ռազմավարական ներուժ, բացառիկ դեր ունի: Երիտասարդությունը Հայաստանի Հանրապետության բնակչության մոտ 1/3-րդը կազմող կարևոր և ակտիվ հատվածն է: Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառման տվյալներով՝ 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության երիտասարդների թիվը 802535 է կամ Հայաստանի Հանրապետության ընդհանուր բնակչության շուրջ 26,6 %-ը: Ուստի կարևոր են երիտասարդների ազատ, բազմակողմանի զարգացած, առողջ և պատասխանատու քաղաքացիներ դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հնարավորությունների ընձեռումը: Արագ փոփոխվող ժամանակակից աշխարհում, արդի հասարակության սոցիալ-տնտեսական վերափոխումների պայմաններում խիստ կարևոր է պետության աջակցությունը երիտասարդներին՝ կրթության, դաստիարակության և զարգացման ապահովման գործում, հատկապես նրանց սոցիալական կայացման փուլում, հասարակական-մասնագիտական գործունեության, ընտանիք կազմելու, հասարակական, քաղաքացիական նախաձեռնությունների, իրենց իրավունքներն ու պարտականությունները իրականացնելու գործընթացներում ներգրավվելու ընթացքում:» (1-ին կետ): Նշված հանգամանքներն ու դրված նպատակներն առավել արդիական են

⁷² Աղբյուրը՝ <https://www.e-draft.am/projects/3268/about> (դիմելու ամսաթիվը՝ 22.06.2023թ.)

դարձել համավարակով և պատերազմներով պայմանավորված նոր մարտահրավերների ֆոնին:

Հայաստանի ընտրական օրենսդրության մեջ երիտասարդներին՝ որպես առանձին կատեգորիայի, կոնկրետ անդրադարձ չկա: Մակայն ակնհայտ է, որ երիտասարդությունը պատկանում է ընտրական իրավունք ունեցողների թվին: Արդարության համար պետք է նշել, որ տարբեր երկրների օրենսդրությունները տարբեր մոտեցումներ ունեն ինչպես երիտասարդության, այնպես էլ տարիքային ցենզերի վերաբերյալ⁷³: Տարբեր երկրների սահմանադրությունները և ընտրական օրենսդրություններն ամրագրում են ընտրական իրավունքների տիրապետման տարիքային ցենզ: Այս տեսանկյունից Հայաստանի Սահմանադրությունն ու ընտրական օրենսդրությունն ամրագրում են ամենատարածված ցենզերը: Այսպես, Հայաստանում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: ՀՀ-ում խորհրդարանական ընտրությունների շրջանակներում ընտրվելու իրավունք ունեն 25 տարին լրացած, իսկ ավագանու ընտրությունների շրջանակներում՝ 18 տարին լրացած քաղաքացիները: Սակայն, հիմնական ընտրական իրավունքների՝ ընտրելու իրավունքի և ընտրվելու իրավունքի իրացումը երիտասարդներին ընտրական գործընթացներում ներգրավելու միակ միջոցը չէ: Ընտրական գործընթացներին երիտասարդների մասնակցության բոլոր հեռանկարները տեսնելու համար պետք է անդրադառնալ ընտրական իրավունքի և ընտրական գործընթացի սուբյեկտի հարցին⁷⁴:

⁷³ Առավել մանրամասն տես՝ Երիտասարդության տեղը և դերը հասարակության քաղաքական կյանքում /Հեղինակային խումբ: – Եր.: Հայրապետ հրատ., 2019, էջ 10-31:

⁷⁴ Չխորանալով տեսական վեճերի մանրամասնություններում, հարկ է նկատել, որ հաճախ գիտական գրականության մեջ «ընտրական իրավունքի սուբյեկտներ» և «ընտրական գործընթացի սուբյեկտներ» հասկացությունների միջև տարբերություն չի դրվում: Դրա վերաբերյալ մանրամասն տես, օրինակ՝ Князев С.Д. Очерки теории российского избирательного права: Монография. –Владивосток, 1999, с. 311; Избирательное право и избирательный процесс в Российской Федерации: Учебник для вузов / Отв. редактор - А.В.Иванченко. - М.:НОРМА, 1999, с. 255.

Իրավական ցանկացած գործընթացի համար սուբյեկտների հարցը կարևորագույններից է: Չէ՞ որ իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանակը որոշելը իրավական նորմի կյանքի կոչելու գործընթացի մեկնարկային քայլն է: Կարելի է ասել անգամ, որ իրականում հստակորեն կանխորոշելով հասցեատերերի շրջանակը, որոնք կարող են հանդիսանալ իրավաբանական իրավունքների և պարտականությունների կրողներ, իրավունքի նորմերն արդեն իսկ իրացվում են:

Ընտրական իրավունքի սուբյեկտների շրջանակն առանձնացնելու փորձեր տեսական գրականության մեջ արդեն իսկ ձեռնարկվել են: Սակայն, մինչ օրս դեռևս բացակայում են միասնական մոտեցումներ ինչպես ընտրական իրավունքի սուբյեկտների ցանկի, այնպես էլ նրանց իրավական կարգավիճակի, լիազորությունների վերաբերյալ, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սովորաբար ընտրական իրավունքի և ընտրական օրենսդրության ուսումնասիրությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ընտրական գործընթացի փուլերը, ինչն էլ թույլ չի տալիս մինչ օրս կառուցել ընտրական իրավունքի սուբյեկտների կանխորոշման միասնական մեթոդոլոգիական հիմքերը:

Իրավասուբյեկտությունն ընտրական հարաբերությունների բնագավառում բոլոր դեպքերում ընտրությունների մասին օրենսդրության հետևանք է, որի զարգացման դինամիկան ներազդում է այն անձանց շրջանակի վրա, որոնք ճանաչվում են ընտրական իրավունքի սուբյեկտներ: Այսպես, ոչ այնքան վաղ անցյալում մեր պետության օրենսդրությունը ընտրական իրավունքի սուբյեկտների թվին էր դասում նաև ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կոլեկտիվներին, ցերեկային ուսման միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողների և ուսանողների կոլեկտիվներին, հասարակական միավորումներին, ընտրողների ժողովներին՝ ըստ բնակության վայրի և այլն: Սակայն, ՀՀ ընտրական օրենսդրության ձևավորմանը

գուզընթաց, վերոհիշյալ սուբյեկտները վերացան և ՀՀ ընտրական օրենսդրությամբ ներմուծվեցին ընտրական իրավունքի նոր սուբյեկտներ. ընտրական դաշինքներ, դիտորդներ և այլն: Հետագայում ՀՀ ընտրական օրենսդրությունն ընդլայնեց նաև ընտրական իրավունքի սուբյեկտների ցանկը՝ ներգրավելով դրանց թվում նաև փախստականի կարգավիճակ ունեցող անձանց, երկքաղաքացիներին, ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց:

Իրավական գրականության մեջ պարունակվող տեսակետների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ընտրական իրավունքի սուբյեկտներ կարող են հանդիսանալ անհատներ կամ կազմակերպություններ, որոնք իրավունքի նորմերի հիման վրա կարող են լինել ընտրական իրավունքի առարկան կազմող հարաբերությունների մասնակից, այսինքն՝ հասարակական հարաբերությունների, որոնք միջնորդում են պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրելու և ընտրվելու քաղաքացիների (իսկ որոշ դեպքերում՝ ոչ քաղաքացիների) իրավունքի իրականացմանն ու պաշտպանությանը և այդ իրավունքի իրացման ընթացակարգը ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացում ու միջընտրական ժամանակահատվածում:

Հատկապես պետք է ընդգծել, որ ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտներն օժտված են կոնկրետ իրավունքների և պարտականությունների կրող լինելու հնարավորությամբ՝ ընտրական օրենսդրության նորմերի ուժով, որն ընդգրկում է տարբեր ոլորտներին պատկացող օրենքներն ու ենթօրենսդրական ակտերը: Դրանց հիմնական մասն ունի սահմանադրաիրավական բնույթ և ուղղակիորեն նվիրված է ընտրական հարաբերությունների կարգավորմանը: Միննույն ժամանակ, առանձին նորմերը հանդիսանում են վարչական, համայնքային, քրեական և իրավունքի այլ ճյուղերի տարբեր: Այսպես, օրինակ, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում պատասխանատվություն է նախատես-

վում ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն չստորագրելու համար (էջ 40²), քվեարկության օրը կամ քվեարկությունից մեկ օր առաջ քարոզչություն իրականացնելու համար (էջ 40¹), նախընտրական քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից քարոզչություն իրականացնելու համար (էջ 40⁸) և այլն: ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում ընտրական իրավունքների իրականացմանը խոչընդոտելու (հոդված 210) կամ քվեարկության կամ ընտրությունների արդյունքները կեղծելու (հոդված 212) կամ քվեարկության գաղտնիությունը խախտելու (հոդված 215) համար և այլն:

Այսպիսով, ընտրական իրավունքի սուբյեկտներ կարելի է համարել անհատների կամ կազմակերպությունների, որոնք, ընտրական օրենսդրության համաձայն ունեն իրավունքներ և իրավական պարտականություններ ունենալու կամ իրականացնելու ունակություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման կապակցությամբ, այդ թվում՝ նաև միջընտրական ժամանակահատվածում:

Իրավական գրականության մեջ ամենից հաճախ ընտրական գործընթացի-սուբյեկտների շրջանակը կապված է ընտրական գործընթացի փուլերի հետ: Եթե հաջորդաբար հաշվի առնենք ընտրական գործընթացի փուլականությունը, ինչպես նաև ընտրական գործընթացի շրջանակներում իրականացվող գործառույթները, ապա կարող ենք առանձնացնել սուբյեկտների հետևյալ շրջանակը.

- 1) ընտրություններ նշանակող սուբյեկտները,
- 2) ընտրական հանձնաժողովներ ձևավորող սուբյեկտները,
- 3) ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակները կազմող սուբյեկտները,
- 4) ընտրական տեղամասեր կազմող սուբյեկտները,
- 5) թեկնածուներ առաջադրելու իրավունքով օժտված սուբյեկտները,

6) թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման իրավունքով օժտված սուբյեկտները,

7) նախընտրական քարոզչություն իրականացնող սուբյեկտները,

8) ընտրությունների տեղեկատվական ապահովմանը մասնակցող սուբյեկտները,

9) նախընտրական հիմնադրամներ կազմելու և դրանցում կամավոր նվիրատվություններ կատարելու իրավունքով օժտված սուբյեկտները,

10) ընտրողի անձի նույնականացման համար պատասխանատու սուբյեկտները (ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետներ, որոշ դեպքերում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, տեղամասային ընտրական հանձնաժողովի համապատասխան անդամ),

11) քվեարկության վայրերի կահավորման և քվեարկության կազմակերպման համար պատասխանատու սուբյեկտները,

12) քվեարկության իրավունքով օժտված սուբյեկտները,

13) ընտրություններում ընտրողների կամարտահայտման ընթացակարգի դիտարկում իրականացնող սուբյեկտները,

14) քվեարկության արդյունքների, ընտրությունների արդյունքների պարզման համար պատասխանատու սուբյեկտները (ընտրական հանձնաժողովները),

15) ընտրական վեճեր քննող և օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող սուբյեկտները,

16) անհրաժեշտության դեպքում կրկնակի քվեարկություն և կրկնակի ընտրություն նշանակող սուբյեկտները,

17) ընտրությունների պաշտոնական արդյունքները հրապարակող և ընտրական փաստաթղթերի պահպանման համար պատասխանատու սուբյեկտները:

Բհարկե, առաջին հայացքից սուբյեկտների այս ցանկը շատ ընդարձակ է թվում: Բայց հարկ է հիշել, որ ընտրական գործընթացի որոշ սուբյեկտներ, ինչպիսիք են ընտրական հանձնաժողովները, թեկնածուները և այլոք, մասնակցում են ընտրական գործընթացի բազմաթիվ փուլերին, ուստի ընտրական գործընթացի մի քանի փուլերի սուբյեկտների շրջանակներում դրանց թվարկելն արդարացված է:

Վերոնշյալ առաջարկվող սուբյեկտների խմբերի ուշադիր դիտարկումը թույլ է տալիս առանձնացնել այն շրջանակները, որոնցում երիտասարդները կարող են լավագույնս իրականացնել իրենց ներուժը: Ակնհայտ է, որ սուբյեկտների նման խմբերի մեջ չեն լինի այն խմբերը, ում գործունեությունն ուղղված է հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց որոշակի լիազորությունների իրականացմանը (օրինակ՝ ընտրություններ նշանակող սուբյեկտները, ընտրական հանձնաժողովներ ձևավորող սուբյեկտները, ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակները կազմող սուբյեկտները, ընտրական տեղամասեր կազմող սուբյեկտները, ընտրությունների պաշտոնական արդյունքները հրապարակող և ընտրական փաստաթղթերի պահպանման համար պատասխանատու սուբյեկտները և այլն): Այսպիսով, երիտասարդները կարող են ներգրավվել որպես հետևյալ խմբերի սուբյեկտներ.

- 1) քվեարկության իրավունքով օժտված,
- 2) թեկնածուներ առաջադրելու իրավունքով օժտված,
- 3) ընտրությունների տեղեկատվական ապահովմանը մասնակցող,
- 4) նախընտրական քարտզություն իրականացնող,
- 5) նախընտրական հիմնադրամներ կազմելու և դրանցում կամավոր նվիրատվություններ կատարելու իրավունքով օժտված,
- 6) ընտրողի ինքնության նույնականացման համար պատասխանատու,
- 7) քվեարկության վայրերի կահավորման և քվեարկության կազմակերպման համար պատասխանատու,

8) ընտրություններում ընտրողների կամարտահայտման ընթացակարգի նկատմամբ հսկողություն իրականացնող:

Նշված սուբյեկտները հանդես են գալիս որպես ընտրական գործընթացի մասնակիցներ կոնկրետ կարգավիճակով, ինչը ընտրական իրավահարաբերությունների ևս մեկ առանձնահատկություն է: Ամենամեծ խումբը կազմում են ընտրողները: Անդրադառնալով ընտրություններին երիտասարդների մասնակցությանը՝ նշենք, որ 2021 թվականի հունիսի 20-ին տեղի ունեցած ՀՀ խորհրդարանական վերջին ընտրությունների շրջանակում, ըստ տարիքային չափանիշի, ընտրություններում մասնակցած ընտրողների 337331 կամ 46.6%-ը կազմել են 18-ից 35 տարեկան անձինք⁷⁵: Ինչպես տեսնում եք, ընտրություններին մասնակցող ընտրողների զգալի մասը կազմում են երիտասարդները:

Այնուամենայնիվ, սա միակ կարգավիճակը չէ, որում երիտասարդներն ակտիվորեն հանդես են գալիս: Դրանք ներառում են ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգերի շրջանակներում ընտրություններին մասնակցող թեկնածուներին:

Վերոգրյալը թույլ է տալիս պնդել, որ երիտասարդությունն ունի ամենալայն ներկայացուցչությունը հիմնական ընտրական իրավունքների՝ ընտրելու և ընտրվելու իրավունքի իրացման շրջանակներում:

Այնուամենայնիվ, եթե մենք հավատարիմ մնանք ընտրական գործընթացի սուբյեկտների պայմանական դասակարգմանը՝ ըստ ընտրական գործընթացներում նրանց հիմնական և օժանդակ մասնակցության իրավական նշանակության չափանիշի⁷⁶, ապա հարկ է նշել, որ երիտասարդները նույնպես ակտիվորեն ներգրավված են

⁷⁵ Վիճակագրությունը տրամադրված է ՀՀ ԿԸՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչության կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկությունների բազայի հիման վրա:

⁷⁶ Биктагиров Р.Т. Субъект избирательного права Российской Федерации: конституционно-правовое исследование: автореферат дис. ... доктора юридических наук : 12.00.02 - Москва, 2010, с. 30-31.

ընտրական գործընթացներին մասնակցելու մեջ՝ որպես ընտրական գործընթացի օժանդակ (կամընտիր) սուբյեկտներ, ինչպիսիք են դիտորդները, վստահված անձինք, լրատվամիջոցների ներկայացուցիչները, տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետները: Երիտասարդները վատ չեն ներկայացված նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում: Եթե անդրադառնանք վիճակագրությանը, ապա 2023 թվականի ավագանու ընտրությունների արդյունքներով (ապրիլի դրությամբ) տարբեր կարգավիճակներում երիտասարդների մասնակցությունը հետևյալն է.

- քվեարկությանը մասնակցած 11084 ընտրողներից 5319 կամ մոտ 48 %-ը 18-ից 35 տարեկան էին,

- կուսակցական ցուցակներով առաջադրված 323 թեկնածուներից 87 կամ մոտ 27 %-ը 18-ից 35 տարեկան էին,

- տեղամասային ընտրական հանձնաժողովների 488 անդամներից 110-ը կամ մոտ 22,5%-ը 18-ից 35 տարեկան էին,

- հավատարմագրված ՁԼՄ-ների 74 ներկայացուցիչներից 38-ը կամ 50%-ից քիչ ավելին 18-ից 35 տարեկան էին,

- հավատարմագրված հասարակական կազմակերպությունների 55 դիտորդներից 36-ը կամ 65%-ից մի փոքր ավելին 18-ից 35 տարեկան էին:⁷⁷

Ընտրական իրավունքի զարգացման միտումները բավականին նպաստում են ընտրական գործընթացներում երիտասարդների ներգրավվածության աճին: Նախ՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն ընտրական գործընթացներում դրանք գրավիչ է դարձնում շատ երիտասարդների համար: Երիտասարդները շատ ավելի լավ են տիրապետում տեխնոլոգիաներին, քան մյուս տարիքային խմբերը, և հաճախ դա անում են առանձնահատուկ ոգևորությամբ:

⁷⁷ Վիճակագրությունը տրամադրված է ՀՀ ԿԸՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչության կողմից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում առկա շտեմարանների հիման վրա:

Ընտրական մարմիններն իրենք չափազանց շահագրգռված են երիտասարդներին ընտրական գործընթացներում ներգրավելու հարցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երիտասարդներն ունակ են ժամանակին կողմնորոշվելու և գործելու, ընտրական գործընթացների առանձնահատկություններով պայմանավորված, ծանրաբեռնվածությանը դիմանալու, անբարենպաստ պայմաններին հարմարվելու, հեշտությամբ սովորում են և պատրաստ են դիմակայելու դժվարություններին ու նորարարություններին: Ընտրական գործընթացների մասին քաղաքացիներին իրագեկումն իրականացվում է ընտրական մարմինների կողմից ժամանակակից աշխարհում հնարավոր բոլոր միջոցներով, սակայն առավել լայնորեն կիրառվում է համացանցը, որի ամենակատիվ օգտատերը համարվում է երիտասարդությունը: Այսպիսով, երիտասարդները սովորաբար տեղյակ են ընտրական գործընթացների մասին, և ընտրական օրենսդրության անտեղյակությունը երիտասարդների դեպքում հեշտությամբ փոխհատուցվում է նրանց լավ տեխնոլոգիական հմտություններով և նոր տեղեկատվություն սովորելու ու յուրացնելու պատրաստակամությամբ:

Բացի այդ, երիտասարդների աշխատանքի տեղավորման հարցը ամենաարդիական խնդիրներից է, որի լուծմանն ուղղված է ժամանակակից ժողովրդավարական պետությունների երիտասարդական պետական քաղաքականությունը, այդ թվում՝ նաև Հայաստանում: Ընտրական գործընթացներին մասնակցելը գումար վաստակելու վատ միջոց չէ, քանի որ վերը նշված գրեթե բոլոր այն դիրքերը, որոնցում երիտասարդները կարող են մասնակցել ընտրական գործընթացներին, վճարվում են: Այսպես, օրինակ, ընտրական գործընթացների ամենակգբում դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված հասարակական կազմակերպությունները որպես դիտորդ աշխատելու համար ներգրավում են հիմնականում երիտասարդներին: Երիտասարդների հետ կնքում են պայմանագրեր և վճարում ընտրություններին որպես դիտորդ մաս-

նակցելու համար: Այդպես են վարվում նաև կուսակցությունները՝ երիտասարդներին ներգրավելով ընտրություններին որպես վստահված անձ, առավել հաճախ վճարելով նրանց աշխատանքի դիմաց:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովների ֆինանսավորումը և ընտրական հանձնաժողովների անդամների վարձատրությունը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն հոդվածով սահմանված կարգով»: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ընտրությունների ժամանակահատվածում, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլ անցկացվելու դեպքում վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի կրկնապատիկի, հանձնաժողովի քարտուղարը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության 70 տոկոսի, իսկ հանձնաժողովի անդամները՝ նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափով»:»

ՀՀ Ընտրական օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի հինգերորդ պարբերության համաձայն՝ մասնագետի վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսի չափով:

Ընտրական գործընթացներում երիտասարդության ներգրավումը նպաստում է մեր օրերում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացներով երիտասարդությանն առաջադրված լայնածավալ խնդիրները հաղթահարելուն՝ ընտրական գործընթացների ներքուստ իմացությամբ և դրանց էության գիտակցմամբ, ինչն էլ, իր հերթին, նպաստում է իր երկրի ապագայով

մտահոգված, կրթված, մրցունակ, գիտակ և սոցիալապես պատասխանատու երիտասարդության դաստիարակմանը: Նման երիտասարդությունն է ցանկացած երկրի ապագան:

3.3. ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ամրագրելով ընտրական իրավունքները՝ ծայրահեղ կարևոր է ընտրական իրավունքների սուբյեկտին ապահովել այդ ընտրական իրավունքները պաշտպանելու հնարավորությամբ: Ընտրական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է *վարչական և դատական կարգով*:

Ընտրական իրավունքների պաշտպանությունը վարչական կարգով:

Ընտրական իրավունքների պաշտպանությամբ կարող են զբաղվել ամենատարբեր ատյանները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովից մինչև Հանրապետության նախագահ: Ընդ որում, ամեն մարմին, յուրաքանչյուր պաշտոնատար անձ, ցանկացած ատյան կարող են գործել միայն այդ դիրքերի շրջանակներում, որոնք իրենց վերապահված են ընտրական օրենսդրությամբ: Այսպես, օրինակ, քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքների իրացում կարող է տեղի ունենալ միայն Հանրապետության նախագահի կողմից խորհրդարանական ընտրություններ նշանակելու իր լիազորության պատշաճ իրականացման դեպքում: Մրցակցող կողմերն իրավասու են հեռարձակվող զանգվածային լրատվության միջոցների կողմից քարոզչության համար անհավասար պայմանները բողոքարկելու Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով: Ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու համար շինությունների անհավասար պայմաններով տրամադրումը կարելի է բողոքարկել տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս թվարկը կարելի է երկար շարունակել: Մակայն, անկասկած, վարչական կարգով ընտրական իրավունքների պաշտպանությունն ապահովող հիմնական ատյան են հանդիսանում ընտրական հանձնաժողովները:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում գործում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ. Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ, որոնցից Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները գործում են մշտական հիմունքներով, և միայն տեղամասային ընտրական հանձնաժողովները ձևավորվում են կոնկրետ ընտրությունների շրջանակներում կազմակերպվող քվեարկությունն սպասարկելու համար:

Վարչական կարգով հնարավոր է պաշտպանել ընտրական իրավունքի ամենատարբեր սուբյեկտների ամենատարբեր ընտրական իրավունքները: Ընտրական գործընթացների առանձնահատկությունները թելադրում են նաև ընտրական իրավահարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկություններ, այդ թվում՝ կապված ընտրական իրավունքների պաշտպանության հետ: Այսպես, օրինակ, կուսակցության գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով կարող է դիմել միայն գրանցված կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը): Իսկ, ասենք, տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջով կարող են դիմել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, թեկնածուներն ու վստահված անձինք, այն էլ՝ որոշակի պահանջներ բավարարելու դեպքում: Այսպիսի օրինակները բազմաթիվ են: Եթե փորձենք ամփոփել ընտրական հանձնաժողովներ ներկայացվող դիմումների տեսակները, որոնք ուղղված են ընտրական իրավունքների պաշտպանությանը, ապա կարելի է առանձնացնել հետևյալները.



Ընդ որում, ընտրական օրենսդրությունը որոշում է ոչ միայն դիմելու իրավունք ունեցող **սուբյեկտների շրջանակը**, այլ նաև դիմում ներկայացնելու **կոնկրետ ժամկետները** և դրանց ներկայացման **կոնկրետ ատյանները**:

Եթե անդրադառնանք ընտրական օրենսդրությամբ ամրագրված ընդհանուր կանոններին, ապա հարկ է նկատել, որ Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել՝

1) **յուրաքանչյուր ոք**, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը,

2) **վստահված անձը**, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները,

3) **դիտորդը կամ այցելուն**, եթե գտնում է, որ խախտվել են իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները,

4) **գանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը**, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը,

5) **ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը**, եթե գտնում է, որ խախտվել է՝ իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը:

Ընտրական օրենսգրքի այլ իրավադրույթների վերլուծությունը թույլ է տալիս լրացնել վերը նշված ցուցակը հետևյալ սուբյեկտներով.

1) **ընտրություններին մասնակցող կուսակցությունը՝** ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրան-

ցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում (48-րդ հոդվածի 9-րդ մաս),

2) **համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն՝** համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում (48-րդ հոդվածի 10-րդ մաս),

3) **ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն, վստահված անձը** (եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին), **տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝** ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում (48-րդ հոդվածի 12-րդ մաս),

4) **կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն՝** ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում (48-րդ հոդվածի 13-րդ մաս),

5) **ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն, վստահված անձը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ՝** այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում (48-րդ հոդվածի 16-րդ մաս),

6) **ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը** (եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը) **և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը** (ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների

վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում)՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում (50-րդ հոդվածի 1-ին մաս):

Ինչպես արդեն նշվել է, ընտրական գործընթացն առանձնանում է ծայրահեղ ժամկետայնությամբ, հստակ ժամկետներով որոշված են բոլոր ընտրական գործընթացի շրջանակներում անցկացվող գործողությունները, գործընթացները, ընթացակարգերը, միջոցառումները: Այս առումով բացառություն չեն նաև վարչարարությունն ու վարչական վարույթն ընտրական հանձնաժողովներում:

Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:

Վարչական վարույթ հարուցելու հիմք են հանդիսանում.

- ✓ անձի դիմումը կամ բողոքը,
- ✓ վարչական մարմնի նախաձեռնությունը:

Ընդունված է համարվում կարծիքն առ այն, որ վարչական վարույթներ հարուցում և իրականացնում են միայն Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, սակայն այսօր արդեն վստահաբար կարելի է փաստել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները ևս իրականացնում են «ամենադասական» վարչական վարույթներ, երբ, օրինակ, որոշում են կայացնում քվեարկության սենյակում գտնվող դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների ընդհանուր թիվը: Դրանից բացի, տեղամասային ընտրական հանձնաժողովը (կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը) մշտապես լուծում է խնդիրներ, որոնք օպերատիվ արձագանք են պահանջում: Այսպես, եթե ընտրողը սխալ է լրացնում

քվեաթերթիկը, նա իրավունք ունի դիմելու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին, որը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի իմացությամբ և թույլտվությամբ նրան տրամադրում է նոր քվեաթերթիկ: Ընտրական օրենսգիրքը բազմիցս անդրադառնում է նմանատիպ կարգավորումների: Այսպիսի «վարչական վարույթ» ընտրական տեղամասում ամենուր է հանդիպում: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ քվեարկության հետ կապված ցանկացած իրավունքների պաշտպանությամբ ընտրական գործընթացի սուբյեկտները, առաջին հերթին, դիմում են տեղամասային ընտրական հանձնաժողով:

Հարկ է ավելացնել, որ ընտրական հանձնաժողովների համակարգի աստիճանակարգությունն իր արտացոլումն է ստանում նաև ընտրական իրավունքների պաշտպանության շրջանակներում՝ օրենսդրորեն ամրագրելով ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության)՝ վերադաս հանձնաժողով բողոքարկելու կանոնը: Այսպիսով, ***ընտրատարածքային ընտրական հանձնաժողով*** կարող են բողոքարկվել.

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը),

✓ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող են բողոքարկվել՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը)՝ բացառությամբ ընտրությունների արդյունքներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների:

Ընտրական վեճերի լուծման շրջանակներում դիմումը պատշաճ աստիճանի ներկայացնելու պահանջի պահպանումը չափազանց կարևոր է իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դի-

մումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին: Սա է ընդհանուր կանոնը, և ընտրական հանձնաժողովների իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ հանձնաժողովները հենց այդպես էլ վարվում են. եթե ընտրական հանձնաժողով ներկայացվում է դիմում, որի քննությունը վերապահված է հանրային իշխանության այլ մարմնի իրավասությանը, ապա համապատասխան ընտրական հահձնաժողովը դիմումը վերահասցեագրում է համապատասխան իրավասու մարմին:

Սակայն, ընտրական գործընթացների շրջանակներում դիմումը ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացնելը դիմումն առանց քննության թողնելու և վերադարձնելու հիմք է, քանի որ Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը», ինչպես նաև սահմանում է, որ ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:

Ընտրական հանձնաժողովներ դիմումներ և բողոքներ ներկայացնելու ժամկետներն ընտրական վեճերի լուծման ևս մեկ առանձնահատկություններից են: Ընտրական օրենսգրքը սահմանում է ընդհանուր և հատուկ ժամկետներ, որոնք գործում են ընտրական փուլում: Միջընտրական փուլերում վարչական վարույթների կանոնակարգումների շրջանակներում դիմում ներկայացնելու և վարչական վարույթի իրականացման ընդհանուր ժամկետները գործում են նաև ընտրական հանձնաժողովներում:

Ընդհանուր ժամկետներ: Քվեարկության օրվան նախորդող օրերի ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ *օրացուցային 2 օրվա ընթացքում* այն օրվանից,

երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն,
- քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն:

Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության օրվան հաջորդող օրերին տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝

- քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն,
- քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն,

– քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Ընդհանուր ժամկետների թվում հարկ է նշել նաև, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ օրացուցային **3 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին.

- աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն,
- քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն,
- քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև 22.00-ն,
- քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև 18.00-ը:

Եթե օրացուցային 3-րդ օրը լրանում է ոչ աշխատանքային օրը, բացառությամբ քվեարկության նախորդ, քվեարկության կամ քվեարկության հաջորդ օրերի, ապա բողոքը կարող է ներկայացվել **հաջորդ աշխատանքային օրը**՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն:

Հատուկ ժամկետներ: Այդպիսին սահմանված են առանձին տեսակների դիմումների և բողոքների համար: Այսպես,

✓ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել *ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն,*

✓ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել *ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն,*

✓ ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում *ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով (ԸԸՀ կամ ԿԸՀ) կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար Ընտրական օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն,*

✓ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը ներկայացվում է *ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև 18.00-ն, քվեարկության օրվանից հետո երկրորդ օրը՝ ժամը 09.00-ից մինչև 18:00-ն, քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 09.00-ից մինչև 11.00-ն,*

✓ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացվել միայն *գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով՝ ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:*

Ընտրական վեճերի լուծման շրջանակներում ինչպես դիմումը պատշաճ առյան, այնպես էլ պատշաճ ժամկետում ներկայացնելու պահանջի պահպանումը չափազանց կարևոր է իրավունքների արդ-

յունավետ պաշտպանության տեսանկյունից, քանի որ ժամկետների չպահպանումը ևս հիմք է դիմումը վերադարձնելու համար: Այսպես, Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե դիմում տալու համար սույն օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:»: Միաժամանակ նշվում է, որ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:

Դիմումը (բողոքը) ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Դիմումը պետք է՝

- ստորագրված լինի դիմողի կողմից,
- ներառի դիմողի անունը, ազգանունը, դիմողի հասցեն, դիմումի տրման ամսաթիվը,
- հստակ սահմանի ներկայացվող պահանջը,
- պարունակի հիմնավորումներ:

Դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի էլեկտրոնային կապի որևէ միջոցի տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն և այլն):

Հնարավոր բոլոր ապացույցները պետք է կցվեն դիմումին կամ բողոքին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Թեկնածուի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, ընտրական հանձնաժողովի անդամի, լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:

Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա ընտրական հանձնաժողովը կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին, կամ դիմողին հնարավորություն է ընձեռում շտկելու այդ սխալները՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա ընտրական հանձնաժողովը համալրման համար սահմանում է ողջամիտ ժամկետ:

Դիմումատուն (բողոքաբերը) իրավունք ունի՝

- մասնակցելու հանձնաժողովի նիստում իր դիմումի (բողոքի) քննարկմանը,
- ներկայացնելու հիմնավորումներ,
- ելույթ ունենալու:

Դիմումատուն (բողոքաբերը) կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Դիմումատուն (բողոքաբերը) իրավունք չունի հայտնելու բացարկ հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին:

Ընտրությունների ժամանակահատվածում, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, վարչական վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերին ծանոթանում են վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովում՝ այդ վարույթով հրավիրված նիստից առաջ: Ընտրությունների ժամանակահատվածում վարչական վարույթը չի կարող կասեցվել: Հատուկ կանոնակարգումներ են նախատեսված այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու կապակցությամբ: Վերը նշված են այս տեսակի դիմում ներկայացնող դիմումատուները և նշված դիմումը ներկայացնելու ժամկետները: Սակայն, կարևոր է նաև նշել, որ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները պետք է ներկայացվեն առանձնացված՝ ըստ Հայաստանի Հանրապետությունից բացակայող և քվեարկությանը չմասնակցած և ըստ Հայաստանի Հանրապետությունում գտնվող ու քվեարկությանը չմասնակցած անձանց:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը ներկայացվում է բնօրինակով՝ ստորագրված բացառապես դիմումատուի կողմից:

Դիմումը պետք է պարունակի դիմողի՝

- անունը, հայրանունը, ազգանունը,
- հաշվառման վայրի հասցեն,
- բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից,
- հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
- դիմումի տրման ամսաթիվը:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումին պետք է կցված լինի որևէ անձի աներկբա հայտարարությունն այն մասին, որ ընտրողը քվեարկությանը չի մասնակցել, և այդ ընտրողի փոխարեն քվեարկել է այլ անձ: Հայտարարություն տվողը պետք է նաև գրավոր հավաստի և ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Հայտարարությունը պետք է պարունակի հայտարարություն տվողի՝

- անունը, հայրանունը, ազգանունը,
- անձը հաստատող փաստաթղթի համարը (անձնագրի դեպքում՝ սերիան և համարը),
- հաշվառման վայրի հասցեն,
- բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից,
- հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն,
- հայտարարության տրման ամսաթիվը:

Հայտարարության մեջ պետք է նաև նշված լինեն քվեարկությանը չմասնակցած ընտրողի՝

- անունը, հայրանունը, ազգանունը,
- ընտրական տեղամասի համարը, որ ցուցակի ընտրող է,
- ընտրողի համարը համապատասխան ցուցակում:

Հայտարարությունը ներկայացվում է բնօրինակով՝ ստորագրված բացառապես հայտարարություն տվող անձի կողմից:

Դիմում ներկայացնողը պետք է գրավոր հավաստի և ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիմումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Հայտարարությունը համարվում է կեղծ ստորագրությամբ հայտարարություն, եթե այն ստորագրվել է ոչ այն անձի կողմից, որի անունից տրվում է հայտարարությունը, կամ ստորագրվել է մտացածին անձի անունից: Մույն պարբերությամբ սահմանված պահանջը չի տարածվում այն դեպքի վրա, երբ դիմումը ներկայացնողը և հայտարարություն տվողը նույն անձն են:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումների քննարկումը կատարվում է Շտրպակյան օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով: Հարկ է ընդգծել, որ եթե չկան սովյալ անձի կողմից քվեարկությանը մասնակցությունը հաստատող բավարար ապացույցներ, ապա հավաստիության կանխավարկածի սկզբունքի կիրառմամբ՝ բացառապես ընտրությունների արդյունքներով որոշում կայացնելու համար, համարվում է, որ տեղի է ունեցել այլ անձի փոխարեն քվեարկություն:

Այլ տեսակների դիմումների (բողոքների) ներկայացմամբ՝

- կա'մ հարուցվում է վարչական վարույթ,
- կա'մ վարչական վարույթ չի հարուցվում և որոշում է կայացվում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին,
- կա'մ մ դիմումը չի քննարկվում և գրությամբ վերադարձվում է:

Դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժելու կամ դիմումը չքննարկելու և գրությամբ վերադարձնելու հիմքերը սպառիչ

թվարկված են Հնտրական օրենսգրքում: Եթե վարչական վարույթի հարուցումը մերժելու կամ դիմումը չքննարկելու և գրությամբ վերադարձնելու հիմքերը բացակայում են, ապա դիմումով (բողոքով) վարչական վարույթ է հարուցվում և կայացվում է վարչական ակտ:

Հնտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությամբ սահմանվում է **վարչական վարույթ չհարուցելու և վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու** հիմքերի սպառիչ ցանկը: Այսպիսով, դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե դիմումը.

- 1) չի ներառում դիմումատուի վերաբերյալ տվյալներ կամ ներառում է կեղծ տվյալներ,
- 2) ներկայացված է իրավունքի չարաշահմամբ,
- 3) ներկայացված է ոչ իրավասու անձի կողմից,
- 4) ներկայացված է ներկայացուցչի միջոցով և ներկայացված չէ օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր,
- 5) ներկայացված է սխալներով կամ դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, և ընտրական հանձնաժողովի կողմից սխալները շտկելու կամ փաստաթղթերը համալրելու համար սահմանված ժամկետում սխալները չեն վերացվում կամ փաստաթղթերը չեն լրացվում:

Հնտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է **դիմումը չքննարկելու և գրությամբ վերադարձնելու** երկու հիմք՝

- 1) դիմումը ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացնելը,
- 2) դիմումը վերջնաժամկետից ուշ ներկայացնելը:

Դիմումով վարչական վարույթ չհարուցելու դեպքերում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ:

Եթե վարչական վարույթ չհարուցելու և վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու, ինչպես նաև դիմումը չքննարկելու և գրությամբ վերադարձնելու հիմքեր առկա չեն, ապա ընտրական հանձնաժողովը դիմումով (բողոքով) հարուցում է վարչական վարույթ:

Դիմումի (բողոքի) քննարկումը տեղի է ունենում հանձնաժողովի նիստում, որի արդյունքում հանձնաժողովը կայացնում է որոշում: Սովորաբար կայացվում են գրավոր որոշումներ: Մակայն, Ընտրական օրենսգիրքն ընտրական հանձնաժողովներին հնարավորություն է ընձեռում նաև օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ առանց առանձին ակտի տեսքով որոշումներ ընդունելու:

Բացի այդ, տեղեկատվություն ստանալու մասին դիմումները հանձնաժողովի նիստում չեն քննարկվում: Դրանց պատասխանն ուղարկվում է հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ: Եթե պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթի օրինակը տեղադրված է հանձնաժողովի համացանցային կայքում, ապա դիմողն այդ մասին տեղեկացվում է, և նրան դրանցից պատճեններ կամ քաղվածքներ չեն տրամադրվում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ընտրական օրենսդրությունը հատուկ ուշադրությամբ է ամրագրում ինչպես ընտրական հանձնաժողովի դիմում (բողոք) ներկայացնելու, այնպես էլ ընտրական հանձնաժողովում դիմումի (բողոքի) քննության ժամկետները:

Այսպես, Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները դիմումներին պատասխանում, իսկ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են՝

- ✓ միջընտրական փուլերում՝ 30 օրվա ընթացքում,
- ✓ ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը ստացված դիմումներին, ***5-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը,***

✓ գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը ընտրական հանձնաժողովը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում դիմումն ստանալուց հետո՝ **5-օրյա ժամկետում**, սակայն ոչ ուշ, քան **քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 12.00-ն**,

✓ վերահաշվարկի վերաբերյալ դիմումներով՝ մերժելու հիմքերի դեպքում մերժելու մասին որոշումն ընդունվում է մինչև վերահաշվարկի աշխատանքների մեկնարկը, իսկ բավարարելու դեպքում՝ իրականացվում են վերահաշվարկի աշխատանքներ, որոնք մեկնարկում են **քվեարկության օրվանից հետո՝ 2-րդ օրը՝ ժամը 14.00-ին**, և ավարտվում **քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14.00-ին**,

✓ քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ստացված դիմումներին՝ **մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը**, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ **մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 1 օր առաջ**,

✓ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակներում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում, ուստի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներով որոշումն ընդունվում է **ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման ընդունման համար սահմանված ժամկետում**,

✓ տեղեկատվություն ստանալու մասին դիմումներով՝ 5-օրյա ժամկետում:

Եթե մինչև դիմումի (բողոքի) քննարկումը կամ քննարկման ժամանակ, մինչև հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը, դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից (բողոքից), բացառությամբ

վերահաշվարկի դիմումների, հանձնաժողովը որոշում է կայացնում դիմումով (բողոքով) վարչական վարույթը կարճելու մասին:

Եթե ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվել է և՛ վարչական, և՛ դատական կարգով, ապա վարչական վարույթը կարճվում է:

Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը տեղադրվում է հանձնաժողովի համացանցային կայքում՝ ընդունվելուց հետո մինչև հաջորդ օրվա ավարտը: Իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը փակցվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում, ակտն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ակտերը նույնպես տեղադրվում են ԿՀՀ համացանցային կայքում:

Ընտրական հանձնաժողովի վարչական ակտն ընդունելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, ուղարկվում է վարչական վարույթի մասնակիցներին՝ առաքման անդորրագիրը կցելով գործին, եթե վարույթի մասնակիցներն այդ ակտը հանձնաժողովում չեն ստացել:

Ընտրական իրավունքների պաշտպանությունը դատական կարգով:

Ավելի վաղ արդեն ասվել է, որ ընտրական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վարչական և դատական կարգով: Հարկ է նկատել, որ ՀՀ ընտրական օրենսդրությունը ընտրական իրավունքների պաշտպանության հարցում չի դիտարկում վարչական կարգով բողոքարկումն իբրև դատական կարգով պաշտպանություն հայցելու պարտադիր նախապայման: Բացառություն են կազմում, թերևս, այն դեպքերը, երբ նախընտրական քարոզչության սահմանված կարգի, ինչպես նաև նախընտրական քարոզչության ֆինանսավորման կանոնների խախտումների վերաբերյալ գոր-

ծերով հայցադիմումներ դատարան կարող են ներկայացվել միայն ընտրական հանձնաժողովների միջոցով՝ միջնորդավորված: Ըստ այդմ, ցանկացած դեպքում իրավասու սուբյեկտն ինքն է որոշում՝ իր իրավունքները պաշտպանել վարչակա՞ն, թե՞ դատական կարգով: Միաժամանակ, մի շարք դեպքերում նախատեսված է այս կամ այն որոշման բողոքարկման միայն դատական կարգը: Օրինակ, ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով. Ազգային ժողովի ընտրութեան հունների դեպքում՝ ՀՀ սահմանադրական դատարան, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ ՀՀ վարչական դատարան: Նման բացառությունների թվին են դասվում նաև թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցման, գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշումները⁷⁸:

Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթն ընդգրկված է հատուկ վարույթների ցանկում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝ «Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա՝ սույն գլխին համապատասխան հարուցված գործերն են (այսուհետ՝ ընտրական գործ)»:

Ընտրական գործերով վարչական դատարան կարող են դիմել ընտրական գործընթացի սուբյեկտները, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

⁷⁸ Հակոբյան Լ., Մմբատյան Ա. Ընտրական մարմինները Հայաստանի Հանրապետությունում. Որոշ տեսական և գործնական հիմնահարցեր // «Դատական իշխանություն», ապրիլ-հունիս 2022 4-6 (274-276), էջեր 28-29:

նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կիրառվում են *ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին առնչվող կանոնակարգումները, ընդ որում, վարչական դատարանն այդ հարցով ներկայացված հայցադիմումները քննում և լուծում է օրացուցային 7 օրվա ընթացքում` ընտրությունների ժամանակ, և ընդհանուր կարգով` ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում:*

Հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել **3 օրացուցային օրվա** ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:

Ընդհանուր կանոնի համաձայն` եթե ընտրական գործի քննության և լուծման համար այլ ժամկետ սահմանված չէ, ապա ընտրությունների և հանրաքվեների ժամանակ (ընտրությունների, հանրաքվեների նշանակման օրվանից մինչև ընտրությունների, հանրաքվեների արդյունքների ամփոփման ժամանակահատվածը) դատարանը հայցադիմումը քննում և լուծում է **7-օրյա ժամկետում**, բայց ոչ ուշ, քան մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման` օրենքով սահմանված վերջնաժամկետի նախորդ օրը, իսկ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում` **15-օրյա ժամկետում**: Սակայն, ամեն դեպքում, դատավորը նման գործեր քննելիս պետք է ձգտի գործի քննությունն իրականացնել այնպիսի ժամկետում, որ չխաթարվեն հետագա ընտրական գործընթացները:

Ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացվելու հետ կապված հայցադիմումներ կարող են ներկայացվել նախընտրական քարոզչությունն սկսվելու օրվանից մինչև քվեարկության հաջորդ օրը ներառյալ: Այդ հայցադիմումները քննվում են 5 օրացուցային օրվա ընթացքում, քվեարկության օրվան նախորդող 5-ից 2 օրացուցային օր առաջ ներկայացված հայցադիմումները`

մինչև քվեարկության օրը, իսկ քվեարկության օրը, դրան նախորդող կամ հաջորդող օրը ներկայացված հայցադիմումները՝ ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալուն նախորդող օրը:

Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ հայցադիմումները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում է համապատասխանաբար մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կամ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ ըստ պատասխանողի գտնվելու վայրի:

Ընտրողների և հանրաքվեի մասնակիցների ցուցակներում տեղ գտած՝ հայցվորի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու, ցուցակներում լրացումներ կատարելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան **8 օր առաջ** Այդ հայցադիմումները քննվում և լուծվում են ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

Ընտրողների և հանրաքվեի մասնակիցների ցուցակներում տեղ գտած՝ հայցվորի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, հայցվորին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել **ցանկացած ժամանակ**: Այդ հայցադիմումները քննվում և լուծվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը, բայց ոչ ուշ, քան հայցադիմումը ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

Թեկնածուներին, կուսակցությունների ընտրական ցուցակները (դրանցում ընդգրկված թեկնածուներին) գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումները վարչական դատարանը քննում և լուծում է հայցադիմումն ստանալուց հետո՝ **5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը**:

Ինչ վերաբերվում է ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման վերաբերյալ գործերին, ապա

✓ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման վերաբերյալ հայցադիմումները ներկայացվում են ՀՀ վարչական դատարան որոշումն ընդունելուց հետո՝ **3 օրացուցային օրվա ընթացքում** և քննվում և լուծվում են հայցադիմումները ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան **7 օրացուցային օրվա ընթացքում**,

✓ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմումները ներկայացվում են ՀՀ սահմանադրական դատարան՝ համապատասխան որոշման հրապարակման օրվանից հետո՝ **5-րդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն**:

Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

3.4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Քաղաքացիների ընտրական իրավունքների խախտման համար պատասխանատվությունն անբարենպաստ ազդեցության միջոց է, որը կիրառվում է ընտրական օրենսդրությունը խախտող անձանց նկատմամբ: Պատասխանատվության ինստիտուտի շրջանակներում ընտրական իրավունքում հարկ է առանձնացնել իրավաբանական պատասխանատվության երեք տեսակ.

1) սահմանադրաիրավական,

2) վարչական,

3) քրեական:

Որոշ դեպքերում կիրառվում է նաև **քաղաքացիաիրավական պատասխանատվություն**: Օրինակ, Ընտրական օրենսգրքի պա-

հանջներից է Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ կառավարության սահմանած կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով, միաժամանակյա համացանցային հեռարձակում իրականացնելը (Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 11.1-րդ մաս): Կառավարությունը մասնագիտացված կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագիր, որով սահմանվում են նաև ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանման և միաժամանակյա համացանցային հեռարձակման կարգն ու պայմանները, ինչպես նաև տեղամասերի ցանկը: Պայմանագրի պայմանների խախտման դեպքում պետք է կիրառվեն քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ:

Սահմանադրաիրավական պատասխանատվությունը նախատեսված է սահմանադրական իրավունքի նորմերով, և հաճախ սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցները պարունակվում են հենց ընտրական օրենսդրության մեջ, ավելի հազվադեպ՝ երկրի սահմանադրության մեջ: Սահմանադրաիրավական պատասխանատվությունը կարող է կիրառվել ընտրական գործընթացի տարբեր սուբյեկտների նկատմամբ: Կարևոր է նաև ընդգծել, որ սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառումը ևս դրված է տարբեր սուբյեկտների վրա: Այսպիսով, սահմանադրաիրավական պատասխանատվությանն են դասվում.

1) *ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը*, օրինակ՝

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցնում է անհամատեղելիության պահանջները խախտելու, որևէ կուսակցության անդամագրվելու, որևէ այլ կերպ քաղաքական գործունեությամբ զբաղվելու, հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չցուցաբերելու դեպքում (ՀՀ Սահմանադրության 195-րդ հոդված),

- եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը կոպտորեն խախտել է Ընտրական օրենսգրքի դրույթները կամ 3 օրացուցային ամսվա ընթացքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից երեք կամ ավելի անգամ անհարգելի բացակայել է, ապա նրա լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ (Ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 7-րդ մաս),

- ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կարող է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ վաղաժամկետ դադարեցնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները, եթե հանձնաժողովի անդամը կոպտորեն խախտել է Ընտրական օրենսգրքի դրույթները (բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից անհարգելի բացակայության դեպքի) (Ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 8-րդ մաս),

- եթե քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին տեղամաս ներկայացած տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը պակաս է Ընտրական օրենսգրքով սահմանված թվից, այդ դեպքում չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են (Ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի 10-րդ մաս),

2) *Գրանցված թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կարգավիճակի վաղաժամկետ դադարեցումը*, օրինակ՝

- եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից (Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մաս),

- նախընտրական հիմնադրամ չբացելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախընտրական հիմնադրամ չբացելու դեպքում իրավասու ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով (Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մաս),

3) *ընտրական գործընթացի առանձին սուբյեկտների իրավունքների սահմանափակումը*, օրինակ՝

- դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության աջակցելու, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն

էապէս խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ (Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մաս),

- գանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապէս խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ տվյալ ներկայացուցչի կողմից կարող է հեռացվել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից (Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի հինգերորդ պարբերություն),

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը, եթե համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից խախտվել են Ընտրական օրենսգրքի պահանջները (Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետ):

Սահմանադրաիրավական պատասխանատվության դեպքերի ներկայացված ցանկը սպառնիչ չէ:

Ընտրական իրավունքների խախտման համար վարչական պատասխանատվություն սահմանված է մի շարք օրենքներով: Օրինակ, տեսալսողական մեդիայի բնագավառում նախընտրական քարոզչության սահմանված կարգը խախտելու համար պատասխանատվության միջոցներ է կիրառում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը: Նշված կարգավորումը սահմանված է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով:

Կամ, եթե հիմնավորվում է, որ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են Ընտրական օրենսգրքով սահմանված ուղղություններով կատարված ծախսերի՝ սահմանված առավելագույն չափը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ, և եթե վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով: Վարչական պատասխանատվության այս միջոցը կիրառում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և այն կարգավորվում է Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով:

Սակայն, ընտրական իրավախախտումների համար վարչական պատասխանատվության հարցերը կարգավորող հիմնական իրավական ակտ է հանդիսանում 1985 թվականի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԻՎՕ), որի հատուկ մասում ընդգրկված «Քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ» վերտառությամբ առաջին գլխի (գլուխ 25) 40.1-40.16 հոդվածներով վարչական պատասխանատվություն է նախատեսվում ընտրական իրավունքի բնագավառում վարչական իրավախախտումների (զանցանքների) համար: Նշված իրավախախտումներ են հանդիսանում.

1) *Նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ*: Իրավախախտումների այս տեսակը վարչական իրավախախտումների ամենամեծաքանակ խումբն է կազմում: Դրանց թվին դասվում են, օրինակ՝ քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելը (ՎԻՎՕ 40.1-րդ հոդված), քվեարկությ-

յան և դրան նախորդող օրը տպագիր մամուլի, կաբելային (մալուխային) ցանցով, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) կամ համացանցի միջոցով քարոզչություն կատարելը (ՎԻՎՕ 40.1-րդ հոդված), զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ, սակագին և այլն չապահովելը (ՎԻՎՕ 40.7-րդ հոդված), նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում հեռուստառադիոընկերությամբ հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրականացվող նախընտրական քարոզչության վերաբերյալ ակնհայտ կողմնակալ և (կամ) գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելը (ՎԻՎՕ 40.7-րդ հոդված), նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը (ՎԻՎՕ 40.11-րդ հոդված) և այլն.

2) *Նախընտրական քարոզչության ֆինանսավորման սահմանված կարգի խախտումներ*: Օրինակ՝ թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, եթե դա բացելը օրենքով սահմանված պարտականություն է, կամ նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը, կամ հայտարարագիրն օրենքով սահմանված կարգի խախտմամբ ներկայացնելը կամ

նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը (ՎԻՎՕ 40.3-րդ հոդված),

3) *ընտրական գործընթացի սուբյեկտների կողմից իրենց լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը*: Օրինակ՝ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը (ՎԻՎՕ 40.2-րդ հոդված), ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը (ՎԻՎՕ 40.4-րդ հոդված), ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը (ՎԻՎՕ 40.6-րդ հոդված), տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (ՎԻՎՕ 40.13-րդ հոդված), տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումն սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը (ՎԻՎՕ 40.14-րդ հոդված),

4) *տեղամասային կենտրոնում և քվեարկության սենյակում ներկա գտնվելու սահմանված կանոնները խախտելը*: Օրինակ՝ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախագուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո) (ՎԻՎՕ 40.15-րդ հոդված), քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկա-

յականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելը (ՎԻՎՕ 40.15-րդ հոդված), քվեարկության օրը տեղամասային կենտրոնին, այդ թվում՝ տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով անձի շարունակական ներկայությունը ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողության նպատակով, եթե այն շարունակվել է բանավոր նախազգուշացումից հետո (ՎԻՎՕ 40.15-րդ հոդված):

2021 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 210-224 հոդվածներով են սահմանված այն ընտրական իրավախախտումները (հանցանքները), որոնց համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1) *ընտրական գործընթացի սուբյեկտների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների կամ լիազորությունների իրականացմանը խոչընդոտելուն ուղղված իրավախախտումներ* (օրինակ՝ անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդված), նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդված), վստահված անձին, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատ-

վության միջոցի ներկայացուցչին ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթին օրենքով սահմանված կարգով ծանոթանալուն խոչընդոտելը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածքը չտալը (ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդված)),

2) ընտրական գործընթացի սուբյեկտների կողմից իրենց լիազորությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն ուղղված իրավախախտումներ (օրինակ՝ ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու սահմանված կարգը խախտելը, դրանք չտրամադրելը կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մաս), ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու անձի կողմից ընտրողների ցուցակները կեղծիք կատարելով կազմելը կամ ընտրողների ցուցակներում կեղծիք կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մաս), ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքով անհնարին է դարձել հանձնաժողովի կողմից ընտրության կամ քվեարկության արդյունքների ամփոփումը (ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդված)),

3) նախընտրական քարոզչության ֆինանսավորման կանոնների խախտմանն ուղղված իրավախախտումները (օրինակ՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից խոշոր չափով չկատարելը կամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապ-

րանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չներառելը, որը կազմել է խոշոր չափ (ՀՀ քրեական օրենսգրքի 221.1-րդ հոդվածի 1-ին մաս), Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարտզույթյան հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ ընկած ժամանակահատվածում չներկայացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 221.1-րդ հոդվածի 2-րդ մաս)),

4) *ընտրությունների (քվեարկության) արդյունքների կեղծմանն ուղղված իրավախախտումներ, այդ թվում՝ ընտրակաշառքի կիրառմամբ (ընտրակաշառք տալը, ստանալը, միջնորդությունը և այլն)* (օրինակ՝ հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը կամ դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը կամ ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելը, ինչպես նաև այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 212-րդ հոդված), կեղծ տվյալ հայտնելու կամ կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ այլ ապօրինի եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդված), անձնական շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն պատրաստելը կամ

ակնհայտ կեղծ քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդված), հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար ընտրակաշառք՝ գույք, ներառյալ՝ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը (ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդված) և այլն),

5) *քվեարկության գաղտնիության խախտմանն ուղղված իրավախախտումներ* (օրինակ՝ քվեարկողի կողմից բաց՝ այլ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար տեսանելի ձևով քվեարկելը, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունը հրապարակելու միջոցով խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մաս), ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը կամ քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողի քվեարկած քվեաթերթիկը ստուգելը կամ քվեարկության խցիկ մուտք գործելը կամ քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մաս):

ԳԼՈՒԽ 4. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

4.1. ԻՆՉՊԻՍԻՆ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

«Ընտրական տեխնոլոգիաներ»-ը համեմատաբար նոր տերմին է նոր երևույթ է ընտրական գործընթացներում: Ընտրական տեխնոլոգիաներն այլ կերպ կարելի է բնութագրել իբրև տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաներ, որոնք վերաբերում են ընտրական գործընթացներում օգտագործվող թվային տարբեր լուծումներին, ինչպիսիք են՝ փաստաթղթերի և ընթացակարգերի թվայնացումը, էլեկտրոնային քվեարկությունն ընտրական տեղամասերում, ձայների էլեկտրոնային հաշվարկը, համացանցի միջոցով քվեարկությունը, վիրտուալ սերվերների (Virtual Services) օգտագործումն ընտրական գործընթացների ժամանակ և այլն: Թեև ընտրական վարչարարությունը՝ ընտրողների գրանցում, թեկնածուների առաջադրում, քվեարկություն, ձայների հաշվարկ, ըստ էության, ընտրական գործընթացների սկզբից հայեցակարգային առումով նույնն է մնացել, սակայն պետք է խոստովանել, որ ժամանակակից ընտրությունների կազմակերպումն այսօր էապես կախված է նորագույն տեխնոլոգիաներից:

20-րդ դարում համակարգչային տեխնոլոգիաները որոշ չափով փոխեցին ընտրությունների վարչարարությունը և քվեարկության անցկացման եղանակները, իսկ այսօր առավել զարգացած տեխնոլոգիաներն առաջարկում են էլ ավելի կտրուկ փոփոխություններ և նոր լուծումներ: Ընտրական գործընթացների թվայնացումն այսօր բավականին լայնորեն է կիրառվում ընտրական գործընթացներում և օրեցօր դրա կիրառումն ավելի է ընդլայնվում՝ հատկապես տեղեկատվական և հաղորդակցական ոլորտում: Ամբողջ աշխարհում

ընտրական կառավարման մարմինների մեծ մասը տարբեր ձևաչափերով փորձում է օգտվել և օգտագործել տեխնոլոգիական նորարարություններն ու լուծումները՝ նպատակ ունենալով բարելավելու ընտրական գործընթացները:

Այս տեխնոլոգիաները տատանվում են ավտոմատացման ամենապարզ հիմնական գործիքների օգտագործումից, ինչպիսիք են տեքստի մշակումը և աղյուսակները, մինչև տվյալների մշակման ավելի բարդ գործիքներ, ինչպիսիք են տվյալների բազայի կառավարման համակարգերը: Ընտրություններում տեխնոլոգիաների կարևոր կիրառություններից մեկն էլեկտրոնային քվեարկությունն է: Էլեկտրոնային քվեարկությունն ունի բազմաթիվ կիրառություններ՝ ներառյալ արտերկրում գտնվող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելը, հաշմանդամություն ունեցող ընտրողների համար ընտրություններն ավելի ներառական դարձնելը և այլն: Թեև այդ տեխնոլոգիաները բացում են նոր սահմաններ և առաջարկում նոր հնարավորություններ ու լուծումներ ընտրական գործընթացի համար, սակայն միևնույն ժամանակ պարունակում են չնախատեսված ռիսկեր և կարող են հանգեցնել որոշակի խնդիրների, ինչպիսիք են, օրինակ, ձայների գնումը, ընտրությունների արդյունքների վերահսկման դժվարությունը և այլն: Շատ կարևոր է նաև դիտարկել տեխնոլոգիայի ոչ պատշաճ կամ ոչ ժամանակին ներդրման ռիսկերը, հատկապես, եթե այն կարող է վտանգել ընտրությունների թափանցիկությունը կամ ընտրական գործընթացի կայունությունը: Այդ իսկ պատճառով ընտրական տեխնոլոգիաների ներդրումը կարող է գնահատվել դրական, եթե այդ ձեռքբերումները հավասարակշռված են ընտրությունների թափանցիկության և հանրային վստահության հետ: Շատ երկրներում, հատկապես Եվրոպայում, բավականին վաղուց են սկսել փորձնականորեն կիրառել էլեկտրոնային քվեարկությունը, սակայն այդ երկրներից շատերն այժմ վերադառնում են

քվեաթերթիկին կամ դադարեցնում են իրենց փորձնական նախագծերն անվտանգության խնդիրների պատճառով:

Այդուհանդերձ, այսօր աշխարհում ընտրական գործընթացների կատարելագործումը տեխնոլոգիական համակարգերի միջոցով և դրանց կարգավորող օրենսդրական դաշտը մշտապես փոխվում և զարգանում է, և Հայաստանը բացառություն չէ, և ինչպես ընտրություններ կազմակերպող մյուս մարմինները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդ ուղղությամբ անընդհատ իրականացնում է կատարելագործման և բարելավման աշխատանքներ, փորձելով ունենալ առավել արդյունավետ և գործուն տեխնոլոգիական գործիքներ: Նոր տեխնոլոգիաների ներդրման ու իրականացման հետ միաժամանակ առաջ են գալիս նոր մարտահրավերները, նոր անհայտ ռիսկեր: Հետևաբար, պետք է շատ զգուշորեն մոտենալ տեխնոլոգիաների ընտրությանը:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի՞նն է ընտրական տեխնոլոգիաների դերը Հայաստանում անցկացվող ընտրական գործընթացներում՝ ուշադրության կենտրոնում ունենալով Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներն ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումն ընդգրկող լուծումները:

Ինչպես արդեն նշել ենք, ընտրական իրավունքին, ընտրական գործընթացներին վերաբերող հիմնական պահանջներն ու չափորոշիչները սահմանվում են ոչ միայն տվյալ երկրի ներպետական իրավական ակտերով, այլ նաև մի շարք միջազգային փաստաթղթերով:

Էլեկտրոնային քվեարկության ստանդարտների վերաբերյալ առկա է Եվրոպայի Խորհրդի առաջարկությունը Rec(2017)5, որով սահմանվում է էլեկտրոնային քվեարկությունը՝ որպես էլեկտրոնային միջոցների օգտագործում քվեարկությանը մասնակցելու և (կամ) ձայները հաշվելու համար: Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների տարածքում էլեկտրոնային քվեարկությունն ընդհանուր հասկա-

ցություն է, որը ներառում է տարբեր տեսակ ընթացակարգեր, մասնավորապես՝ էլեկտրոնային քվեարկություն վերահսկվող միջավայրում (օրինակ՝ ընտրական տեղամասում), ինտերնետային քվեարկություն (e-voting) ընտրական հանձնաժողովների վերահսկողությունից դուրս գտնվող միջավայրում (ինտերնետում), ինչպես նաև թղթային քվեաթերթիկների էլեկտրոնային հաշվարկ՝ հաշվիչ մեքենաներով՝ օգտագործելով, օրինակ, օպտիկական սկանավորումը և այլն:

Արտերկրում բնակվող կամ գտնվող ՀՀ քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքի իրացման հետ կապված հիմնախնդիրը, թեև մասամբ, կանոնակարգվեց 2011թ. ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և սահմանվեց, որ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ընտրելու իրավունք ունեցող առանձին կատեգորիայի ընտրողներ ունեն Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու հնարավորություն՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով: Այս քվեակարգը պահպանվեց նաև 2016 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքում:

Հարկ է նկատել, որ էլեկտրոնային եղանակով քվեարկության առավել մատչելի և արդյունավետ կառուցակարգեր սահմանելու և այդ եղանակով քվեարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակն ընդլայնելու մոտեցումը բխում է մարդու իրավունքներից և ժողովրդավարական սկզբունքներից և համահունչ է միջազգային ընտրական և ժողովրդավարական չափանիշներին:

Չնայած էլեկտրոնային եղանակով քվեարկությունը ենթարկվում է խիստ քննադատությունների և պարունակում է մեծ ռիսկեր, այդուհանդերձ, ժամանակակից աշխարհում նորագույն տեխնոլոգիաների զարգացման և ներդրման պայմաններում այն կարող է հանդիսանալ արդյունավետ միջոց ընտրական իրավունքի լիարժեք իրացման համար, իսկ այս եղանակով քվեարկելու հնարավորությո-

յան ընդլայնումն ու ներդնումը կարող է օգնել դիմակայելու նաև արտակարգ դրության պայմաններում ընտրությունների կազմակերպման և անցկացման մարտահրավերներին:

2020 թվականի պանդեմիայի պայմաններում գրեթե բոլոր երկրներում չեղարկվեցին նշանակված ընտրությունները, Հայաստանում չկայացավ սահմանադրական բարեփոխումների հանրաքվեն, մի շարք համայնքներում չնշանակվեցին և չանցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Որպես կանոն, ցանկացած իրավական համակարգի թե՛ արդյունավետությունը, թե՛ ճկունությունը, և թե՛ օրենսդրական բացերն ի հայտ են գալիս արտակարգ իրավիճակներում: Ինչպես ցույց տվեց 2020 թվականը, ստեղծված իրավիճակում ընտրական համակարգերը բախվեցին լուրջ խնդիրների՝ ընտրությունների և ընտրական գործընթացների անցկացման և ընտրական իրավունքի իրացման առումով: Նմանատիպ մարտահրավերներով և ընտրական տեխնոլոգիաների օրեցօր ընդլայնվող շրջանակի և շարունակական զարգացման տեմպերով պայմանավորված էլ ավելի արդիական է դառնում ընտրական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման ստանդարտների հարցերում միասնական մոտեցումներ և հայեցակարգային կարգավորումներ ձևավորելու հրամայականը:

4.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ընտրական օրենսգրքի, «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի, «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներից ելնելով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներդրված են և շահագործվում են մոտ 3 տասնյակ էլեկտրոնային համակարգեր և առցանց հարթակներ⁷⁹:

⁷⁹ <https://www.online.elections.am/> - Էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգ, Տեղամասում ընտրողների նույնականացման համակարգ,

«Ընտրություններ» ավտոմատացված համակարգ

Նշված համակարգն ունենալու պահանջը սահմանված է Ընտրական օրենսգրքով: Համակարգը ներդրվել և առաջին անգամ կիրառվել է Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ 2007թվականին, և մինչ օրս Հայաստանում ընթացող բոլոր ընտրությունների գործառույթների ավտոմատացումն իրականացվում է այս համակարգով, որի ծրագրային ապահովումը ներառում է տվյալների սխալ մուտքագրումից պաշտպանող ողջամիտ երաշխիքներ և մուտքագրվող տվյալների ստուգման հնարավորություններ: «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով հաշվարկվում և արձանագրվում է ընտրական տեղամասում անձշտությունների չափը, իրականացվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների աղյուսակավորումը:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստր

2005 թվականին ՀՀ ընտրական օրենսգրքում իրականացված

Ընտրողների կենտրոնական տեղեկատվական համակարգ (CVIS), <https://initiative.elections.am/> - Էլեկտրոնային եղանակով ստրագրությունների առցանց ստորագրահավաքի համակարգ, <https://eapp.elections.am/> - մասնագիտական դասընթացներին մասնակցելու հայտերի առցանց ընդունման, դասընթացների կազմակերպման, անցկացման և ամփոփման համակարգ, <https://search.elections.am/> դասընթացների մասնակցելու դիմումների առցանց հետևելու համակարգ, https://elearning.elections.am - հեռահար ուսուցման համակարգ, https://vad.elections.am - ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների (VAD) մասնագետների ռեեստրի վարման համակարգ, <https://e-lists.elections.am> Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգ, <https://e-lists.elections.am> տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգ, <https://dashboards.elections.am/> Քվեարկության արդյունքների իրական ժամանակում առցանց հրապարակման համակարգ, Հանձնաժողովի կայքի, ներդրված համակարգերի կառավարման վահանակ, <https://accreditation.elections.am/> ՁԼՄ ներկայացուցիչների և դիտորդների տվյալների առցանց ընդունման համակարգ և այլն:

փոփոխություններով⁸⁰ ընտրական օրենդրություն ներմուծվեց ընտրողների ռեգիստրի ինստիտուտը: Եվ ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը կազմելու և վարելու լիազորությունը վերապահվեց քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր լիազոր մարմնին, և սահմանվեց, որ լիազոր մարմինը ՀՀ ընտրողների ռեգիստրը համապետական ընտրությունների դեպքում՝ նաև ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ հանձնաժողովի կայքում տեղադրելու համար:



Էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգ

Էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգը ներդրվել և կիրառվում է 2012 թվականից: Հարկ է նկատել, որ էլեկտրոնային քվեարկության կազմակերպումն ու անցկացումը պետք է բավարարի որոշակի ստանդարտների և պահանջների: Էլեկտրոնային քվեարկությունը ևս պետք է հիմնվի ընտրությունների համար սահմանված ժողովրդավարական սկզբունքների վրա և համապատասխանի Եվրախորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2004 թվա-

⁸⁰ <https://www.arlis.am/>, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.05.2005թ. ՀՕ-101-Ն ՀՀ օրենք

կանին ընդունած՝ էլեկտրոնային քվեարկության իրավական, կիրառական և տեխնիկական չափանիշների վերաբերյալ R(2004)11 հանձնարարականով սահմանված պահանջներին, որի համաձայն՝ էլեկտրոնային քվեարկությունը պետք է հիմնվի ընտրությունների սկզբունքների վրա և պետք է լինի նույնքան հուսալի և անվտանգ, որքան առանց էլեկտրոնային միջոցների օգտագործման անցկացվող ընտրությունները:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցելու իրավունք վերապահվում է միայն առանձին սուբյեկտների՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողներին և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամներին, օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողներին:

Միաժամանակ, Ընտրական օրենսգրքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար սահմանում է պարտավորություն էլեկտրոնային եղանակով քվեարկության կազմակերպումն ու անցկացումն ապահովելու նպատակով սահմանել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն էլեկտրոնային եղանակով քվեարկողների կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. հունիսի 17-ի N 32-Ն որոշմամբ⁸¹ սահմանված կարգի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն էլեկտրոնային եղանակով քվե-

⁸¹ «Ազգային Ժողովի ընտրություններին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների՝ էլեկտրոնային եղանակով քվեարկության կարգը և ժամկետները սահմանելու մասին» ԿՐՀ 17.06.2016թ. N 32-Ն որոշում

րակությունն ապահովում է համացանցի միջոցով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, սահմանված կարգի համաձայն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրում է էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների թվին համապատասխան անհատական ծածկագրեր պարունակող ծրարներ՝ ընտրողներին ուղարկելու համար: Անհատական ծածկագիրն իրենից ներկայացնում է գներացված եղանակով ստացված վեցանիշ թիվ, որը պատված է պաշտպանիչ շերտով: Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողներին փոխանցվելիք ծրարները տրամադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ կնքված վիճակում: Ծրարում տեղադրվում է նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության կարգի և ժամկետների վերաբերյալ ուղեցույց:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում գործարկվող էլեկտրոնային եղանակով քվեարկության կարգը համապատասխանում է 2004 թվականին Եվրախորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ էլեկտրոնային քվեարկության իրավական, կիրառական և տեխնիկական չափանիշների վերաբերյալ R (2004)11 հանձնարարականով սահմանված չափանիշներին: Հատկանշական է, որ վերոնշյալ հանձնարարականում նշվում է, որ էլեկտրոնային քվեակարգ ներդնելիս, ի թիվս այլ պայմանների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ երկրի քաղաքական մշակույթը: Սակայն, կարծում ենք, որ էլեկտրոնային եղանակով քվեակարգի, հատկապես համացանցի միջոցով էլեկտրոնային քվեարկության իրականացման համար, էական նախապայման պետք է հանդիսանա հանրային բարձր վստահությունն ընտրական մարմինների և ընտրական վարչարարության նկատմամբ:

Էլեկտրոնային քվեարկության մասին խոսելիս՝ օբյեկտիվորեն ծագում են մի շարք հարցեր. ինչպե՞ս կարող է հասարակությունը վստահ լինել, որ էլեկտրոնային քվեարկության համակարգի «անտեսանելի արկղը» կամ, ինչպես ընդունված է ասել, «սև արկղը», ա-

նում է այն, ինչ պետք է անի, և ճիշտ արձանագրում է ընտրողի կամքը, ինչպե՞ս անել, որ անվերահսկելի միջավայրում (համացանցում) իրականացվող ընտրությունը լինի դիմակայուն հարկադրանքի նկատմամբ, ինչպե՞ս ապահովել էլեկտրոնային քվեարկության անվտանգությունը:

Էլեկտրոնային քվեարկության վերաբերյալ Գերմանիայի Սահմանադրական դատարանի 2009թ. մարտին կայացված որոշմամբ⁸²՝ դատարանը ժողովրդավարության և հանրապետական պետության գաղափարներից բխեցրեց հանրային ընտրությունների հասարակական բնույթի սկզբունքը, որը մեկնաբանվեց հետևյալ կերպ. նախ՝ «ընտրություններում բոլոր կարևոր քայլերը պետք է ենթարկվեն հանրային քննության, եթե այլ սահմանադրական շահերը չեն արդարացնում բացառության առկայությունը», և երկրորդ. «Էլեկտրոնային քվեարկության մեքենաների կիրառման դեպքում քաղաքացին պետք է հնարավորություն ունենա արժանահավատորեն և առանց հատուկ փորձաքննության ստուգելու քվեարկության գործընթացի և արդյունքի որոշման հիմնական քայլերը»: Դատարանի նշյալ որոշմամբ՝ էլեկտրոնային քվեարկության կիրառման պարագայում, արձանագրվեց նաև, որ ընտրողն ինքը, նույնիսկ առանց հատուկ համակարգչային գիտելիքների պետք է կարողանա և ունենա հնարավորություն ստուգել քվեարկության իրականացման, արդյունքների հաշվարկման և ամփոփման հիմնական քայլերը, և բավարար չէ, եթե նա միայն էլեկտրոնային ծանուցմամբ տեղեկացվի, որ իր ձայնը գրանցվել է, քանզի այն թույլ չի տալիս ընտրողին իրականացնել բավարար վերահսկողություն: Միննույն ժամանակ, Դատարանը համարեց, որ բավարար չէ, որ ընտրություններում օգտագործվող սարքավորումները փորձարկվեն ընտրություններին ընդառաջ՝ անվտանգության որոշակի պահանջներին համապատասխանելու և դրանց պատշաճ տեխնիկական գործառույթները ստուգելու համար: Ըստ Դատարանի՝ ընտրությունների գործընթացի նկատմամբ հա-

⁸² BVerfGE 123, 39 (39) <https://www.servat.unibe.ch/dfr/bv123039.html>

սարակության վստահությունը կառուցվում է ոչ թե փորձարարական գործընթացների միջոցով, այլ ընտրությունների հանրային վերահսկողության միջոցով, հետևապես բոլորը պետք է ունենան հնարավորություն ստուգելու էլեկտրոնային քվեարկության համակարգը, երբ այն իրականում օգտագործվում է ընտրություններում:

Գերմանիայի դատարանի նշված որոշումը վկայակոչվել է այլ երկրների դատական և իրավական ակտերում, օրինակ՝ Հնդկաստանի Գերագույն դատարանի և դրա հետ կապված Ընտրական հանձնաժողովի որոշման մեջ⁸³: «Էլեկտրոնային քվեարկության ստանդարտների հանձնարարականով» (CM/Rec(2017)5)⁸⁴ նախատեսվում է, որ ինտերնետային քվեարկությունը ներկայացվի միայն որպես լրացուցիչ գործիք՝ նկատի ունենալով համընդհանուր ընտրական իրավունքի ապահովման դրույթը, որն ունի մի քանի այլ ասպեկտներ: Էստոնիայում և Նորվեգիայում ինտերնետ քվեարկությունը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե հնարավոր է «բազմակի» քվեարկություն, իսկ ընտրական տեղամասում կատարված քվեարկությունը գերադասվում է նախորդ էլեկտրոնային քվեներից, որի նպատակն ընտրողի կողմից ընտրական մարմնի վերահսկողությունից դուրս գտնվող միջավայրում (համացանցում) քվեարկության ժամանակ ընտրողի առջև ծառայած հարկադրանքի ռիսկը մեղմելն է: Իսկ, օրինակ, Շվեյցարիայում չի թույլատրվում բազմակի քվեարկություն, քանի որ այդ ընթացակարգը պետք է տարածվեր նաև փոստային քվեարկության վրա: Շվեյցարիայում փոստային քվեարկությունը ներդրվել է, որպեսզի ուղղակի ժողովրդավարությունը գործի անխոչընդոտ ու սահուն և հարմարավետ լինի ընտրողների համար: Փոստային քվեարկության ընթացքում քվեարկության բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ քվեաթերթիկները, ընտրողի քարտը և պաշտոնական բացատրական նյութը, բոլոր ընտրողներին ու-

⁸³ Էլեկտրոնային քվեարկության նախադեպային օրենք. համեմատական վերլուծություն, Routledge 2015

⁸⁴ Standards for e-voting - Recommendation CM/Rec(2017)5 - Guidelines and explanatory memorandum (2018)

դարկվում են փոստով, իսկ թե ինչպե՞ս վերադարձնել իրենց քվեաթերթիկը՝ որոշում են ընտրողները: Նրանք կարող են այն հետ ուղարկել փոստային առաքմամբ կամ նետել հատուկ փոստարկղ: Եվ քանի որ փոստով քվեարկելու դեպքում ընտրողներին թույլատրվում է իրենց ձայնը տալ նախքան ընտրությունների օրը, ապա բազմակի քվեարկության ընթացակարգի կիրառումը գործնականում անհնար է: «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ցուցումներ և Բացատրական զեկույցի» 1-ին բաժնի 3.2.«iii» կետով նշված է. «Փոստային քվեարկությունը պետք է թույլատրվի միայն այն դեպքում, երբ փոստային ծառայությունն ապահով և հուսալի է: Փոստային քվեների միջոցով քվեարկելու իրավունքը կարող է սահմանափակվել այն մարդկանցով, ովքեր գտնվում են հիվանդանոցում, կամ բանտարկված կամ սահմանափակ շարժունակություն ունեցող անձանցով, կամ արտասահմանում բնակվող ընտրողներով: Խաբեությունն ու ահաբեկումն անթույլատրելի են⁸⁵»:

Ֆրանսիայում ևս ինտերնետով քվեարկությունն առաջարկվում է երկրից դուրս գտնվող ընտրողներին, իսկ էլեկտրոնային եղանակով բազմակի քվեարկության փոխարեն Ֆրանսիան փորձում է էլ ավելի բարձրացնել տեղեկատվության և իրազեկության մակարդակը՝ հարկադրանքի և ինտերնետային քվեարկության այլ դժվարությունների վերաբերյալ:

Քվեարկության արդյունքների իրական ժամանակում՝ առցանց հրապարակման համակարգ: Համակարգը ներդրվել է 2007 թվականին, արդիականացվել է 2012 թվականին, իսկ վերջին տարբերակն առաջարկվել է 2021 թվականին: Համապետական ընտրությունների և հանրաքվեի ժամանակ համակարգն ապահովում է քվեարկության մասնակցության և քվեարկության արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային ե-

⁸⁵ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ցուցումներ և Բացատրական զեկույց 190/2002 CDL-AD (2002) 23, Ընդունված Վենետիկյան հանձնաժողովի կողմից 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002թ. հոկտեմբերի 18-19)

ղանակով ստացված տեղեկությունների հրապարակումն իրական ժամանակում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ընտրողների կենտրոնական տեղեկատվական համակարգ (CVIS): Համակարգը, որը մշակվել է «Մնարթմատիկ»⁸⁶ ընկերության կողմից, հնարավորություն է տալիս ստանալ ընտրողների նույնականացումը և տեղամասերում ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումներից ներբեռնվող ընտրողների ցուցակները, քվեարկության ավարտից հետո այդ սարքավորումներից հավաքագրել տեղեկատվությունը, ստանալ տվյալների համախմբված մեկ ընդհանուր շտեմարան, կատարել տարբեր վերլուծություններ, ստանալ անհրաժեշտ հաշվետվություններ:

Ընտրողների տվյալների բազան, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված



⁸⁶ Smartmatic-ը մասնավոր ընկերություն է, որը հիմնադրվել է 2000թ.-ին՝ ԱՄՆ-ում: Ներկայումս ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Միացյալ Թագավորությունում: Ընկերությունն Ընտրական ենթակառուցվածքի ենթաոլորտի ներքին անվտանգության խորհրդի հիմնադիր անդամ է: <https://www.smartmatic.com>: Smartmatic-ի կողմից ստեղծված սարքավորումներն օգնել են ավելի քան 30 երկրների, այդ թվում՝ Հայաստանի, ընտրական հանձնաժողովներին արդիականացնել իրենց ընտրությունները, ամբողջությամբ ավտոմատացնելով կամ թվայնացնելով ընտրական գործընթացների որոշակի փուլերը: Smartmatic-ը ավելի քան 2 միլիոն սարք է տեղադրել ավելի քան 140 ընտրություններում, այդ թվում՝ քվեարկության մեքենաներ և ընտրողների գրանցման և կենսաչափական ստուգման սարքավորումներ: Հայաստանը 2017թ. «Մնարթմատիկ» («Smartmatic») ընկերությունից ձեռք բերեց ընտրողների գրանցումն իրականացնող 4.500 հատ տեխնիկական սարքավորում: Ընկերությունն իրականացրել է նաև տեխնիկական և ծրագրային ապահովումը և CVIS հավելվածի անխափան աշխատանքը:

ընտրողների ցուցակը ձևավորվում է բնակչության պետական ռեգիստրից: Լիազոր մարմինը քվեարկության օրվանից 8 օր առաջ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակներն ունեն հատուկ ծրագրային ապահովում: Էլեկտրոնային ցուցակները պարունակում են՝ ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը՝ համապատասխան հաշվառման փաստաթղթերում առկայության դեպքում), այն ընտրական տեղամասի համարը, որի ցուցակում է ընդգրկված ընտրողը, ընտրողի հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, ընտրողի ծննդյան ամսաթիվը, ընտրողի հաշվառման վայրի հասցեն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների դեպքում՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն, ընտրողի անձը հաստատող վավեր փաստաթղթերի համարները (նույնականացման քարտի, կենսաչափական անձնագրի և ոչ կենսաչափական անձնագրի համարը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՀՀ քաղաքացիություն չունեցող ընտրողի՝ Ընտրական օրենսգրքով նշված անձը հաստատող փաստաթղթի համարը), տվյալ տարածքի ընտրողների համար՝ նաև թվային շտեմարանում առկա լուսանկարը (եթե ընտրողը ստացել է նույնականացման քարտ կամ կենսաչափական անձնագիր կամ ոչ կենսաչափական անձնագիրը ստացել է 2008 թվականի հունվարի 1-ից հետո):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ընտրողների կենտրոնական տեղեկատվական համակարգի (CVIS) միջոցով ստանում է հիշողության գլխավոր կրիչները, որից հետո իրականացվում է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա, ինչպես նաև պատահական

ընտրանքի սկզբունքով իրականացվում է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

Տեղամասում ընտրողների նույնականացման և գրանցման համակարգ

Այս համակարգը, որը ևս մշակվել է Մմարթմատիկ ընկերության կողմից, հնարավորություն է տալիս քվեարկության օրը ընտրական տեղամասում Ընտրողների նույնականացման սարքավորումում (Voter Authentication Device (VAD)) տեղադրված տվյալների հիման վրա նույնականացնել ընտրողին և գրանցել՝ բացառելով կրկնակի գրանցումը և այլ տեղամասի ընտրողի գրանցումը:



Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում

առաջին անգամ ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորումների կիրառմամբ իրականացվեց Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ և 1997 տեղամասերում գործարկվեցին 4.000 տեխնիկական սարքավորումներ:

Տեխնիկական սարքավորումները, սահմանված կարգի համաձայն, ունեն քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործված մեկից ավելի տեխնիկական սարքավորումների աշխատանքը սինքրոնիզացված է, ինչը հնարավորություն է տալիս ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով: Քանի որ մեկ ընտրական տեղամասում կիրառվող բոլոր տեխնիկական սարքավորումները միացվում են

ներքին ցանցով և գործում են սինքրոնավորված, դրանք տրամադրում են միատեսակ տեղեկություններով տեղեկանքներ, բացի սարքավորման համարից և տեղեկանքի տպման ժամից:

Ըստ Ընտրական օրենսգրքի՝ քվեարկության օրը, մինչ քվեարկությունը սկսելը և առաջին ընտրողին նույնականացնելը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ մասնագետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները (տեղամասի կոդը) և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք:


Ընտրողների գրանցման համար ձեռնարկվում են հետևյալ քայլերը.

Քայլ 1-ին	Ինքնության ստուգում լուսանկարի միջոցով
Քայլ 2-րդ	Անձը հաստատող փաստաթղթի ներմուծում սարքավորման մեջ կամ տվյալների մուտքագրում ստեղծաշարով
Քայլ 3-րդ	Ընտրողի մատնահետքի ներմուծում և քվեարկության կտրոնի տպում

Յուրաքանչյուր ընտրող ընտրական տեղամասում առաջինը մոտենում է սարքավորումը սպասարկող մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը: Եթե ընտրողը ներկայացրել է անձնագիր կամ նույնականացման քարտ, ապա մասնագետը ստուգում է ընտրողի ինքնությունը՝ ներկայացված փաստաթուղթում առկա լուսանկարի միջոցով, և ներկայացված փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ:

Եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման կողմից չի ընթերցվում, ապա մասնագետը ստեղծաշարով ներմուծում է ներկայացված փաստաթղթում ամրագրված անձնագրի կամ նույնականացման քարտի կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող ընտրողի անձը հաստատող փաստաթղթի համարը տեխնիկական սարքավորման մեջ:


Եթե ընտրողը գրանցված է տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացրել է նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը կամ 2008 թվականի հունվարի 1-ից հետո տրված ոչ կենսաչափական անձնագիրը և առ այդ պահին անձը հաստատող որևէ փաստաթղթով չի մասնակցել քվեարկությանը, ապա էկրանին հայտնվում են տվյալ ընտրողի լուսանկարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը և կանաչ նշանը:



Եթե ընտրողը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է դեղին նշանը, իսկ եթե տեխնիկական սարքավորման մեջ առկա է համապատասխան տեղեկատվություն, ապա նաև այն ընտրական տեղամասի համարը, որի ցուցակում ընդգրկված է այդ ընտրողը:

Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է կարմիր նշանը, ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը, ընտրական տեղամասի ընտրողների

ցուցակում հերթական համարը հայտնվում են էկրանի վրա «ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՅՄԱՆ ՓՈՐՉ» ծանուցման հետ մեկտեղ, ինչպես նաև էկրանին հայտնվում է այն փաստաթղթի համարը, որով անձն արդեն գրանցված է եղել տվյալ տեղամասում և գրանցման ամսաթիվն ու ժամը: Կարմիր նշանի դեպքում տեխնիկական սարքավորման վրա միանում է նաև ձայնային ազդանշան: Ի դեպ, այս լրացուցիչ տվյալները սահմանել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:



Այն դեպքում, երբ էկրանին հայտնվում է կանաչ նշան, ընտրողը ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը: Դրա անհնարինության դեպքում մատնահետքը ներմուծվում է հետևյալ առաջնայնությամբ՝ ձախ ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ձախ ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ձախ ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ձախ ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ձախ ձեռքի բթամատը: Մատնահետքը ներմուծելու անհնարինության դեպքում մատնահետք ներմուծման քայլը բաց է թողնվում: Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը, իսկ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում՝ նաև ընտրողի լուսանկարը պարունակող քվեարկության կտրոն:


Քվեարկության ավարտից հետո տեխնիկական սարքավորման միջոցով տպվում է տեղեկանք, որում նշվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարը:

ները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պարունակում է նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով:

Ընտրական օրենսգրքի պահանջների համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ունի պարտականություն նախապես հրապարակել հայտարարություն ընտրողների էլեկտրոնային ցուցակների՝ ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների բաժանման և տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա ներբեռնման աշխատանքների իրականացման վայրի և ժամանակի մասին, որին կարող էին հետևել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) լիազոր ներկայացուցիչներն ու վստահված անձինք՝ միաժամանակ իրականացնելով նշված գործառույթների համացանցային հեռարձակումը՝ ուղիղ ժամանակային ռեժիմում: Ընտրական գործընթացի թափանցիկությունն ու վերահսկողությունն ապահովելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման վերստուգման համապատասխան կողերը տրամադրում է ընտրություններին մասնակցող և դիմում ներկայացրած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ներկայացուցիչներին:

Քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա տեղեկատվությունը փոխանցվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով, և նրանց վրա առկա տեղեկատվությունը վերբեռնվում է Ընտրողների տեղեկատվական կենտրոնացված համակարգ: Տեղեկատվությունն օգտագործվում է Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, որի համա-

ձայն՝ Ազգային ժողովի ընտրության ժամանակ նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո, տեխնիկական սարքավորումներից ստացված տվյալները հատուկ համակարգչային ծրագրի միջոցով ամփոփվում են, և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակվում են՝



1) տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

2) անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

3) մասնագետի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծարարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

4) տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

5) տեխնիկական սարքավորման կողմից քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը:

Տեխնիկական սարքավորումների հիշողության կիրչներում առկա է նաև տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել նաև ընտրողին նույնականացնելու համար (օրինակ՝ մատնահետքերը): Այսպես, Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Հայաստանի Հանրապե-

տությունից բացակայող անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները քննելիս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզում է, թե անձը, որի վերաբերյալ դիմում է ներկայացվել, արդյո՞ք գրանցվել է տեխնիկական սարքավորման միջոցով, իսկ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված և նույնականացման քարտ ունեցող ընտրողի դեպքում ստուգում է նաև, թե գրանցման ժամանակ հանձնած մատնահետքն արդյո՞ք համընկնում է լիազոր մարմնի կողմից վարվող նույնականացման քարտերի էլեկտրոնային շտեմարանում առկա այդ ընտրողի մատնահետքին:

Ընտրողների տեղեկատվական կենտրոնացված համակարգով արտահանված տեղեկությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից օգտագործվում է տարբեր վերլուծություններ իրականացնելու համար:

Էլեկտրոնային եղանակով ստորագրությունների՝ առցանց ստորագրահավաքի համակարգ: Համակարգը ներդրվել է 2018 թվականից և հնարավորություն է տալիս հանրաքվեի նախաձեռնության ընթացքում ստորագրահավաքն իրականացնել նաև առցանց, էլեկտրոնային եղանակով՝ նույնականացման քարտի միջոցով համակարգում գրանցվելու և ստորագրահավաքին մասնակցելու եղանակով: Առցանց ստորագրահավաքի համակարգ կարելի է մուտք գործել միայն նույնականացման քարտի միջոցով՝ ընթերցող սարքի կիրառմամբ և պետք է մուտքագրել նույնականացման քարտի PIN կոդը, որից հետո համակարգը ներկայացնում է քաղաքացու անձնական տվյալները և այդ ժամանակահատվածում նախատեսված նախագծերի անվանումները: Քաղաքացին ինքն է ընտրում, թե որ նախաձեռնության է ցանկանում միանալ և ընտրում է համապատասխան նախաձեռնության «ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՄ» կոճակը:

Հայաստանում գործում է անձի էլեկտրոնային նույնականացման համակարգ, որը ՀՀ քաղաքացիների համար հասանելի է եղել դեռևս 2009 թվականից: Էլեկտրոնային եղանակով ստորագրությունների՝ առցանց ստորագրահավաքի համակարգը օգտվում է էլեկտ-

րոնային նույնականացման համակարգի տվյալներից: Մակայն, ինչպես նշել ենք, նույնականացման քարտի էլեկտրոնային հնարավորությունների նկատմամբ հասանելիություն ստանալու համար քաղաքացիները պետք է ունենան նույնականացման քարտի ընթերցող սարք և իրենց համակարգչում տեղադրված հատուկ ծրագրային ապահովում: Այդպիսի պահանջների առկայությունը հարգեցրել է նրան, որ թվային նույնականացումն մարդիկ օգտագործում են միայն այն ժամանակ, երբ դա պարտադիր է և չկա այլընտրանք: 2018 թվականին ներկայացվեց ID բջջային լուծումը, որը հնարավորություն է տալիս իրականացնել թվային նույնականացում և ստորագրում բջջային հեռախոսում տեղադրված հատուկ USIM քարտով: Այս եղանակով նույնականացման համար լրացուցիչ սարքավորում անհրաժեշտ չէ, և կարելի է դիտարկել հատուկ USIM քարտով թվային նույնականացման և ստորագրման գործիքի կիրառումն էլեկտրոնային եղանակով ստորագրությունների՝ առցանց ստորագրահավաքի համակարգում:

Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների կազմակերպման, անցկացման և ամփոփման համակարգ: Համակարգով կուսակցություններն առցանց ներկայացնում են իրենց կողմից առաջարկվող անձանց հայտերն ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացին մասնակցելու համար, իրականացվում է հավաքագրված տեղեկատվության վերլուծություն, որի արդյունքում կազմվում է դասընթացների անցկացման ժամանակացույց, ապահովվում է դասընթացի անկացման վայրի և ժամանակի մասին իրազեկումը դիմումատուներին: Դասընթացների աղյուսակներն ամփոփվում են, տրամադրվում են համապատասխան վկայականները: Համակարգը թույլ է տալիս դիմումատուներին ինքնուրույն հետևել իրենց դիմումին և ծանոթանալ արդյունքներին:

Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգ: Համակարգով օգտվողի հաշիվ ունեցող կուսակցությունը, կուսակցությո-

յունների դաշինքը մուտքագրում է իր ընտրական ցուցակներում ընդգրկված անձանց տվյալները: Համակարգն ցուցակում ընդգրկված անձանց տվյալներն ստանում է բնակչության պետական ռեգիստրից, ստուգում է ցուցակի համապատասխանությունն Ընտրական օրենսգրքի պահանջներին:

Իսկ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների վարման գործիքը հնարավորություն է ընձեռում մատչելի և հարմար ձևաչափով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ներկայացնել ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների վերաբերյալ տեղեկատվությունը: Այդ գործիքով իրականացվում են ընտրական ցուցակներում տեղի ունեցող փոփոխությունները՝ թեկնածուների ինքնաբացարկ, գրանցման մերժում, գրանցման ուժը կործրած ճանաչելը, ընտրվելը, պատգամավորի կամ ավագանու անդամի լիազորությունների դադարումը և մանդատը հերթական հաջորդ համարին տրամադրելը և այդ տեղեկատվությունն իրական ժամանակում հրապարակումը կայքում:

Կենտրոնական ընտրական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթների հրապարակման գործիք և վարչական վարույթների վարման համակարգ: Համակարգով իրականացվում է ստացված դիմում-բողոքների վերբեռնումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք, վարույթի քննարկման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ ծանուցումը, քննարկման արդյունքների վերբեռնումը կայք և ամբողջական տեղեկատվության հրապարակումը ԿԸՀ կայքում: Համակարգով հնարավոր է պահպանել վարույթների պատմությունը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից մինչև դատական ակտի ընդունում:

Առցանց ուսուցման հարթակ (<https://elearning.elections.am>): Այս հարթակի նպատակն է ապահովել առցանց ուսումնական նյութեր ընտրական հանձնաժողովի անդամների, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների և ընտրական գործընթացի այլ

մասնակիցների և շահառուների համար: Առցանց ուսուցման հարթակում տեղադրված են ուսումնական մոդուլներ, որոնք հնարավորություն են տալիս ընտրական հանձնաժողովի անդամներին, անձինույնականացման սարքավորումների մասնագետներին, դիտորդներին, վստահված անձանց և այլ շահառուներին ծանոթանալու բոլոր ուսումնական նյութերին, որոնք վերաբերում են իրենց իրավունքներին ու պարտականություններին, ընտրական օրենսդրությանը, այլ նյութերին, որոնց շահառուն կարող է լինել յուրաքանչյուր ոք:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգ: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտները (Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ) առցանց ներկայացնում են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուներին:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների (VAD) մասնագետների ռեեստրի վարման համակարգ: Այս համակարգը նախատեսված է ընտրողների նույնականացման սարքավորումների տեղաշարժման գործընթացն առավել վերահսկելի դարձնելու և տվյալները կենտրոնացված եղանակով պահելու համար: Նշված համակարգը հնարավորություն է տալիս համապատասխան լիազորություններ ունեցող օգտատերերին ոչ միայն կառավարել տեխնիկական սարքավորումների տեղաշարժման գործընթացը, այլ նաև յուրաքանչյուր ընտրության համար ստեղծել (անհրաժեշտության դեպքում՝ խմբագրել/հեռացնել) «Ընտրություններ» տեղեկատվական շտեմարան՝ կենտրոնացնելով ընտրողների, ընտրատեղամասերի և օպերատորների տվյալները մի հարթակում: Համակարգը հնարավորություն է տալիս նաև վարել ընտրություններում ներգրավված բոլոր օպերատորների ցանկերը և նրանցից յուրաքանչյուրի համար ստանալ ծառայությունների մատուցման պայմանագիր:

Հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի տեղամասերի ցանկի հրապարակման գործիք, որով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ցուցադրվում են տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասերը՝ որոնման հնարավորությամբ: Այս գործիքը հնարավորություն է ընձեռում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց տեղեկանալ այն տեղամասային կենտրոնների գտնվելու վայրերի մասին, որոնք հարմարեցված են նման խնդիրներ ունեցող անձանց համար, որպեսզի ցանկության դեպքում փոխեն իրենց տեղամասային կենտրոնը՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

ԶԼՄ ներկայացուցիչների և դիտորդների տվյալների առցանց ընդունման համակարգ: Այս համակարգի միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները և զանգվածային լրատվության միջոցներն առցանց ներկայացնում են իրենց դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների ցանկը: Կազմակերպության հավատարմագրման դեպքում դիմումի ուղարկման էլեկտրոնային հասցեով կազմակերպությանն է ուղարկվում օգտահաշիվ՝ կազմակերպության հետագա գրանցումներն իրականացնելու համար: Օգտահաշվի օգնությամբ կազմակերպությունը մուտքագրում է հավատարմագրման համար ներկայացվող անձի (դիտորդի) տվյալները՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց դեպքում՝ միայն անձը հաստատող վավեր փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց դեպքում մուտքագրվում են ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն: Դիտորդներին տրվող վկայականներն ինքնաշխատ կերպով գեներացվում են Հանձնաժողովի համացանցային կայքում և անմիջապես հասանելի դառնում կազմակերպությանը՝ ներբեռնման

և տպագրության համար: Դիտորդին տրվող վկայականը պարունակում է նաև արագ արձագանքման ծածկագիր (QR կոդ), որը հնարավորություն է տալիս հավաստիանալու, որ տվյալ դիտորդը հավատարմագրված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Քվեարկության ամբողջ ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և հեռարձակում ուղիղ ժամանակային ռեժիմում: Ընտրական օրենսգրքի համաձայն՝ 2017 թվականից Ազգային ժողովի ընտրությունների, իսկ 2023 թվականից նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ կառավարության սահմանած կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությունն իրականացնում է ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով: Տեսանկարահանումն իրականացվում է անշարժ տեսախցիկների միջոցով: Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, ընտրողների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները, ինչպես նաև հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և տեղամասային կենտրոնի համարը: Տեսանկարահանումը և համացանցային հեռարձակումը պետք է իրականացվեն քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ: Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ տեսանկարահանվում և ուղիղ ժամանակային ռեժիմում հեռարձակվում են նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը և վերահաշվարկի աշխատանքները: Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և ընտրատա-

րածքային ընտրական հանձնաժողովի համարը:

Նշենք, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերը հեռարձակվում են ուղիղ ժամանակային ռեժիմում դեռևս 2013 թվականից:

Այս և մյուս ինստիտուտներն ապահովում են ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար լիակատար վերահսկողություն և ըստ անհրաժեշտության՝ ապահովում են խախտված իրավունքների պաշտպանության իրականացում: Այսպես, ընտրական տեղամասում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրականացված տեսանկարահանված նյութերը հասանելի են մնում կայքում մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը: Տեսանկարահանված նյութերի պատճենները գրավոր դիմումի հիման վրա կարող են տրամադրվել ընտրական հանձնաժողովներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին և դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններին՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի շրջանակներում:

Ինչ խոսք, նոր տեխնոլոգիաները կարող են բարձրացնել ընտրողների մասնակցությունը, հնարավորություն ընձեռել ավելի արագ հաշվարկել քվեարկության արդյունքները, ինչի արդյունքում նվազում է մարդու կողմից թույլ տրված սխալների հավանականությունը: Նոր տեխնոլոգիաներն ավելի արդյունավետ են նաև ծախսերի տեսանկյունից: Այդուհանդերձ, այդ տեխնոլոգիաների կիրառումը լուրջ մտահոգություններ է առաջացնում ընտրական գործընթացների թափանցիկության, վերահսկողության և անվտանգության տեսանկյունից: Ցանկացած տեխնոլոգիական լուծում և միջոց պետք է ընտրական գործառույթն իրականացնի ճշգրտորեն՝ օրենսդրության պահանջներին համապատասխան, լինի ապահով և հուսալի: Ցանկացած համակարգ պետք է գործի անխափան, պետք է ապահովված լինի անսարքություններից և կանխամտածված հարձակումներից:

4.3. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Հետևելով աշխարհում ընթացող տեխնոլոգիական փոփոխությունների տեմպերին՝ պետք է արձանագրենք, որ դրանք ընթանում են շատ արագ, և յուրաքանչյուր նոր առաջարկ էլ ավելի բարձր նշանոթ է սահմանում՝ առաջարկելով նոր գործիքներ՝ ավելի լայն հնարավորություններով: Ուստի, ընտրությունների կառավարման մարմինները պետք է պարբերաբար վերանայեն և վերագնահատեն իրենց տեխնոլոգիաների օգտագործումը՝ որոշելու, արդյոք պետք է կիրառել նոր կամ թարմացված տեխնոլոգիաներ՝ ընտրական գործընթացներն ու ընտրական վարչարարությունը բարելավելու համար:

Տեխնոլոգիաներն արդեն իսկ օգտագործվում են ընտրական գործընթացների գրեթե բոլոր փուլերում և էական նշանակություն ունեն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար: Ինչպես նշել ենք, տեխնոլոգիաներն օգտագործվում են ընտրողների ցուցակները կազմելու, ընտրական հանձնաժողովներ ձևավորելու, կառավարելու և վերապատրաստելու, թեկնածուներ առաջադրելու, քվեաթերթիկներ տպելու, ուսուցումներ և իրազեկման արշավներ իրականացնելու, ընտրողներին գրանցելու, որոշ երկրներում քվեները գրանցելու, ընտրությունների արդյունքները հաշվելու և հրապարակելու համար: Միանշանակ է, որ ընտրությունների ժամանակ համապատասխան տեխնոլոգիաների օգտագործումը բարձրացնում է ընտրական վարչարարության արդյունավետությունը ու թափանցիկությունը:

Սակայն, աշխարհում ընտրությունների անցկացման համար օգտագործվող տեխնոլոգիայի բարդության մակարդակը տարբեր է, և ընտրական գործընթացներում օգտագործվող տեխնոլոգիաները կարող են լինել չափազանց տարբեր՝ տպագրական մեքենաներ, սո-

վորական գնդիկավոր զորքներ, էլեկտրոնային հաշվիչներ, համակարգիչներ կամ ավելի նոր՝ օպտիկական սկաներներ, ինտերնետ: Ընտրությունների ժամանակակից նյութատեխնիկական ապահովումը լուրջ մարտահրավեր է տեխնոլոգիաների հասանելիությունն չունեցող երկրների համար:

Կարելի է ակնկալել, որ նոր տեխնոլոգիաները կփոխեն ընտրությունների անցկացման եղանակները 21-րդ դարում: Թեև դժվար է կանխատեսել բոլոր փոփոխությունները, որոնք ապագա տեխնոլոգիաները կարող են բերել ընտրական գործընթացներ, այդուհանդերձ, որոշ փոփոխություններ արդեն իսկ տեսանելի են:

Թղթային քվեաթերթիկից հրաժարվելը:

Թղթային քվեաթերթիկները բավականին ժամանակ է, ինչ ծառայել են ընտրական գործընթացին: Այսօր համեմատաբար հեշտ և էժան է դրանց տպագրությունը, լոգիստիկան, բայց դրանք կարող են բավականին թանկ արժենալ հետագայում թե՛ տպագրության, և թե՛ տարածման տեսանկյունից: Օրինակ, Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների մասնակցող յուրաքանչյուր կուսակցության համար տպագրվում են միննույն չափերի առանձին քվեաթերթիկներ: Ազգային ժողովի 2021 թվականի ընտրությունների ժամանակ քվեարկվող 21 կուսակցությունների և կուսակցությունների 4 դաշինքների քվեաթերթիկների տպագրության համար օգտագործվել է մոտ 70 տոննա թուղթ, իսկ մոտ 65 մլն քվեաթերթիկներից օգտագործվել է 1 281 997 մլն:

Թղթային քվեաթերթիկները տեղամասում ձեռքով հաշվելը, թեև ավելի վստահելի և վերահսկելի է, սակայն լինում են դեպքեր, երբ մարդկային գործոնով պայմանավորված սխալմունքի արդյունքում անհրաժեշտ է լինում նույն քվեաթերթիկները հաշվարկել մի քանի անգամ: Հետևապես, ավելի մատչելի, լոգիստիկայի առումով ավելի հեշտ առաքվող, բազմակի օգտագործման, հուսալի էլեկտրոնային քվեարկության մեթոդների մշակումը կօգնի աստիճանաբար փոխարինի թղթային քվեաթերթիկին:

Ընտրական տեղամասերից հրաժարվելը:

Ընտրական տեղամասը, որը պետք է կահավորվի, որոշ դեպքերում վարձակալվի, հարմարեցվի մի շարք պահանջների մատչելիության տեսանկյունից, առաջացնում է բազմաթիվ խնդիրներ, և հետզհետե կարող են օգտագործվել այլընտրանքային և անվտանգ մեխանիզմներ, և առցանց՝ ինտերնետում քվեարկությունը կարող է փոխարինել ընտրական տեղամասերին: Եվ, քանի որ տեխնոլոգիաները և էլեկտրոնային սարքավորումներն օրեցօր դառնում են ավելի մատչելի, հզոր և ավելի անվտանգ, կարելի է ակնկալել, որ էլեկտրոնային քվեարկությունը կարող է ստանալ ավելի լայն կիրառություն: Ինչքան էլ անվտանգության և ընտրողի նույնականացման հետ կապված մտահոգությունները ստիպում են զգույշ լինել էլեկտրոնային և ինտերնետ քվեարկության կիրառման հարցում, այդուհանդերձ, շատ երկրներ լրջորեն մտածում են այդ ուղղությամբ և ձեռնարկում անհրաժեշտ քայլեր, քանզի այն առավել մատչելի է ընտրողների համար և կարող է բարձրացնել մասնակցությունը:

Ինտերնետ քվեարկության կիրառման հարցում բավականին հետաքրքիր և ուսուցողական է Շվեյցարիայի փորձը: Շվեյցարիան ինտերնետ քվեարկության առաջամարտիկ է, որը կոչվել է «Vote électronique» նախագիծ: Շվեյցարացիներն էլեկտրոնային քվեարկությունը սկսել են կիրառել աստիճանաբար՝ 2000-ական թվականների սկզբից: Ընտրողները մինչև քվեարկության օրը ստանում են քվեարկության մասին բոլոր նյութերը՝ ներառյալ ինտերնետային քվեարկության համար անհրաժեշտ տեղեկությունները (ծածկագրերը) փոստային առաքմամբ, այնուհետև որոշում՝ քվեարկել տեղամասում, փոստով կամ առցանց: Համացանցի միջոցով քվեարկելու համար նրանք մուտք են գործում քվեարկության հատուկ կայք, որն առաջարկում է քվեարկության ինտերֆեյսը: Քվեարկության ընթացքում ընտրողը և համակարգը փոխանակում են մի քանի ծածկագրեր և այլ տեղեկություններ: Ընտրողի նույնականացումից հետո համակարգը համոզվում է, որ քվեարկողն իրավունք ունի ընտրելու, և

որ նա քվեարկում է միայն մեկ անգամ, ընտրողն էլ համոզվում է, որ իր ձայնը գրանցվել է ըստ նախատեսվածի, որը ստանում է քվեարկության համակարգի կողմից: Քվեարկելու համար ընտրողը կարող է օգտագործել անհատական համակարգիչ, պլանշետ, սմարթֆոն կամ ինտերնետին միացված ցանկացած այլ սարք: Ուղղակի ժողովրդավարությունն ու ֆեդերալիզմն ազդել են Շվեյցարիայում ինտերնետային քվեարկության ներդրման և զարգացման ձևի վրա: Ուղղակի ժողովրդավարությունն նշանակում է, որ Շվեյցարիայի քաղաքացիները ոչ միայն ընտրում են իրենց ներկայացուցիչներին, այլև նախաձեռնում և աջակցում են նախաձեռնություններին և հանրաքվեներին՝ դրանք ստորագրելու միջոցով: Հարկ է նշել, որ քաղաքական իրավունքները, այսինքն՝ նախաձեռնությունը, հանրաքվեն և ընտրություններն ավելի զարգացած են կանտոնային/տեղական մակարդակում, ինչը նաև այն վայրն է, որտեղ, ըստ էության, սկզբնապես ներդրվել և փորձարկվել է էլեկտրոնային քվեարկությունը: Ի դեպ, այս մոտեցումը գործել է նաև քվեարկության մեթոդների համար. փոստով քվեարկությունն ի սկզբանե ներդրվել է 1990-ականներին տեղական մակարդակում՝ նախքան տարածվելը բոլոր կանտոններում և բոլոր մակարդակներում:

Իսկ ի՞նչ կարելի է սովորել Շվեյցարիայից: Շվեյցարիայի ինտերնետային քվեարկության նախագծերի զարգացման ճանապարհի ուսումնասիրությունը կարող է օրինակ ծառայել Հայաստանի համար: Նախ՝ ինտերնետային քվեարկությունը պետք է մաս կազմի ավելի լայն ռազմավարության՝ կապված մասնակցության և էլեկտրոնային կառավարման խնդիրների հետ: Շվեյցարիայում դա արվել է փոքր քայլերով, աստիճանական ներդրման, սխալի և փորձարկման եղանակով: Բացի այդ, ընտրողների և քաղաքական կուսակցությունների վստահությունը շահելու նպատակով ինտերնետային քվեարկության ընդլայնումն արվել է բավականին դանդաղ և աճողական կարգով՝ պարզից բարդ, քվեարկություններից ընտրություններ և այլն: Շատ կարևոր է համագործակցությունն անկախ հետա-

զոտություն իրականացնող հաստատությունների հետ, կարևոր է ստուգելիության, անկախ վերահսկողության և առավելագույն թափանցիկության ներդրումը և դրանց ապահովումը: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ Շվեյցարիայում ինտերնետային քվեարկության վերաբերյալ դիրքորոշումները տարբեր են: Եվ, եթե Շվեյցարիայից քաղելու դաս կա, ապա դա այն է, որ որոշումների կայացման, այդ թվում՝ ընտրական գործընթացներում տեխնոլոգիաների ներդրման ընկալումը և շահագործման առավելագույն թափանցիկությունը պետք է հանդիսանան ներդրվող համակարգի օգտագործման վերաբերյալ ցանկացած քննարկման հիմքը:

Համացանցի լայն հասանելիությունը մոտ ապագայում հանգեցնելու է նաև, այսպես կոչված, թվային ժողովրդավարության վերելքին, որով սովորական քաղաքացիները կարող են ուղղակիորեն միանալ և քվեարկել հարցերի ու օրենսդրական նախաձեռնությունների օգտին:

Տեխնիկական միջոցների օգտագործման մեծ և հարուստ փորձ ունի նաև Ռուսաստանի Դաշնությունը: Դեռևս 1995 թվականին Ռուսաստանի Դաշնության Նախագահի հրամանագրի⁸⁷ համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական ընտրական հանձնաժողովին կից ստեղծվեց Դաշնային տեղեկատվական կենտրոն, որին վերապահվեց լրագրություններ՝ լուծելու «Ընտրություններ» պետականավտոմատացված համակարգի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական և մեթոդական աջակցության հետ կապված խնդիրները, ինչպես նաև մշակելու Ռուսաստանի ընտրական համակարգի հետագա թվայնացման ռազմավարությունը:

«Ռուսաստանի Դաշնության «Ընտրություններ» պետական ավտոմատացված համակարգի մասին» դաշնային օրենքն⁸⁸ ընդունվեց

⁸⁷ Указ Президента Российской Федерации от 18 августа 1995 года № 861 «Об обеспечении деятельности Государственной автоматизированной системы Российской Федерации "Выборы"»

⁸⁸ Федеральный закон РФ «О Государственной автоматизированной системе Российской Федерации "Выборы"» от 10.01.2003 N 20-ФЗ

2003 թվականին, որով ամրագրվեցին սկզբունքորեն նոր իրավական սահմանումներ՝ կապված ընտրական գործընթացների ավտոմատացման հետ: Հարկ է նակատել, որ «Ընտրություններ» պետական ավտոմատացված համակարգի մասին» դաշնային օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է.

«1. «Ընտրություններ» պետական ավտոմատացված համակարգը (ГАС "Выборы") հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող դաշնային ավտոմատացված տեղեկատվական համակարգ:

2. «Ընտրություններ» պետական ավտոմատացված համակարգն օգտագործվում է ընտրությունների և հանրաքվեների նախապատրաստման և անցկացման տեղեկատվական գործընթացների ավտոմատացման, ընտրական հանձնաժողովների, հանրաքվեի հանձնաժողովների գործունեության ապահովման համար, ինչպես նաև ընտրությունների և հանրաքվեների հետ չկապված խնդիրների լուծման համար՝ սույն դաշնային օրենքով, դաշնային այլ օրենքներով, Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:»:

«Ընտրություններ» պետական ավտոմատացված համակարգը, ըստ էության, հանդիսանում է տեղեկատվական հարթակ, որը միավորում է բոլոր ընտրական էլեկտրոնային ռեսուրսները, մասնավորապես՝ ընտրողների, առաջադրված, գրանցված, ընտրված թեկնածուների, վստահված անձանց, ընտրական հանձնաժողովների անդամների անձնական տվյալները, քվեարկության ընթացքի և արդյունքների մասին տեղեկատվություն, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցների օգտագործման մասին:

2003 թվականից Ռուսաստանի Դաշնությունում բոլոր ընտրությունները դաշնային և տարածաշրջանային մակարդակներում (ներառյալ քաղաքային) անցկացվում են «Ընտրություններ» միասնական պետական ավտոմատացված համակարգի միջոցով: Համակարգն օգտագործում է ժամանակակից համակարգչային տեխնոլո-

գիաներ, որոնք ապահովում են ընտրությունների և հանրաքվեների անցկացման, արդյունքների ամփոփման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, պահպանումը, ինչպես նաև այդ տեղեկատվության որոնման և տարածման հնարավորությունը:

Ի դեպ, տեխնոլոգիաների օգտագործմամբ ինտերնետ քվեարկության առաջին փորձը Ռուսաստանի Դաշնությունում անցկացվել է 2008 թվականին, Տուլայի մարզի Նովոմոսկովսկ քաղաքում, որը «Ինտերնետ» հանրային տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցից օգտվող ընտրողների էլեկտրոնային հարցումների փորձ էր: Այնուհետ, նոր ընթացակարգի մշակման համար փորձեր են անցկացվել նաև Ռուսաստանի Դաշնության այլ սուբյեկտներում (Վլադիմիրի, Վոլգոգրադի, Վոլգոդայի, Տոմսկի մարզեր և Խանտի-Մանսի Ինքնավար օկրուգ), որոնց արդյունքները հնարավորություն են տվել բացահայտել մի շարք տեխնիկական խնդիրներ՝ կապված համակարգի հուսալիության, աշխատանքի և անվտանգության հետ, ինչպես նաև կարգավորող և իրավական խնդիրներ՝ կապված քվեարկության գաղտնիության ապահովման, ինչպես նաև քվեարկության արդյունքների շահարկումից պաշտպանվելու հետ և այլն:

Ռուսաստանի Դաշնության «Ընտրություններ» պետական ավտոմատացված համակարգի և դրա ենթահամակարգերի միջոցով առավել արագ և արդյունավետ են իրականացվում ընտրողների իրազեկման տեղեկատվության հասանելիության և հրապարակման գործընթացները:

Ռուսաստանի Դաշնությունում ընտրական տեղամասերում գործարկվում են նաև ձայների հաշվման տեխնիկական միջոցներ: Քվեարկության ավարտից հետո տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալները ձայների հաշվման տեխնիկական միջոցներով ավտոմատ փոխանցվում են վերադաս ընտրական հանձնաժողովներ, ընդհուպ՝ Կենտրոնական ընտ-

րական հանձնաժողով, որոնք այդ տվյալներն օպերատիվ ամփոփում և հրապարակում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Դաշնության սուբյեկտների ընտրական հանձնաժողովների կայքերում, ինչպես նաև ապահովում է այդ տվյալների հրապարակումը զանգվածային լրատվամիջոցներով:

Ռուսաստանի Դաշնությունը, շարունակելով ընտրական գործընթացներում տեխնոլագիաների կիրառման կատարելագործումը, 2019-2020 թվականներին⁸⁹ Մոսկվա քաղաքում անցկացվող ընտրական գործընթացների շրջանակներում ներդրեց հեռավար էլեկտրոնային քվեարկության նոր համակարգ, որը կարելի է հաջողված փորձ համարել:

«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը քաղաքացիները կարող են միանալ ստորագրությունների հավաքման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու, էլեկտրոնային եղանակով կամ նոտարական կարգով տրված հայտարարությամբ: Տեղում ֆիզիկապես ստորագրելու եղանակն իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է բազմաթիվ խնդիրներ քաղաքացիների համար, օրինակ, ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրել կարելի է միայն օրենքով նախատեսված վայրերում, միայն աշխատանքային ժամերին և այլն: Իսկ էլեկտրոնային եղանակով գործընթացին միանալն ավելի հարմար է, քանի որ պետք չէ դրա համար գնալ որևէ տեղ, դա անել որոշակի ժամանակահատվածում: Իսկ հարցին, թե նման մոտեցումը կնպաստի և օգտակար կլինի ժողովրդավարական գործընթացների համար, կարելի է պատասխանել միայն էլեկտրոնային

⁸⁹ Федеральный закон «О проведении эксперимента по организации и осуществлению дистанционного электронного голосования на выборах депутатов Московской городской Думы седьмого созыва» от 29.05.2019 N 103-ФЗ; Федеральный закон «О проведении эксперимента по организации и осуществлению дистанционного электронного голосования в городе федерального значения Москве» от 23.05.2020 N 152-ФЗ

համակարգերի ավելի լայն կիրառության անցնելուց հետո:

Առանձնապես մեծ է տեխնոլոգիաների դերն էլեկտրոնային տեղեկատվության տարածման և հասանելիության ոլորտում: Նախկինում տեղեկատվությունն այդքան հասանելի չի եղել: Կարելի է ակնկալել, որ ինտերնետի և այլ էլեկտրոնային տեխնոլոգիաների շարունակական զարգացումը հանգեցնում է տեղեկատվության անընդհատ աճող հասանելիության, որը կարող է մեծ ազդեցություն ունենալ ժողովրդավարական գործընթացի վրա, քանի որ տեղեկատվության տարածման և որոնման հնարավորություններն ամեն օր ընդլայնվում են: Հետևապես, էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների մատուցման նոր ձևավորվող մեթոդները կարող են ընտրողներին և ընտրական գործընթացի մյուս մասնակիցներին առաջարկել տեղեկատվություն ստանալու ավելի հասանելի տարբերակները:

Ընտրությունների կառավարման մարմիններն ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար լայնորեն օգտվում են էլեկտրոնային ծառայությունների մատուցման հնարավորություններից, քանզի ընտրողների գրանցումը, թեկնածուների առաջադրումը, նվիրատվությունների և ծախսերի վերահսկումը, փորձագիտական խորհրդատվության տրամադրումը և ընտրական մարմինների կողմից մատուցվող այլ ծառայություններ արդեն իսկ մատուցվում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային ծառայությունների մատուցման պարագայում ծառայություն մատուցողը պարտադիր չէ գտնվի նույն քաղաքում, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է իր ծառայությունները մատուցել ինտերնետի, անլար և արբանյակային կապի կամ այլ տեխնոլոգիաների միջոցով:

Ամեն դեպքում, թե՛ այսօր, թե՛ հետագայում, երբ ընտրական գործարնթացներում ներդրվում են նոր տեխնոլոգիաներ կամ հին

տեխնոլոգիաները փոխարինվում են նորերով, կարևորագույն բաղադրիչը պետք է լինի հանրային վստահությունը: Վստահության բացակայությունը, որի հետ պետք է հաշվի նստել ամեն անգամ, երբ նոր տեխնոլոգիա է ներդրվում, այն կարևոր պատճառներից են, թե ինչու ընտրական մարմինները դժվարությամբ են հանգում տեխնոլոգիաների ներդրմանը կամ դրանց փոփոխմանը: Հիմնականում, եթե ոչ բոլոր դեպքերում, երբ ներդրվել են նորացված կամ նոր տեխնոլոգիաներ, շատ ժամանակ, ջանք և գումար է ծախսվել վստահություն հաստատելու համար: Մարդիկ շատ պարզ տեսնում և ավելի ու ավելի են հասկանում, որ տեխնոլոգիաները շատ արագ են զարգանում, ուստի թարմացումներից խուսափելը ու դրանց չօգտագործելը նույնպես կարող են առաջացնել վստահության խնդիրներ:

Բոլոր դեպքերում կարևոր է նշել, որ տեխնոլոգիան ինքնին վստահելի է, եթե այն հաճախակի թարմացվում է և ժամանակի ընթացքում այդ գործում ներդրվում են մարդկային և ֆինանսական համարժեք ռեսուրսներ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը մեծ ներդրումներ է կատարել ընտրողների նույնականացման սարքավորումների տեխնոլոգիայի մեջ, կատարելագործել է իր ռեսուրսները, օժանդակ գործառույթները և իրազեկման արշավներ է անցկացրել հասարակության համար, հետևապես կարելի է դիտարկել ընտրողների նույնականացման սարքավորումների հետագա բարելավման հնարավորությունների տարբերակը: Հիմնական առավելություններից մեկը կլինի այն, որ Հայաստանում ընտրողները ծանոթ են այդ սարքավորումներին, ունեն բավարար տեղեկատվություն դրանց աշխատանքի ու հնարավորությունների մասին: Հետևաբար, դրանց բարելավումը և ընդլայնումն ավելի հեշտ կլինի, քան լիովին նոր տեխնոլոգիա ներմուծելը:

Հարկ է նկատել, որ քվեարկության նոր էլեկտրոնային տեխնոլոգիաների ներդրումը չպետք է կատարվի առանց Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի և, անշուշտ, առանց շահագրգիռ կողմերի: Ընտրական գործընթացի բոլոր հնարավոր շահառուներին և ընտրական գործընթացում ներգրավված պատկան մարմիններին պետք է տրվի պատշաճ խորհրդատվություն տեխնոլոգիաների վերաբերյալ, ներկայացվի վերլուծություն, առաջարկվեն մշակման փուլում գտնվող լուծումները կամ պատրաստի լուծումները, և պետք է անպայման իրավակացվի տեխնոլոգիաների փորձարկում:

Տեխնոլոգիաների ներդրման կամ փոփոխման ժամանակահատվածը պետք է լինի բավարար դրանք լիարժեք գործարկելու համար՝ օգտագործելով աստիճանական կիրարկման մեթոդաբանությունը՝ հետագա փորձարկմամբ համեմատաբար փոքր տեղական ընտրություններում: Տեխնոլոգիաների ներդրման կամ փոփոխման ժամանակահատվածը պետք է լինի բավարար նաև նոր տեխնոլոգիայի կիրարկումը կարգավորող ցանկացած նոր իրավական դրույթների և հրահանգների թեստավորման համար:

Շատ կարևոր է, որ ապահովվի շահագրգիռ կողմերի և ընտրողների ներգրավվածությունը՝ հատկապես նոր տեխնոլոգիայի անցնելու ժամանակ: Հատկապես կարևոր է ապահովել, որ բոլոր շահագրգիռ կողմերը մասնակցեն գործընթացին, քանի որ այն ստեղծում է միջավայր, որում մարդիկ իրենց զգում են այդ գործընթացի մասնիկ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջնային խնդիրներից պետք է լինի լիակատար թափանցիկության ապահովումը՝ ուղղված նոր տեխնոլոգիայի նկատմամբ ընտրողի վստահությունը բարձրացնելուն, ընտրողները պետք է լիովին գիտակցեն այդ տեխնոլոգիայի բոլոր ուժեղ, թույլ և խոցելի կողմերը:

Պետք է ապահովել նաև գործընթացի տարբեր փուլերում տարբեր շահագրգիռ կողմերի միջև կանոնավոր փոխգործակցությունը, որին կարելի է հասնել գործող հարթակներն օգտագործելով և տեղեկատվությունը շարունակաբար թարմացնելով, որ շահագրգիռ կողմերը տեղեկացված լինեն գործընթացի առաջընթացի և կարգավի-

ճակի վերաբերյալ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է հնարավորություն ստեղծի բոլոր շահագրգիռ կողմերի համար մասնակցելու գործընթացին, և դրան հասնելու լավագույն եղանակներից մեկը նրանց առաջարկներ ներկայացնելու հնարավորություն տալն է, որոշումների կայացման մասնակցելը և այլն:

Եվ ամենակարևորը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է համոզվի, որ ընտրողները հասկանում են, թե ինչու է արվում այդ գործընթացը, ինչու են ներդրվում կամ փոփոխվում տեխնոլոգիաները:

Մենք կիսում ենք հեղինակների կարծիքն առ այն, որ «չնայած տեղեկատվական և հաղորդակցման նոր տեխնոլոգիաների ներդրման արտաքին դրական ազդեցություններին, «թվայնացման» ազդեցությունը հասարակական տեխնոլոգիաների բոլոր ոլորտներում միշտ չէ, որ միանշանակ է: «Թվայնացման» ինտենսիվ առաջընթացն ուղեկցվող հարակից բացասական հետևանքները կարող են հանգեցնել իրավունքների և ազատությունների ոտնահարման, քաղաքացիների միջև անհավասարության ուժեղացման, կառավարման և մարդկային գործունեության առանձին ոլորտների մենաշնորհման, հանրային գիտակցության մանիպուլյացիայի, արտաքին ճնշման, իսկ երբեմն էլ՝ ինքնավարության կամ ինքնիշխանության գործընթացներին միջամտության», և որ «տեխնոլոգիական փոփոխությունները, որոնք թվային տեղեկատվական և հաղորդակցական միջավայրերի զարգացմամբ ներթափանցել են մեր առօրյա ապրելակերպ, ստեղծում են քաղաքական, տնտեսական և սոցիալական զգալի ռիսկեր, որոնք հնարավոր չէ անտեսել և չնկատել»⁹⁰:

Ճշմարիտ է ասվում, որ «նոր տեխնոլոգիաների կիրառման հետ կապված խնդիրները հաճախ դուրս են գալիս սահմանված բարոյա-

⁹⁰ Выборы в мире: электронное голосование / И.Б. Борисов, А.Г. Головин, А.В. Игнатов; под общ. ред. И. Б. Борисова. — М.: Российский общественный институт избирательного права, 2020, с. 195.

կան և էթիկական նորմերից և պահանջում են դրանց վերանայում ոչ միայն հասարակական արժեքների փոփոխության տեսանկյունից, այլև այդ նոր հաղորդակցությունների գործընթացները կարգավորող օրենսդրության զարգացման տեսանկյունից»⁹¹:

Եվ, ի վերջո, կարելի է ակնկալել, որ այսօրվա հիմնախնդիրները մոտ ապագայում լուծումներ կստանան, և ինտերնետային քվեարկությունը կդառնա անվտանգ, ապահով և համատարած: Չի կարելի թերագնահատել համացանցի ներուժը՝ փոխելու ինչպես ընտրական գործընթացի, այնպես էլ ավելի լայն քաղաքական գործընթացների դինամիկան:

⁹¹ Նույն տեղում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ին (2005 թվականի նոյեմբերի 27-ի և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով)

2. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2016 թվականի մայիսի 25-ին

3. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք՝ ընդունված 1999 թվականի փետրվարի 5-ին

4. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ընդունված 2005 թվականի մայիսի 19-ին

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1693-Ն որոշում

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշում

7. «Ազգային Ժողովի ընտրություններին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների՝ էլեկտրոնային եղանակով քվեար-

կության կարգը և ժամկետները սահմանելու մասին» ԿԸՀ 17.06.2016թ. N 32-Ն որոշում

8. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2003 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի փետրվարի 19-ին կայացած ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-408 որոշում

9. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 27-Ա որոշում

10. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքների վերաբերյալ» թիվ 183-Ա որոշում

11. Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնադիրք Ցուցումներ և Բացատրական զեկույց 190/2002 CDL-AD (2002) 23, Ընդունված Վենետիկյան հանձնաժողովի կողմից 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002թ. հոկտեմբերի 18-19)

12. Report on Proportional Electoral Systems: the Allocation of Seats inside the Lists (open/closed lists) CDL-AD(2015)001-e

13. European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April 2016 (On the basis of comments by Mr Richard Barrett (Member, Ireland) Ms Paloma Biglino Campos (Substitute Member, Spain) Mr Evgeni Tanchev (Member, Bulgaria) Mr Kåre Vollan

(Expert, Norway) Mr Vasil Vashchanka (Expert, OSCE/ODIHR) // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016 Strasbourg, Warsaw, 13 June 2016, CDL-AD(2016)019

14. Joint Opinion on the draft Law amending the electoral legislation of Moldova adopted by the Council for Democratic Elections at its 47th meeting (Venice, 20 March 2014) and by the Venice Commission at its 98th plenary session (Venice, 21-22 March 2014) CDL-AD(2014)003-e

15. Republic of Moldova - Joint opinion on the draft laws on amending and completing certain legislative acts (electoral system for the election of the Parliament), adopted by the Council for Democratic Elections at its 59th meeting (Venice, 15 June 2017) and by the Venice Commission at its 111th Plenary Session (Venice, 16-17 June 2017) CDL-AD(2017)012-e

ԳՐՔԵՐ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. **Այվազյան Ն.Ա., Օհանյան Մ.Մ.** Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Մենագրություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, 208 էջ

2. Ընտրական համակարգի ազդեցությունը ժողովրդաիշխանության իրացման գործում / **Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա., Միսոնյան Տ.Վ.** - Եր.: «Հայրապետ» հրատ., 2022, 176 էջ

3. Երիտասարդության տեղը և դերը հասարակության քաղաքական կյանքում /Հեղինակային խումբ: – Եր.: Հայրապետ հրատ., 2019, 240 էջ

4. **Թովմասյան Հ.Վ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2000

5. **Թորոպյան Ս.Լ.** Ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասն. իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012.

6. **Հակոբյան Լ., Սմբատյան Ա.** Ընտրական մարմինները Հայաստանի Հանրապետությունում. Որոշ տեսական և գործնական հիմնահարցեր // «Դատական իշխանություն», ապրիլ-հունիս 2022 4-6 (274-276), էջեր 21-31

7. **Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ.** Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում / Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան.– Եր.: «Հայրապետ» հրատ., 2022, 272 էջ

8. **Հակոբյան Լ., Վարազյան Լ., Սաստրյան Ա.** «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը.–Եր.: Հայրապետ հրատ., 2021, 304 էջ

9. **Ղամբարյան Ա.** Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները / Ա. Ղամբարյան. - Եր.: Տիգրան Մեծ, 2022, 80 էջ

10. **Авакьян С.А., Баженова О.И., Кененова И.П., Колюшин Е.И., Пешин Н.Л., Старостина И.А., Тимофеев Н.С., Троицкая А.А., Швердяев С.Н.** Право избирать и быть избранным в российских политических реалиях: основные конституционно-правовые проблемы. Учебно-методический комплекс. / Рук. авт. кол. и отв. ред. проф. **Авакьян С.А.** – М.: Юстицинформ, 2015, 680с.

11. **Аватков В.А., Автономов А.С., Оленченко В.А.** и др. Современные избирательные системы. Выпуск 17. Португалия, Турция, Эстония Учебное пособие. - М.: РЦОИТ, 2022, 400с.

12. **Базина О.О., Орлов А.Г., Демчук Д.С.** и др. Современные избирательные системы. Выпуск 13: Китай, Парагвай, Швейцария Учебное пособие. - М.: РЦОИТ, 2018, 444с.

13. **Белов С.А.** Избирательная система как правовой институт // Дисс. на соискание ученой степени канд.юр.наук по специальности 12.00.02, Санкт-Петербург, 2003, 173с.

14. **Биктагиров Р.Т.** Субъект избирательного права Российской Федерации: конституционно-правовое исследование: автореферат дис. ... доктора юридических наук : 12.00.02 - Москва, 2010, 55с.

15. **Бьюкенен Дж.М.** Политика без романтики: краткое изложение позитивной теории общественного выбора и ее нормативных условий // Вехи экономической мысли. Экономика благосостояния и общественный выбор. Т.4/Под ред. А.П. Заостровцева — СПб.: Экономическая школа, 2004, 568с.

16. **Водяницкая Е.А., Гвоздев П.С., Ракитская И.А., Орлов А.Г.** Современные избирательные системы. Вып. 6: Австрия, Ирландия, Норвегия, Чили М.: РЦОИТ, 2011, 512с.

17. Выборы в мире: избирательные системы / **И.Б. Борисов, А.Г. Головин, А.В. Игнатов**; под общ. ред. И. Б. Борисова. — СПб.: ИВЭСЭП, 2015, 200с.

18. **Глотов С.А., Какителашвили М.М., Фомиченко М.П.** Избирательное право и избирательный процесс Учебное пособие / Под ред. д.ю.н. проф. С.А. Глотова. - М.: Международный юридический институт, 2013, 320с.

19. **Елистратова В.С.** Избирательная система России: конституционно-правовые основы и политическая практика // Дисс. на соискание ученой степени канд.юр.наук по специальности 12.00.02, Москва, 2008, 175с.

20. **Ефимова Л.М., Ракитская И.А., Орлов А.Г., Половченко К.А.** Современные избирательные системы. Выпуск 9: Индонезия, Словакия, Филиппины, Хорватия М.: РЦОИТ, 2014, 512с.

21. Зарубежное избирательное право: Учебное пособие. // Научный редактор: доктор юридических наук **В.В. Маклаков**, научные консультанты: д.ю.н **В.И. Лысенко**, д.ю.н **А.И. Ковлер**, М., Издательство НОРМА, 2003, 288с.

22. Избирательное право: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальности 030501 «Юриспруденция» / [А.С. Прудников и др.]; под ред. **К.К. Гасанова, А.С. Прудникова, В.А. Виноградова**. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2013, 655с.

23. Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Учебник для вузов. Отв. редактор — доктор юридических наук **А. В. Иванченко**. — М.: Издательство НОРМА, 1999, 856с.

24. Избирательное право и избирательный процесс в Российской Федерации : учеб. пособие / **М.С. Савченко, Т.Ю. Дьякова [и др.]** ; под общ. ред. М. С. Савченко. – Краснодар : КубГАУ, 2015, 159с.

25. Институт выборов в истории зарубежных стран. XX век: Материалы к библиографическому указателю/ Авт. проекта и сост.: **Ю.А. Веденеев, В.В. Луговой, П.Г. Крученков**/ Центр. избират. комис. Российской Федерации, Рос. центр обуч. Избират. технологиям при Центр. избират. комис. Российской Федерации, Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ». - Калуга, 2003, 424с.

26. История Древней Греции / **Ю.В. Андреев, Г.А. Кошеленко, В.И. Кузищин** [и др.]; под ред. В.И. Кузищина. 3-е изд., перераб. и доп. М.: Высшая школа, 2001, 399с.

27. История политических и правовых учений: Учебник для И 90 вузов / Под общ. ред. акад. РАН, д. ю. н., проф. **В.С. Нерсисянца**. — 4-е изд., перераб. и доп. — М.: Норма, 2004, 944с.

28. **Князев С.Д.** Очерки теории российского избирательного права: Монография. -Владивосток, 1999, 414с.

29. **Кузнецова Т.О., Ефимова Л.М., Орлов А.Г., Сапронова М.А.** Современные избирательные системы. Вып. 10: Италия, Малайзия, Перу, Сирия Науч. ред. Иванченко А.В., Лафитский В.И. — М.: РЦОИТ, 2015, 472с.

30. **Лафитский В.И., Ефимова Л.М., Орлов А.Г.** Современные избирательные системы. Выпуск 14: Узбекистан, Таиланд, Куба Учебное пособие. - М.: РЦОИТ, 2019, 440с.

31. **Лафитский Д.В., Касаткина Н.М., Орлов А.Г., Трещетенкова Н.Ю.** Современные избирательные системы. Вып. 1: Великобритания, Канада, Мексика, Польша М.: РЦОИТ: Норма, 2006, 496с.

32. **Лафитский В.И., Крысенкова Н.Б.** Современные избирательные системы. Выпуск 12: Мальта, Новая Зеландия Учебное пособие. - М.: РЦОИТ, 2017, 304с.

33. **Лысенко В.** Парламентские избирательные системы в государствах – участниках ОБСЕ (<https://rfsv.ru/law/obuchenie/parlamentskie-izbiratelnye-sistemy-v-gosudarstvakh-uchastnikakh-obse>)

34. **Любарев А.Е.** Избирательные системы: российский и мировой опыт/ РОО «Либеральная миссия»; Новое литературное обозрение, М., 2016, 632с.

35. **Маклаков В.В.** Конституционное право зарубежных стран. Общая часть: [учеб. для студентов юрид. вузов и фак.] / В.В. Маклаков – М.: Волтерс Клувер, 2006, 896с.

36. **Морозова О.С.** Использование теории социального выбора в сфере разработки избирательных систем // *Фундаментальные исследования*. 2014, № 12-8, с. 1799-1803.

37. **Мурадян М.О.** Конституционно-правовые основы избирательной системы Республики Армения // Автореф. диссертации на соискание ученой степени канд. юр. наук по специальности 12.00.02 - конституционное право, муниципальное право, М., 2008, 20с.

38. Орлов А.Г., Лафитский В.И., Ракитская И.А., Кузнецова Т.О. Современные избирательные системы. Вып. 3: Испания, США, Финляндия, Япония М.: РЦОИТ: Типография «Новости», 2009, 448с.

39. Орлов А.Г., Лейбо Ю.И., Ракитская И.А. Современные избирательные системы. Вып. 2: Аргентина, Германия, Швеция М.: РЦОИТ: Норма, 2007, 320с.

40. Орлов А.Г., Мещерякова М.А., Павлов С.Я., Кузнецова Т.О. Современные избирательные системы. Вып.8: Бразилия, Франция, Чехия, Южная Корея М.: РЦОИТ, 2013, 488с.

41. Очерки по истории выборов и избирательного права: Учебное пособие/ Авт. проекта: Ю.А. Веденеев и др.; Авт . коллектив: **Ю.А. Веденеев, И.В. Зайцев, В.Е. Кораблин, В.В. Луговой, В.В. Тылкин** / Под ред. Ю.А. Веденева и Н.А. Богодаровой; Центр. избират. Комис. Российской Федерации, Рос. Центр обучения избират. технологиям при Центр. избират. комис . Российской Федерации, Калуга: Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ», 2002, 692с.

42. Ракитская И.А., Орлов А.Г., Ефимова Л.М. Современные избирательные системы. Выпуск 11. Нидерланды, Никарагуа, Сингапур Учебное пособие. - М.: РЦОИТ, 2016, 400с.

43. Сапронова М.А., Ракитская И.А., Орлов А.Г., Крысенкова Н.Б. Современные избирательные системы. Вып.7: Египет, Исландия, Колумбия, Пакистан М.: РЦОИТ, 2012, 464с.

44. основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. – Кишинев: Cudrag, Изд. при поддержке ЕС и МИД Финляндии, 2016 (F.E.-P. «Tipografia Centrală»), 559с.

45. Современные избирательные системы. Вып. 4: Австралия, Венесуэла, Дания, Сербия / [Т.И. Чурсина, А.Г. Орлов, И.А. Ракитская, К.А. Половченко; науч. ред. А.В. Иванченко, В.И. Лафитский]. – М.: РЦОИТ: Ин-октаво, 2009, 480с.


46. Современные избирательные системы. Вып. 15: Республика Беларусь, Боливия, Восточный Тимор / **В.И. Лафитский, А.А. Автономов, Ю.В. Лафитская**; Науч. ред. В.И. Лафитский, В.И. Лысенко. — М.: РЦОИТ, 2020, 580с.

47. **Филин Н.А., Кокликов В.О., Ходунов А.С.** и др. Современные избирательные системы. Выпуск 16. Иран, Латвия, Литва Науч. ред. В.И. Лафитский. — М.: РЦОИТ, 2021, 552с.

48. **Шлыкова Н.Б., Сапронова М.А., Орлов А.Г., Черепанова Е.В.** Современные избирательные системы. Вып. 5: Индия, Ирак, Уругвай, ЮАР М.: РЦОИТ, 2010, 496с.

Չափսը՝ 60x84¹/₁₆:
Ծավալը՝ 13 տպ. մամուլ:
Հանձնվել է տպագրության 27.12.2023:
Քանակը՝ 100 օրինակ:

ISBN 978-9939-887-42-5



9 789939 887425